

ISSN 1829-4197

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ РА
RA MINISTRY OF EDUCATION AND SCIENCE

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ИЗВЕСТИЯ

НАЦИОНАЛЬНОГО УНИВЕРСИТЕТА
АРХИТЕКТУРЫ И СТРОИТЕЛЬСТВА АРМЕНИИ

BULLETIN

OF NATIONAL UNIVERSITY
OF ARCHITECTURE AND CONSTRUCTION OF ARMENIA

2(46) / 2015



ԵՐԵՎԱՆ • ЕРЕВАН • YEREVAN
2015

Օ՝ծի ՝ծ՝äօի ձոԱՄ՝Ս օի ԲԱՄ՝ծ՝ծձոԱՄ՝Ս ծ՝Ս՝էի ՝ՍԷ
՝¼Պ՝ՍԷՄ ծ՝ծ՝Èէ՝ծ՝ՍԷ

ի օՕօի ՝ՊԷՃԱ

Ծ՝ծ՝èàի Բ՝ծ՝ ՝ծի ձոժ ¼ èàòէ՝էի ՝ՍԷ ՝ԲՍձոԱՄ՝Ս օի ՍԷԷՍի ձԷ
"ԲԱՄ՝ծ՝ծձոԱՄձոՍ օի Օ՝ծի ՝ծ՝äօի ձոԱՄձոՍ" èօօծ՝իՒի օՕօի ՝ի ՝ի ՝Ս
ՊԷի ՝ի օԷՍԷի ՝ի ՝Ս ä՝ծ՝ օծ՝ի ՝Սձոժ (ISSN 0233-8440)

ИЗВЕСТИЯ

НАЦИОНАЛЬНОГО УНИВЕРСИТЕТА АРХИТЕКТУРЫ И СТРОИТЕЛЬСТВА АРМЕНИИ
РЕФЕРИРУЮТСЯ В РЕФЕРАТИВНОМ ИНФОРМАЦИОННОМ НАУЧНО-ТЕХНИЧЕСКОМ
ЖУРНАЛЕ "СТРОИТЕЛЬСТВО И АРХИТЕКТУРА" (ISSN 0233-8440)
ВНИИТПИ РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИИ

BULLETIN

OF NATIONAL UNIVERSITY OF ARCHITECTURE AND CONSTRUCTION OF ARMENIA
IS ABSTRACTED IN THE INFORMATIONAL SCIENCE AND TECHNOLOGY ABSTRACTS
JOURNAL OF CONSTRUCTION AND ARCHITECTURE (ISSN 0233-8440) OF VNIINTPI OF
RUSSIAN FEDERATION



Օ՝նի ՝ն՝ ä»ի ձոԱՄ՝Ս օի ԲՍՍ՝ն՝նձոԱՄ՝Ս ՝ՍՍ՝էի ՝ՍՍ՝¼ ՝ՍՍՍ՝Ս՝էէն՝ՍՍ՝ի ՝Օ»ի՝. ՇնԱ, ԾԾ՝ ձԾ-Շ
ձնձՍ՝Սµ, ԱՄ՝. նի ՝ի ՝է ՝ի ՝Ս՝ Է äèäòԱձոՍՍ՝նՇ ՆՇՍՍ՝ի ՝ՍՍ՝ն ՝ՍձոՍՍ՝նՇ ՝ ՝նձոԱՍ՝նՇ Նն՝ի ՝ն՝ ՝ՍՍ՝ի ՝ՍՍ՝
Ն՝Ս՝ն ԱՍ՝ձոՍ՝էՇ ä՝նµ»ն՝ի ՝Ս՝. Շի ՝ի ՝ՍՍ՝ն՝ի ՝ն՝ ՝ձոԱձոՍՍ՝նՇ օձո՝ ՝ձոՍ՝ ՝ա՝ի ձն՝ի ՝Ս՝
Ա՝ի ՝Ս՝ ՝ձո՝ի ՝Ս՝ի ՝Ս՝ Է äèäòԱձոՍՍ՝նՇ Ն՝Ս՝ն:

Известия Национального университета архитектуры и строительства Армении по решению ВАК РА включены в перечень периодических научных изданий, принятых для публикаций основных результатов и положений докторских и кандидатских диссертаций.

The Bulletin of National University of Architecture and Construction of Armenia, by the decision SCC of RA, has been included to the list of periodic scientific publications accepted for publishing the main results and the provisions of doctoral and candidate dissertations.

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ РА
RA MINISTRY OF EDUCATION AND SCIENCE

ՀԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏԵԼԵԿՍԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ НАЦИОНАЛЬНОГО УНИВЕРСИТЕТА АРХИТЕКТУРЫ И СТРОИТЕЛЬСТВА АРМЕНИИ
BULLETIN OF NATIONAL UNIVERSITY OF ARCHITECTURE AND CONSTRUCTION OF ARMENIA

ԽՍԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱ

Գալստյան Գագիկ (գլխավոր խմբագիր, տ.գ.դ., ՀՀ), Ստակյան Միհրան (գլխավոր խմբագրի տեղակալ, տ.գ.դ., ՀՀ), Լևոնյան Լևոն (պատասխանատու քարտուղար, տ.գ.թ., ՀՀ), Աբդոլա Արդեշիր (տ.գ.դ., ԻԻ), Ազոյան Ռոբերտ (տ.գ.դ., ՀՀ), Ասիրյան Ալբերտ (տ.գ.դ., ՀՀ), Բարխուդարյան Արկադի (տ.գ.դ., ՀՀ), Պատվո-Դել-Բիանկո (արվեստ. դ., Իտալիա), Բուրնուսույան Սլավիկ (տ.գ.թ., ՀՀ), Գյուրջյան Արա (տնտ.դ., ՀՀ), Գրիգորյան Վարդգես (տ.գ.դ., ՀՀ), Դիբան Գեվորգ (ճ.դ., ՍԱՀ), Զուբիտաշվիլի Դավիթ (տ.գ.դ., Վրաստան), Լիսենկո Վադիմ (տ.գ.դ., Ուկրաինա), Խաչիյան Էդուարդ (տ.գ.դ., ՀՀ), Կարապետյան Արմեն (Ֆ.գ.դ., ՀՀ), Կարապետյան Բորիս (տ.գ.դ., ՀՀ), Կոլեսնիկ Վիտալի (տ.գ.թ., ՌԴ), Հովսեփյան Աշոտ (տ.գ.թ., ՀՀ), Մարկոսյան Աշոտ (տնտ.դ., ՀՀ), Մարկոսյան Միհր (տ.գ.դ., ՀՀ), Մելիքյան Զոհրաբ (տ.գ.դ., ՀՀ), Մինասյան Ռոբերտ (երկր.գ.դ., ՀՀ), Մխիթարյան Սուրեն (Ֆ.գ.դ., ՀՀ), Մկրտչյան Սերգեյ (կ.գ.դ., ՀՀ), Մնացականյան Բորիս (աշխ.գ.դ., ՀՀ), Մուհամադ Սաիդ (ճ.թ., ԻԻ), Շահինյան Սամվել (ճ.թ., ՀՀ), Չիլինգարյան Նիկոլայ (տ.գ.դ., ՀՀ), Պետրոսյան Հովսեփ (տ.գ.դ., ՀՀ), Պողոսյան Մանվել (տ.գ.դ., ՀՀ), Ջավադյան Արտաշես (բ.գ.թ., ՀՀ), Ռազիդյան Գարրի (ճ.թ., ՀՀ), Ռաջչիկ Յարոսլավ (տ.գ.դ., ԼՀ), Սարգսյան Վրույր (տ.գ.դ., ՀՀ), Սաֆարյան Յուրի (ճ.դ., ՀՀ), Ստեփանով Ալեքսանդր (ճ.թ., ՌԴ), Վազին Վլադիմիր (տնտ.դ., ՌԴ), Վեկալեր Ալբերտ (տ.գ.թ., ՌԴ), Տելիչենկո Վալերի (տ.գ.դ., ՌԴ), Օհանյան Սիրեկան (ճ.թ., ՀՀ), Ֆան Խուան (տ.գ.թ., Շվեդիա)

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

Галстян Гагик (главный редактор, д.т.н., РА), Стакян Мигран (зам. главного редактора, д.т.н., РА), Левонян Левон (ответственный секретарь, к.т.н., РА), Абдола Ардешир (д.т.н., ИРИ), Азоян Роберт (д.т.н., РА), Асирян Альберт (д.т.н., РА), Бархударян Аркадий (д.т.н., РА), Пауло-Дель-Бианко (дискусств., Италия), Бурнусузян Славик (к.т.н., РА), Гюрджян Ара (д.экон. н., РА), Григорян Вардгес (д.т.н., РА), Джавадян Арташес (к.мед.н., РА), Дибан Геворг (д.архитек., САР), Зубиашвили Давид (д.т.н., Грузия), Лысенко Вадим (д.т.н., РУ), Хачиян Эдуард (д.т.н., РА), Карапетян Армен (д.ф.-м.н., РА), Карапетян Борис (д.т.н., РА), Колесник Виталий (к.т.н., РФ), Овсепян Ашот (к.т.н., РА), Маркосян Ашот (д.эконом. н., РА), Маркосян Мгер (д.т.н., РА), Меликян Зограб (д.т.н., РА), Минасян Роберт (д.геол.н., РА), Мхитарян Сурен (д.ф.-м.н., РА), Мкртчян Сергей (д.б.н., РА), Мнацаканян Борис (д.геогр.н., РА), Мухаммад Саид (к.архит., ИРИ), Шагинян Самвел (к.архит., РА), Чилингарян Николай (д.т.н., РА), Петросян Овсеп (д.т.н., РА), Погосян Манвел (д.т.н., РА), Рашидян Гарри (д.архит., РА), Райчик Ярослав (д.т.н., Польша), Саркисян Вруйр (д.т.н., РА), Сафарян Юрий (д.архит., РА), Степанов Александр (к.архит., РФ), Вагин Владимир (д.экон. н., РФ), Векслер Альберт (к.т.н., РФ), Теличенко Валерий (д.т.н., РФ), Оганян Сирекан (к.архит., РА), Фан Хуан (к.т.н., Швеция)

EDITORIAL BOARD

Galstyan Gagik (Editor-in-Chief, Doctor of Technical Sciences, Engineering, RA), Stakyan Mihran (Deputy Editor-in-Chief, Doctor of Technical Sciences, Engineering, RA), Levonyan Levon (Executive Secretary, Doctor of Philosophy (Ph.D) in Engineering, RA), Abdola Ardeshir (Doctor of Technical Sciences, Engineering, IRI), Azoyan Robert (Doctor of Technical Sciences, Engineering, RA), Asiryan Albert (Doctor of Technical Sciences, Engineering, RA), Barkhudaryan Arkadi (Doctor of Technical Sciences, Engineering, RA), Del-Bianco Paulo (Doctor of Sciences, Arts, Italy), Burnusuzyan Slavik (Doctor of Philosophy (Ph.D) in Engineering, RA), Chilingaryan Nikolay (Doctor of Technical Sciences, Engineering, RA), Diban Gevorg (Doctor of Sciences, Architecture, ARS), Grigoryan Vardges (Doctor of Sciences, Engineering, RA), Gyurjyan Ara (Doctor of Sciences, Economics, RA), Hovsepyan Ashot (Doctor of Engineering, RA), Huaan Fan (Doctor of Engineering, Sweden), Javadyan Artashes (Doctor of medicine, RA), Karapetyan Armen (Doctor of Sciences, Physics and Mathematics, RA), Karapetyan Boris (Doctor of Sciences, Engineering, RA), Khachiyan Eduard (Doctor of Sciences Engineering, RA), Kolesnik Vitali (Doctor of Engineering, RF), Lisenko Vadim (Doctor of Sciences, Engineering, the Ukraine), Markosyan Ashot (Doctor of Sciences, Economics, RA), Markosyan Mher (Doctor of Sciences, Engineering, RA), Melikyan Zohrab (Doctor of Sciences, Engineering, RA), Minasyan Robert (Doctor of Sciences, Geology, RA), Mkhitarayan Suren (Doctor of Sciences, Physics and Mathematics, RA), Mkrtychyan Sergey (Doctor of Sciences, Biology, RA), Mnatsakanyan Boris (Doctor of Sciences, Geography, RA), Muhammad Said (Doctor of Architecture, IRI), Petrosyan Hovsep (Doctor of Sciences, Engineering, RA), Poghosyan Manvel (Doctor of Sciences, Engineering, RA), Rashidyan Garry (Doctor of Sciences, Architecture, RA), Rajczyk Jaroslaw (Doctor of Sciences, Engineering, Poland), Safaryan Yuri (Doctor of Sciences, Architecture, RA), Sargsyan Vruyr (Doctor of Sciences, Engineering, RA), Shahinyan Samvel (Doctor of Architecture, RA), Stepanov Alexander (Doctor of Architecture, RF), Telichenko Valery (Doctor of Sciences, Engineering, RF), Vagin Vladimir (Doctor of Sciences, Economics, RF), Veksler Albert (Doctor of engineering, RF), Ohanyan Sirekan (Doctor of architecture, RA), Zubitashvili Davit (Doctor of Sciences, Engineering, Georgia)

Տեղեկագիրը հրատարակվում է ՀՀՀՀՍՀ գիտական խորհրդի որոշմամբ:

Հիմնադրվել է 2006 թ.: Լույս է տեսնում տարին 6 անգամ:

Известия издаются по решению Ученого Совета НУАСА. Основаны в 2006г. Выходят 6 раз в год.

Bulletin is published by resolution of Academic Council of NUACA. Established in 2006. Published 6 times a year.

Համակարգչային ձևավորող՝ Ա.Ա. Ալեքսանյան

Գրանցման վկայական՝ 03Ա 059500 տպարանակ՝ 101 օրինակ:
Պատվերի թիվ՝ 375: Ստորագրված է տպագրության 04.05.2015թ.
Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 16.

ՀԱՍՑԵՆ՝ Երևան, Տերյան 105
АДРЕС: Ереван, ул. Теряна 105
ADDRESS: 105 Teryan street, Yerevan
☎ (+37410) 54 77 62
URL: www.yasuac.am



- © Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, 2014
- © Национальный университет архитектуры и строительства Армении, 2014
- © National University of Architecture and Construction of Armenia, 2014

ՀՏԴ 625.814, 625.863, 625.861

ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՎԱԾՔԻ C6 ԽԱՌՆՈՒՐԴԻՑ ՇԵՐՏԻ ԿՈՇՏՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԿՐԱՔԱՐԱՑԻՆ ՓՈՇՈՒ ԿԻՐԱՌՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Հ.Հ. Գյուլգադյան, Վ.Հ. Տեր-Մինոյան, Գ.Կ. Ոսկանյան
Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան

Առանցքային բառեր. կրաքար, ճանապարհային պատվածք, խառնուրդ, առաձգականության մոդուլ, փորձարկում

Ներկայացված է ճանապարհային պատվածքի C6 խառնուրդից շերտի կոշտության վրա խառնուրդում ավելացված օպտիմալ քանակությամբ կրաքարային փոշու ազդեցության գնահատականը: Նշված ազդեցության քանակական գնահատման համար կառուցվել են փորձնական ճանապարհահատվածներ առանց հավելյալ C6 խառնուրդից և նույնը կրաքարային փոշու օպտիմալ քանակության ներմուծմամբ: Կատարվել են փորձնական ճանապարհահատվածների կոշտությունների դաշտային փորձարկումներ KUAB FWD սարքավորման օգնությամբ: Փորձարկման տվյալների հիման վրա պարզվել է, որ կրաքարային փոշու ներմուծման արդյունքում ճանապարհային պատվածքի ստուգվող շերտի ծռման կոշտությունը ավելացել է մոտ 1,6 անգամ:

Ճանապարհաշինությունում հաճախ որպես պատվածքի կառուցվածքային մասեր կիրառվում են խճա-կոպճա-ավազային խառնուրդներից շերտեր [1], որոնք ծառայում են որպես հիմքեր և ինչպես նաև ծածկեր՝ շահագործվելով համեմատականորեն ցածր ինտենսիվության պայմաններում [2]:

Կառուցվող հիմքերում և ծածկերում անհրաժեշտ առաձգական կոշտության հասնելու համար խստորեն պահանջվում է պահպանել նորմերով և կանոններով սահմանված տեխնոլոգիական հաջորդականությունները: Կան մի քանի գործոններ, որոնք անմիջական ազդեցություն են ունենում շերտի առաձգական կոշտության վրա, որից կախված է շահագործվող ճանապարհային պատվածքի երկարակեցությունը: Հիմնատակի գրունտի տեսակը, խառնուրդի կազմի ճիշտ ընտրումը, շինարարության փուլում օպտիմալ խոնավության պայմաններում համապատասխան ձևով խտացնելը և խառնուրդներում լրանյութերի կամ որևէ կապակցողի օգտագործումն այն հիմնական գործոններն են, որոնք անմիջական ազդեցություն են ունենում ճանապարհի հետագա շահագործման վրա: Մասնավորապես, կոնստրուկտիվ շերտերի միաձուլությունն ապահովելու համար կիրառվում են լրանյութեր կամ կապակցանյութեր, որոնք նպաստում են շերտի նյութի մասնիկների միջև կապերի առաջացմանը և բարձրացնում են շերտի ամրության ցուցանիշները [3]:

Մեր կողմից նախկինում կատարվել են ուսումնասիրություններ, որոնք նպատակ են ունեցել մշակել ՀՀ Արարատի մարզում առկա կրաքարի հանքավայրերի շահագործման արդյունքում առաջացող կրաքարային փոշին խճա-կոպճա-ավազային խառնուրդներում որպես հավելյալ կիրառելու հնարավոր տարբերակ: Կազմվել են օպտիմալ հատիկային կազմով C2, C6 և C7 խառնուրդներ՝ համապատասխանաբար, ջարդված բազալտե և ջարդված կոպճային ավազներով, որոնց որպես կապակցանյութ ավելացվել է կրաքարային փոշի, որի հատիկային կազմը բերված է աղ. 1-ում [4]:

Կատարված ուսումնասիրությունները ուղեկցվել են լաբորատոր փորձարկումներով, որոնց արդյունքում ստացված տվյալների հիման վրա սահմանվել են C2, C6 և C7 օպտիմալ հատիկային կազմով խճա-կոպճա-ավազային խառնուրդներում կրաքարային փոշու խառնման օպտիմալ քանակությունները [4]:

Կատարված լաբորատոր ուսումնասիրությունների արդյունքում հնարավոր է եղել գնահատել փորձանմուշների սեղմման ամրության սահմանները: Լինելով կիրառված տարբերակների համեմատության համար հարմար ցուցանիշ սեղմման ամրության սահմանը ոչ լրիվ կերպով է արտացոլում պատվածքի շերտերի

իրական աշխատանքը, մասնավորապես, այդ շերտերի կոշտությունն արտաքին բեռնվածքին դիմագրավելու տեսանկյունից:


Աղյուսակ 1

Կրաքարային փոշու հատիկային կազմը

Հատիկաչափական կազմն ըստ	Մաղերի անցքերի չափերը, մմ							
	10	5	2,5	1,25	0,63	0,315	0,160	0,071
Մասնակի մնացորդի, գ	0	40	30	110	180	190	190	260
Մասնակի մնացորդի, %	0	4	3	11	18	19	19	26
Լրիվ մնացորդի, %	0	4	7	18	36	55	74	100
Լրիվ անցումի, %	100	96	93	82	64	45	26	0

Նշված հանգամանքից ելնելով՝ որոշում ընդունվեց իրականացնել լրացուցիչ դաշտային փորձարկումներ ճանապարհային պատվածքի առանձին շերտի ծռման կոշտության վրա կրաքարային փոշու ներմուծման աստիճանի գնահատման համար: Այդ նպատակով կառուցվել է h=20 սմ հաստությամբ միաշերտ փորձնական ճանապարհահատված 5 մ լայնությամբ և 120 մ երկարությամբ: Կառուցված ճանապարհահատվածի առաջին 60 մ երկարությամբ տեղամասում կիրառվել է կոպճային ավազով C6 խառնուրդ, իսկ մյուս 60 մ երկարությամբ տեղամասում՝ նոր խառնուրդ, որը բաղկացած էր նույն C6 խառնուրդից և դրան 20...25% օպտիմալ քանակությամբ ավելացված կրաքարային փոշուց: Նախապես ուսումնասիրված երեք խառնուրդներից դաշտային փորձարկման համար ընտրվել է միայն C6-ը, քանի որ այն ներկայումս ՀՀ ճանապարհաշինությունում ամենահաճախ կիրառվող խառնուրդն է [3,4]:

Ներկայացնենք փորձնական ճանապարհահատվածի կառուցման տեխնոլոգիան: Նախ, շինարարական կազմակերպությունից ընտրվել են քարային նյութերի (խիճ 5...10 մմ, 10...20 մմ) և ավազի (կոպճային ջարդված ավազ 0...5 մմ) փորձանմուշներ, որից հետո լաբորատոր պայմաններում ստանալով դրանց հատիկային կազմերը՝ նախագծվել է C6 օպտիմալ հատիկային կազմով խառնուրդ՝ օգտվելով ГОСТ 25607-2009 [1] ստանդարտով սահմանված տեխնիկական պահանջներից: Նկ. 1-ում պատկերված գրաֆիկը ցույց է տալիս C6



Նկ. 1. C6 խառնուրդի կազմն ըստ մաղերի լրիվ անցումների

խառնուրդի հատիկային կազմը՝ ըստ մաղերի լրիվ անցումների, և այն տիրույթը, որը սահմանում է ГОСТ 25607-2009 ստանդարտը C6 խառնուրդների համար:

Խառնուրդի պատրաստման համար օգտագործվել է խառնիչ սարքավորում, որը բաղկացած է չորս բունկերներից, նյութերի փոխադրման էլևատորից և ջրով խոնավացման ցնցուղից (նկ. 2):




Նկ. 2. Խառնիչ սարքավորման տեսքը

Խառնիչ սարքավորման աշխատանքային սխեման հետևյալն է. ավտոբեռնիչի օգնությամբ 5...10 մ/և 10...20 մ/խիճը, ավազը և կրաքարային փոշին լցվել են համապատասխան բունկերների մեջ: Մնիչների փակադակները կարգավորվել են ըստ լաբորատոր պայմաններում ստացված նյութերի անհրաժեշտ տոկոսավորման: Խառնուրդ ստանալու համար միաժամանակ միացվել են էլևատորները, այնուհետև սնիչները, որից հետո նյութերը լցվելով էլևատորների վրա՝ հաջորդաբար տեղափոխվել են առաջ խառնվելով տեղափոխման ընթացքում, խոնավացվել են, լցվել ավտոինքնաթափի մեջ և փոխադրվել պահանջվող վայրը:

Նկարագրված սխեմայով նախ պատրաստվել է C6 խառնուրդ՝ առանց կրաքարային փոշու կիրառման, տեղափոխվել և տեղադրվել է փորձնական ճանապարհահատվածի առաջին 60 մ երկարությամբ հատվածում: Խառնուրդի փռումը և պրոֆիլավորումը կատարվել է ավտոգրեյդերի օգնությամբ, որից հետո ջրցան մեքենայի միջոցով փռված նյութը կրկին խոնավացվել է: Խտացումը կատարվել է երկու գլորներով օգնությամբ՝ նախ հարթ գրդնակավոր տիպի թեթև, հետո պլնմո տիպի ծանր: Երկրորդ 60 մ հատվածը կառուցվել է նույն տեխնոլոգիայով միայն այն տարբերությամբ, որ միաժամանակ աշխատել են արդեն չորս բունկերները՝ նաև կրաքարային փոշու խառնման համար: Կառուցված շերտերը խտացնելուց հետո փորձնական ճանապարհահատվածը տևական ժամանակ շահագործվել է երթևեկության պայմաններում:

Արդեն պատրաստի շերտերում առաձգական կոշտության գնահատման համար կիրառվել է առաձգականության մոդուլի չափման դինամիկական եղանակը [5]: Չափումները կատարվել են երեք փուլերով: Նախ չափվել է հիմնատակի գրունտի մակերևույթին համարժեք առաձգականության մոդուլը, այնուհետև հաջորդաբար առաջին 60 մ հատվածում C6 խառնուրդից շերտին երկրորդ 60 մ հատվածում կրաքարային փոշով ամրացված C6 խառնուրդից շերտի համարժեք առաձգականության մոդուլները՝ ճանապարհահատվածի ձախակողմյան և աջակողմյան մասերում: Դինամիկական մեթոդով չափումներ կատարելու համար օգտագործվել է KUAB FWD մակնիշի ձկվացքաչափ [6]:

Ներկայացնենք KUAB FWD սարքավորումը՝ ԸՔՃ (ընկնող քաշով ձկվածքաչափ): Այդ սարքավորումը հնարավորություն է տալիս գնահատել գոյություն ունեցող և նոր կառուցված ճանապարհային պատվածքի կոշտությունը: Սարքավորումը հագեցված է համակարգչային ծրագրով, որն ապահովում է դաշտային տվյալների մշակումը և հնարավորություն է տալիս արագ կողմնորոշվել ճանապարհային կառուցվածքի վերականգման մեթոդի ընտրության մեջ: ԸՔՃ-ն նախատեսված է ճանապարհային ծածկի վրա 5 m (50 կՆ) դինամիկ բեռնվածքով ներգործելու համար: Արդյունքում ծածկի ձկվածքը չափվում է ներգործող բեռի կենտրոնում և կենտրոնից որոշակի հեռավորությունների վրա: Այդ չափումների հիման վրա որոշվում է ծածկի շերտի դեֆորմացիան, որից հետո համապատասխան բանաձևի օգնությամբ հաշվարկվում է տվյալ կետում պատվածքի համարժեք առաձգականության մոդուլի արժեքը: Նկ. 3-ում պատկերված է KUAB FWD ձկվածքաչափի աշխատանքային սխեման:



Նկ. 3. KUAB FWD ճկվածքաչափի աշխատանքային սխեման

Չափումները պետք է կատարել առանց տեղումների եղանակային պայմաններում: Վերը նշված սարքը կցվում է քարշիչ ավտոմեքենային և տեղափոխվում անհրաժեշտ վայր:

ԸՔՃ-ի հիմնական բաղադրիչներն են.

- բենզինային ներքին այրման շարժիչ՝ ապահովում է ԸՔՃ-ի հիդրավլիկական ագրեգատի աշխատանքը,
- օդումետր՝ ԸՔՃ-ի անցած ճանապարհի երկարությունը գրանցող սարք,
- հիդրավլիկ ագրեգատ՝ ապահովում է հարվածող սարքի աշխատանքը (նկ. 3. - 1),
- ընդունիչներ՝ ընդունում են դեֆորմացիայի չափը 0,001 մմ ճշտությամբ (նկ. 3. - 2),
- ջերմաչափեր՝ չափում են մթնոլորտի և ճանապարհային ծածկի մակերևույթի ջերմաստիճանը,
- համակարգիչ՝ համակարգում է ԸՔՃ-ի դաշտային աշխատանքների գործընթացը,
- ղեկավարման վահանակ՝ ղեկավարում է ԸՔՃ-ի աշխատանքը [6]:

Աշխատանքներն իրականացվում է երկու փուլով՝ դաշտային (չափումների գրանցում) և գրասենյակային (վերլուծություն): Փորձարկման ժամանակ ԸՔՃ-ն գտնվելով ստատիկ վիճակում՝ գրանցում է 50 կՆ ուժով հարվածի դեպքում ծածկի դեֆորմացիայի չափը (մմ): Ստանալով 9 ընդունիչներից համապատասխան ճկվածքների արժեքները և հիմնվելով հարվածի տեղում ստացված ճկվածքի արժեքի վրա՝ ծրագրային փաթեթում (1) բանաձևով հաշվարկվում է ծածկի համարժեք առաձգականության մոդուլը [5].

$$E = \frac{\pi P D (1 - \mu^2)}{4 f} \quad (1)$$

որտեղ $\pi/4$ – ը գործակից է, որը ներմուծվում է այն դեպքերում, երբ պատվածքի ստուգվող շերտը բաղկացած է լինում առանց կապակցանյութի հատիկային նյութերից, P (կգ ուժ/սմ²) – ն՝ տեսակարար բեռնվածքը, որի դեպքում տեղի է ունենում f առաձգական դեֆորմացիան, D (սմ) – ն՝ հարվածող բեռի տրամագիծը, μ – ն՝ Պուասսոնի գործակիցը:

ԸՔՃ-ի աշխատանքները կարգավորվում են ղեկավարման վահանակի և համակարգչի միջոցով: Ստացված չափումների արդյունքները գրանցվում են համակարգչում: Այնուհետև գրասենյակային պայմաններում իրականացվում է ԸՔՃ սարքի փորձարկման արդյունքների համադրում և վերլուծություն: Վերլուծության արդյունքներն ամփոփվում են աղյուսակային տեսքով ըստ ճանապարհային ցցանշման:


Աղ. 2-ում բերված է ճկվածքաչափի տվյալները փորձնական ճանապարհահատվածի համար, իսկ նկ. 4-ում պատկերված է E (ՄՊա) առաձգականության մոդուլի հաշվարկման սխեման:

Աղ. 2-ից երևում է, որ յուրաքանչյուր կետում համարժեք առաձգականության մոդուլը չափվել է երկու անգամ, որի արդյունքում ստացվել են երկուական արժեքներ բոլոր կետերում՝ նպատակ ունենալով փոքրացնել պատահականության գործոնի ազդեցությունը:

FWD (ԸՔՃ) ճկվածքաչափի տվյալները հիմնատակի, C6 և C6+կրաքարային փոշի խառնուրդներից շերտերի համար

Հիմնատակ				C6				C6+կրաքարային փոշի			
ՊԿ+, մ	P, կՆ	f, մկ. մ	E _{ընդ} , ՄՊա	ՊԿ+, մ	P, կՆ	f, մկ. մ	E _{ընդ} , ՄՊա	ՊԿ+, մ	P, կՆ	f, մկ. մ	E _{ընդ} , ՄՊա
0+100	49,2	1582	101	0+2	49,7	902	179	0+55	50,3	442	370
0+100	49,2	1494	107	0+2	49,7	882	183	0+55	50,3	419	390
0+90	49,8	1359	119	0+10	49,8	919	176	0+65	49,6	806	200
0+90	49,8	1284	126	0+10	49,8	889	182	0+65	49,6	775	208
0+80	48,9	1512	105	0+20	50,2	471	346	0+75	50,2	412	396
0+80	48,9	1444	110	0+20	50,2	420	388	0+75	50,2	407	401
0+70	48,0	1514	103	0+30	49,7	944	171	0+85	49,7	795	203
0+70	48,0	1405	111	0+30	49,7	832	194	0+85	49,7	751	215
0+60	48,7	1465	108	0+40	50,1	614	265	0+95	49,3	813	197
0+60	48,7	1364	116	0+40	50,1	548	297	0+95	49,3	748	214
0+50	49,8	1444	112	0+50	50,2	564	289	0+105	49,5	784	205
0+50	49,8	1337	121	0+50	50,2	562	290	0+105	49,5	741	217
				Շրջադարձ				Շրջադարձ			
-	-	-	-	0+45	50,4	493	332	0+110	50,3	453	361
-	-	-	-	0+45	50,4	430	381	0+110	50,3	407	401
-	-	-	-	0+35	49,3	890	180	0+100	49,7	791	204
-	-	-	-	0+35	49,3	821	195	0+100	49,7	737	219
-	-	-	-	0+25	49,1	991	161	0+90	49,5	800	201
-	-	-	-	0+25	49,1	922	173	0+90	49,5	792	203
-	-	-	-	0+15	49,5	919	175	0+80	50,1	525	310
-	-	-	-	0+15	49,5	851	189	0+80	50,1	513	317
-	-	-	-	0+8	49,2	986	162	0+70	49,9	555	292
-	-	-	-	0+8	49,2	845	189	0+70	49,9	526	308
-	-	-	-	0+4	49,6	942	171	0+60	49,6	798	202
-	-	-	-	0+4	49,6	866	186	0+60	49,6	775	208

Կրաքարային փոշու կիրառման ազդեցությունը շերտի կոշտության վրա գնահատելու և հաշվարկների հուսալիության մակարդակի ապահովման նպատակով շերտերում առաձգականության մոդուլի ստացման հաշվարկների համար օգտագործվել են ոչ թե համապատասխանաբար ստացված թվային արժեքների միջին թվաբանականները, այլ ստացված արժեքներից անցում է կատարվել հաշվարկային արժեքների՝ համաձայն (2) բանաձևի.



Նկ. 4. E մոդուլի հաշվարկման սխեմա

$$E_{\text{հաշվ}} = \bar{E} (1 - t C_E) \quad (2)$$

որտեղ \bar{E} – ն շերտի համարժեք առաձգականության մոդուլի միջին արժեքն է, t – ն՝ նորմավորված շերտի անհամասեղությունը, C_E – ն՝ առաձգականության մոդուլի վարիացիայի գործակիցը:

Հաշվի առնելով (2) բանաձևը՝ փորձական ճանապարհահատվածի հիմնատակի, C6 խառնուրդից շերտի և C6 խառնուրդի ու կրաքարային փոշու խառնման արդյունքում ստացված նոր խառնուրդից շերտի համարժեք առաձգականության մոդուլների հաշվարկային արժեքները ստացվել են.

$$E_{hիսմ} = 108 \text{ ՄՊա}, E_{C6 \text{ համ}} = 202 \text{ ՄՊա}, E_{C6+փոշի \text{ համ}} = 242 \text{ ՄՊա}:$$

Կատարվող դաշտային փորձարկման նպատակը (նկ. 5) համեմատվող շերտերի նյութերի առաձգականության մոդուլների արժեքների համեմատությունն է: Համարժեք առաձգականության մոդուլների դաշտային պայմաններում ստացված արդյունքներից փորձարկված շերտերի առաձգականության մոդուլներին անցման համար օգտվել ենք նկ. 4-ում բերված հայտնի երկշերտ համակարգում առաձգականության մոդուլի որոշման նոնոգրամիկ մեթոդից՝ դիտարկելով մեր կողմից կառուցված շերտը որպես երկշերտ համակարգ [7,8]:



Նկ. 5. Դաշտային լաբորատոր փորձարկում KUAAB FWD ձկվածքաչափով

Նախ հաշվարկվել է C6 խառնուրդով շերտի առաձգականության մոդուլի արժեքը: Հաշվի առնելով արդեն ստացված հաշվարկային արժեքները՝ կատարվել են հետևյալ նշանակումները.

$$E_{ընդ} = E_{C6 \text{ համ}} = 202 \text{ ՄՊա}, E_1 = E_{C6} = ?, E_2 = E_{hիսմ} = 108 \text{ ՄՊա}, h = 20 \text{ սմ} \text{ (C6 շերտի հաստություն)}, D = 30 \text{ սմ}:$$

Ըստ մեթոդի հաշվարկվել են. $E_2 / E_{ընդ} = 0,535$ և $h / D = 0,67$: Ըստ ստացված երկու հարաբերությունների արժեքների նոնոգրամից ստացվել է $E_2 / E_1 = 0,267$ հարաբերության արժեքը:

$$\text{Հետևաբար ստացվել է. } E_1 = E_{C6} = 108 / 0,267 = 404 \text{ ՄՊա}:$$

C6 խառնուրդի ու կրաքարային փոշու խառնման արդյունքում ստացված նոր խառնուրդից շերտի դեպքում ընդունելով $E_{ընդ} = E_{C6+փոշի \text{ համ}} = 242 \text{ ՄՊա}$ և կատարելով վերևում նշված հաշվարկները նույն հերթականությամբ ստացել ենք. $E_1 = E_{C6+փոշի} = 108 / 0,167 = 648 \text{ ՄՊա}:$

Փորձարկման արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ կոպճային ջարդված ավազով C6 օպտիմալ հատիկային կազմով խճա-կոպճա-ավազային խառնուրդում կրաքարային փոշու 20%...25% օպտիմալ քանակությամբ ավելացման արդյունքում շերտի առաձգականության մոդուլն աճում է $E_{C6+փոշի} / E_{C6} = 648 / 404 = 1,6$ անգամ՝ ի համեմատ առանց կրաքարային փոշու կիրառման դեպքի:

ОЦЕНКА ВОЗДЕЙСТВИЯ ПРИМЕНЕНИЯ ИЗВЕСТКОВОГО ПОРОШКА НА ЖЕСТКОСТЬ СЛОЯ ДОРОЖНОГО ПОКРЫТИЯ ИЗ СМЕСИ С6

А.А. Гюлзаян, В.Г. Тер-Симонян, Г.К. Восканян

Национальный университет архитектуры и строительства Армении

Ключевые слова: известняк, дорожное покрытие, смесь, модуль упругости, испытание

Дана оценка воздействия применения оптимального количества известкового порошка на жесткость слоя дорожного покрытия из смеси С6. Для количественной оценки воздействия построены опытные участки дороги из

смеси С6 без добавки, а так же с добавлением оптимального количества известкового порошка. Прделаны полевые испытания на жесткость опытных участков дороги с использованием прибора KUAB FWD. На основе тестовых данных выявлено, что применение известкового порошка увеличило изгибную жесткость проверяемого слоя дорожного покрытия почти в 1,6 раз.

EVALUATION OF LIMESTONE POWDER USAGE INFLUENCE ON THE RIGIDITY OF ROAD PAVEMENT LAYER MADE FROM C6 MIXTURE

H.H. Gyulzadyan, V.H. Ter-Simonyan, G.K. Voskanyan

National University of Architecture and Construction of Armenia

Keywords: limestone, road pavement, mixture, elasticity modulus, testing

Evaluation of limestone powder usage influence in optimal quantities on the rigidity of road pavement layer made from C6 mixture is given. For the quantitative evaluation of influence experimental road sections were built from C6 mixture without additives just adding limestone powder in optimal quantities. Rigidity field-testing of the constructed road sections were carried out using KUAB FWD equipment. Testing data revealed that the used limestone powder increased the bending stiffness of the checked road pavement layer almost 1,6 times.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **ГОСТ 25607-2009.** Смеси щебеночно-гравийно-песчаные для покрытий и оснований автомобильных дорог и аэродромов. Межгосударственный стандарт. - М.: Стандартинформ, 2010. - 12 с.
2. **Ոսկանյան Գ. Վ., Գյուլզադյան Ն. Ն.** Տեղական նշանակության ճանապարհային պատվածքների խճա-կոպճա-ավազային խառնուրդներից շերտերի կիրառման վերլուծություն // ԵՃՇՊՀ Տեղեկագիր.-2013.- №4(36).-էջ 62-67:
3. **Ոսկանյան Գ. Վ.** Տեղական ճանապարհային պատվածքների կոնստրուկտիվ շերտերում անօրգա-նական կապակցանյութերով մշակված խճա-կոպճա-ավազային խառնուրդների կիրառման արդյունավետության գնահատումը //ՃՇՀԱՀ Տեղեկագիր.-2014.-№6(44).-էջ 52-59:
4. **Gyulzadyan H., Voskanyan G., Ter-Simonyan V.** Exploratiqn results of applying limestone powder in crushed-stone-sand mixtures for road pavement layers // Contemporary problems in architecture and construction: 6th international conference, June 24-27, 2014. Ostrava, Czech Republic-p. 31-36.
5. **Славущкий А.К., Волков В.Г. и др.** Дорожные одежды из местных материалов. -М.: Транспорт, 1977. - 264 с.
6. **СТО АВТОДОР 10.1-2013.** Определение модулей упругости слоев эксплуатируемых дорожных кострукций с использованием установки ударного нагружения. Стандарт государственной компании «Автодор».- М.:ДорТрансНИИ, 2013. - 25 с.
7. **ВСН46-83.** Инструкция по проектированию дорожных одежд нежесткого типа. – М.: Транспорт, 1985. – 72 с.
8. **Бабков В. Ф., Андреев О. В.** Проектирование автомобильных дорог. Том 1. – М.: Транспорт, 1979. – 367 с.

Ներկայացվել է՝ 12.03.2015 թ.
 Ընդունվել է տպագրության՝ 22.04.2015 թ.

ՀՏԴ 656.13.08

**ՄԻԶՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ՃԱՆԱՊԱՐՀԱՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԳԱԶԱԲԱԼՈՆԱՅԻՆ ԱՎՏՈՄՈԲԻԼՆԵՐԻ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ**

Ռ.Ա. Մեծրույան, Լ.Մ. Սաժիկյան, Կ.Վ. Դավթյան

Հայաստանի ազգային ագրարային համալսարան

«Գարանտերվիս» ավտոտեխնոսպասարկում ՍՊԸ

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան

Առանցքային բառեր` անվտանգություն, գազաբալոնային ավտոմոբիլ, գազի բալոն, վառելիք, հարված

Վերլուծված է ներքին այրման շարժիչներում օգտագործվող վառելիքների, մասնավորապես բնական սեղմած գազի դրական և բացասական կողմերը, գազաբալոնների վտանգավորության աստիճանը տարբեր իրավիճակներում, դրանց տեղադրման սխեմաները ՀՀ-ի տարածքում: Նշված է, որ ավտոմոբիլների սնման համակարգը գազայինի վերափոխելու համար չկա որևէ հստակ կանոնակարգ, բալոնները տեղադրվում են` խախտելով տեխնիկական պահանջները: Գազաբալոնային ավտոմոբիլների անվտանգությունը ՃՏՊ-ի ժամանակ ապահովելու նպատակով առաջարկվում է կատարել ամրության հաշվարկ, որպեսզի ճիշտ ընտրվեն գազի բալոնը ավտոմոբիլի թափքին ամրացնող տարրերը:

Գազավառելիքի կիրառությունը ներքին այրման շարժիչների համար ավելի քան կեսդարյա խնդիր է դարձել ողջ աշխարհի համար: Այս ուղղությամբ ակտիվ աշխատանքները սկսվել և ընթանում են մի շարք երկրներում (ԱՄՆ, Կանադա, Ավստրալիա, Նոր Զելանդիա, Արգենտինա, Արևմտյան Եվրոպայի և Մերձավոր Արևելքի երկրներ և ուր.): Այս գործընթացին ակտիվ մասնակցություն է ունեցել նաև նախկին ԽՍՀՄ-ը: Գազավառելիքի օգտագործման աճը տրանսպորտում խթան է հանդիսացել նաև գազարդյունաբերության զարգացման համար: Ըստ վիճակագրության. ԱՄՆ-ում դեռևս 2000 թ. արդյունահանվող գազի 5%-ն օգտագործվել է որպես վառելիք տրանսպորտային միջոցների համար: Գազավառելիքի նկատմամբ նման առանձնահատուկ հետաքրքրությունը պայմանավորված է երկու պատճառով` մի կողմից գազավառելիքը համեմատած մյուսների (բենզին, դիզելային վառելիք և այլն) նկատմամբ, որոշ վերապահումներով համարվում է ավելի «մաքուր» վառելիք, որի դեպքում դյուրին են լուծվում առկա բնապահպանական խնդիրները և մյուս կողմից նկատվում է մարտավարություն տարբեր երկրների կողմից, որոնք ունեն սեփական արդյունահանվող գազ, նպատակ ունենալով նվազեցնելու կախվածությունը ներկրվող հեղուկ վառելիքից: Դրա օրինակ է հանդիսանում Իրանի իսլամական հանրապետությունը, որի նավթային և գազային պաշարների արդյունահանումն ու վերամշակումը այնպիսին են, որ արտահանելով նավթ, այնուամենայնիվ ներմուծում էր հեղուկ վառելիք տրանսպորտային միջոցների համար և պատահական չէ, որ ներկայումս այդ հանրապետությունում մեծ տեղ է հատկացվում գազաբալոնային սնման համակարգով ավտոմոբիլներին: Գազաբալոնային ավտոմոբիլների տարածմանը նպաստում են նաև մի շարք այլ գործոններ, որոնք տարբեր երկրներում տարբեր առաջնահերթություններ ունեն: Դրանցից մեկը տվյալ երկրի հարկային քաղաքականությունն է, օրինակ, Իտալիայում սեղմած բնական գազ օգտագործելու համեմատ հեղուկ նավթային գազի համար հարկն ավելի է 1,8, իսկ բենզինի դեպքում` 7 անգամ: Պակաս կարևոր չէ նաև գազ-բենզին (դիզելային վառելիք) գնային քաղաքականությունը: Գազավառելիքի օգտագործումը տրանսպորտային միջոցների համար ունի ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմեր: Հիմնական բացասական կողմերից են շահագործման դժվարությունները ցածր ջերմաստիճանների դեպքում, երբ արդեն շրջապատի -5°C-ի դեպքում շարժիչի գործարկումն է դժվարանում, իսկ -25°C-ից ցածրի դեպքում` ավտոմոբիլի շահագործումը:

Գազաբալոնային սնման համակարգի դեպքում փոքրանում է նաև տվյալ ավտոմոբիլի օգտակար բեռնատարողությունը, որն ազդում է դրա արտադրողականության վրա: Չնայած այն հանգամանքին, որ գազը պահվում է բարձր ճնշման տակ հատուկ բալոններում, հրդեհի առաջացման նկատմամբ այն ավելի անվտանգ է, քան հեղուկ վառելիքը: Ներկայումս հիմնականում օգտագործվում է 20 ՄՊա ճնշման համար նախատեսված բալոններ և աշխատանքներ են տարվում մինչև 70 ՄՊա ճնշման բալոններ կիրառելու ուղղությամբ: Սակայն գազաբալոնային սնման համակարգով աշխատող ավտոմոբիլի հակահրդեհային անվտանգությունը պետք է պահպանվի կոնստրուկտիվ միջոցառումներով [1], որը բավականին տեղին է Հայաստանի Հանրապետության համար: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ լայնորեն շահագործվող ավտոմոբիլների հիմնական մասը, իսկ տաքսիներն ամբողջապես (ինչպես Ճապոնիայում), աշխատում են սեղմած բնական գազով:


ՀՀ-ում ավտոմոբիլների սնման համակարգի վերափոխումը գազայինի կատարվում է բազմաթիվ անհատ ձեռներեցների և իրավաբանական անձանց կողմից, չկա հստակ տեխնիկական կանոնակարգ, ուստի առկա է կառուցվածքային բազմազանություն: Քանի որ գազի պաշարը պետք է ապահովի որոշակի երաշխավորված վազքի մեծություն, ավտոմոբիլի վրա տեղադրվող բալոնի չափերը և զանգվածը զգալի են: Թեթև մարդատար ավտոմոբիլների համար բալոնի տեղադրման համար որպես տարածք կարող է ծառայել միայն բեռնախցիկը:

Գազի բալոնն իրենից կարող է վտանգ ներկայացնել միայն հետևյալ իրավիճակներում.

1. հրդեհի ազդեցության տակ բալոնում ներքին ճնշումը բարձրանում է այնքան, որ բալոնը պայթում է,
2. մեքենան ետևից հարված ստանալու ժամանակ, երբ հարվածն անմիջապես բալոնի միջոցով փոխանցվում է վերջին նստոցներին,
3. ճակատային հարվածի ժամանակ բալոնը պոկվում է ամրացումից և լրացուցիչ հարված հասցնում սրահի ուղևորներին,
4. բալոնի բարձր տեղադրության շնորհիվ վատանում է ավտոմոբիլի լայնական կայունությունը, որը կարող է ավտոմոբիլի շրջման հասցնել:

Առաջին դեպքը բացառելու համար սկսել են կիրառել ապահովիչ փականներ, որոնք ճնշման բարձրացման ժամանակ գազը բաց են թողնում մթնոլորտ: Սակայն չի բացատրվում, որ բաց թողնվող գազը բռնկվի:

Երկրորդ դեպքի իրավիճակը հիմնականում վերաբերվում է ավելի փոքր դասի և այն ավտոմոբիլներին, որոնց վերջին շարքի նստոցը տեղադրված է ավտոմոբիլի ետնամասին շատ մոտ (նկ.1):




Նկ.1. Հարված ետևից

Ինչպես երևում է նկ. 1-ից, բալոնն ընկած է նստոցի և հարվածն ընդունող մասի միջև: Քանի որ բալոնն ունի բավականին մեծ ամրություն ու կոշտություն, հարվածն ամբողջովին փոխանցվում է նստոցին (հետևաբար ուղևորին): Այս դեպքում խախտվում է նաև այն տեխնիկական պահանջը, ըստ որի ավտոմոբիլի ետնամասի 40 սմ տարածքում սնման համակարգի տարր արգելվում է տեղադրել:

Երրորդ և չորրորդ դեպքերի համար կարևոր են պահանջվող ստատիկ ամրությունների ապահովումը: Բալոնը և դրան ամրացնող բոլոր տարրերը պետք է դիմակայեն այն բեռնվածքին, որն առաջանում է 20g արագացումից [2]: ՃՏՊ-ի լրատուներից հաճախ են ցուցադրվում կադրեր, երբ գազի բալոնը վթարից հետո իր տեղում, կամ նույնիսկ ավտոմոբիլի ներսում չէ: Դա վկայում է այն մասին, որ բալոնների ամրացումը կատարվում է առանց անհրաժեշտ հաշվարկների՝ տարերայնորեն:

ՀՀ-ի տարածքում բալոնները ավտոմոբիլներում հիմնականում տեղադրվում են հետևյալ սխեմաներով. նկ. 2 ա-ի դեպքում բալոնը շրջանակի հետ միասին ամրացվում է թափքի հատակին, իսկ նկ. 2 բ-ի դեպքում շրջանակը բարձրացված է հատակի նկատմամբ h մեծությամբ:



Նկ.2. Բալոնների տեղադրման սխեմաներ

Բալոնի զանգվածը լիքը վիճակում ընդունենք G_p , կգ: Քսանապատիկ արագացման ժամանակ նրա վրա ազդող ուժը՝ $P = G_p \cdot 20g$, Ն, որը պետք է հիմք ընդունել հետագա ամրության հաշվարկների համար:

Ժապավենների վրա ընկնող գումարային ուժը՝ $P_{\sigma} = P/2 + P'$, Ն, որտեղ P' -ն ամրացման ժամանակ ժապավենի նախնական ձգման ուժն է:

Մեկ ժապավենի վրա ընկնող ուժը՝ $P'_{\sigma} = 1,25 P_{\sigma}/n$, որտեղ 1,25 գործակիցը հաշվի է առնում ձգման անհամաչափությունը, իսկ n -ը ժապավենների քանակն է:

Նույն ուժերի ազդեցության տակ հաշվում են նաև ժապավենի ամրացման հեղույսների ամրությունը: Ստատիկ հավասարակշռությունից ելնելով՝ հատակի հետ ամրացնող ետևի հեղույսների վրա ազդող ուժը նկ. 2 ա-ի դեպքի համար (ընդունելով $B \approx D$) կկազմի՝

$$P \frac{D}{2} = n_1 D P_h,$$

որտեղ n_1 -ը հեղույսների քանակն է, P_h -ը՝ մեկ հեղույսի զգման ուժը (նկ.3) $P_h = P/2n_1$, Ն:

Նկ. 2 բ-ի դեպքի համար բանաձևը կունենա հետևյալ տեսքը՝

$$P_h = P(D/2 + h)/n_1 \cdot D, \quad \text{Ն:}$$

P_h մեծություններով հաշվարկ է կատարվում հատակի հետ ամրացնող հեղույսների համար և ստուգվում հատակի ամրությունը:


Ձգող ուժի ազդեցության տակ հատակի մասը կարող է բացվել d տրամագծով: Կտրման մակերեսը՝

$$S = \pi d \delta K, \quad \text{մմ}^2$$

որտեղ d -ն մանեկի տրամագիծն է, δ -ն հատակի թիթեղի հաստությունը, $K = 0,5 \dots 0,8$, գործակից է, որը հաշվի է առնում թիթեղի ֆիզիկական վիճակը:

Գործող կտրող լարումները կլինեն՝

$$\tau_{կտ} = P_h/S < [\tau_{կտ}]:$$



Նկ.3. Հատակի հետ ամրացման սխեման

Գազի բալոններ տեղադրող կազմակերպություններին առաջարկվում է բալոններ տեղադրելուց առաջ վերոհիշյալ մեթոդով կատարել անհրաժեշտ ամրության հաշվարկ (յուրաքանչյուր մակնիշի ավտոմոբիլի համար) գազաբալոնային ավտոմոբիլների անվտանգությունը ՃՏՊ-ի ժամանակ ապահովելու նպատակով:

МЕРОПРИЯТИЯ, НАПРАВЛЕННЫЕ НА БЕЗОПАСНОСТЬ ГАЗОБАЛЛОННЫХ АВТОМОБИЛЕЙ ВО ВРЕМЯ ДОРОЖНО-ТРАНСПОРТНЫХ ПРОИСШЕСТВИЙ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Ր.Ա. Межлумян, Л.М Сажинян, К.В. Давтян
 Национальный аграрный университет Армении
 Автотехобслуживание ООО “Гарантсервис”
 Национальный университет архитектуры и строительства Армении

Ключевые слова: безопасность, газобаллонный автомобиль, газовый баллон, топливо, удар

Проанализированы положительные и отрицательные стороны газового топлива, в частности, природного сжатого газа, используемого в двигателях внутреннего сгорания; степень опасности газовых баллонов в разных ситуациях; схемы их установки в РА. Установлено, что не существует точного регламента по изменению автомобильной системы питания на газовую; баллоны устанавливаются с нарушением технических требований. Во время ДТП для обеспечения безопасности автомобилей с газовыми баллонами предлагается провести расчет на прочность, чтобы точно выбрать элементы, закрепляющие газовый баллон к кузову автомобиля.

ACTIVITIES AIMED AT SAFETY OF GAS CYLINDER VEHICLES DURING THE ROAD ACCIDENTS IN THE REPUBLIC OF ARMENIA

R.A. Mezhlumyan, L.M. Sazhinyan, K.V. Davtyan
 National Agrarian University of Armenia
 “Garantservice” LLC of Car Maintenance Service
 National University of Architecture and Construction of Armenia

Keywords: safety, gas cylinder installed vehicle, gas cylinder, fuel, bump

Positive and negative characteristics of gas fuel, particularly compressed natural gas used in the internal combustion engines, risk levels of gas cylinders at different situations and the schemes of their installation in the Republic of Armenia are analysed.

It is identified that there are no well-defined regulations at transforming the vehicle feed circuit to gas cylinders which are being installed by violating the technical requirements. To ensure safety of gas cylinder vehicles at traffic accidents (TA) strength calculation is proposed to carry out for the righteous selection of the elements fastening the gas cylinder to the vehicle body.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Золотницкий В.** Автомобильные газовые топливные системы. -М.: Изд-во „Астрель”, 2007. -160 с.
2. Безопасность транспортных систем (автомобили) /**В.А.Гудков** и др. Уч. пос. для вузов. -М.: Горячая линия-телеком, 2010.- 431с.

Ներկայացվել է՝

31.03.2015 թ.

Շնորհակալվել է տպագրության՝

24.04.2015 թ.

УДК 656.021

ТРАНСПОРТНЫЕ ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОГО ЕРЕВАНА И ПУТИ ИХ РЕШЕНИЯ

М.А Авакян, А.А.Меликсетян

Национальный университет архитектуры и строительства Армении

Ключевые слова: экология, транспортное движение, улично-дорожная сеть, пропускная способность, оптимальное управление

Представлен комплексный анализ факторов, способствующих снижению пропускной способности дорожно-уличной сети и загрязнению воздушного бассейна автотранспортом Еревана. Обсуждаются два основных пути решения транспортной проблемы современного г. Еревана, такие как архитектурно-планировочные мероприятия и меры организационного характера

Для современных городов характерным явлением становятся транспортные проблемы, обусловленные стремительным ростом количества автомобилей и отставанием развития инфраструктуры дорожно-уличной сети. Автомобильные "пробки" в г. Ереване приобретают статус острой социально-экономической и экологической проблем. В связи с этим повышение пропускной способности дорожно-уличной сети г. Еревана - основного параметра транспортной системы, определяющего ее эффективность, является актуальной в практическом плане. Дается анализ и разработка прогрессивных действенных путей организации и управления транспортными потоками, а также возможностей повышения пропускной способности дорожно-уличной сети г. Еревана, способствующих снижению уровня аварийности, повышению скорости сообщения и улучшению состояния окружающей среды.

Ереван занимает около 226,59 км², высота над уровнем моря - от 865 до 1390 м, максимальная длина от севера к югу 19,7 км, а с запада на восток – 19,1 км. По данным 2011 г. число постоянных жителей города составляет 1121,9 тыс. человек или же 34,4% от общего количества жителей республики. По данным 2010 г. общая длина улиц города Еревана составляет 736 км, из которых 98 % (721,4 км) обустроены, а 2 % (14,6 км) - нет. При этом общая площадь улиц (включая тротуары) и площадей составляет 12,915 км², из них обустроены 11,258 км². По данным инвентаризации 2007 г. зеленая зона города составляет 67,385 км², из которых площадь для общего применения – 8,323 км². На душу населения в 2005 г. площадь зеленой зоны г. Еревана составляла 4,9 м²/чел, а в 2010 г. – 7,2 м²/чел. [1], когда норма – 20 ... 21 м²/чел. [2].

Проблема старения автомобильного парка и рост количества подержанных автомобилей (рис.1, первичные данные взяты из [3]) являются главным препятствием уменьшения загрязнений атмосферного воздуха от автомобильных источников и, в то же время, самой трудноразрешимой проблемой, поскольку причины данного явления имеют социально-экономическую природу, и она не может быть решена за один день или даже год.




Рис.1. Темпы ввоза автомобилей в Республику Армения

Рост количества автомашин снижает пропускную способность дорожно-уличной сети и приводит к возникновению заторов на регулируемых пересечениях г. Еревана, что объясняется необходимостью остановки транспортных потоков для пропуска конфликтующих направлений. Снижение задержек транспортных средств увеличит безопасность движения и снизит экологическую нагрузку на окружающую среду, вызванную увеличением уровня загрязнения во время застоев [4, 5]. Снижение задержек транспортных средств путем повышения скорости движения позволяет сократить время поездки, но снижает безопасность транспортного процесса. Основным резерв повышения пропускной способности регулируемых пересечений заключается в обеспечении безостановочного проезда перекрестка. Перегруженность дорожно-уличной системы напрямую влияет и на экологическую ситуацию, ведёт к существенному росту потребления топлива автотранспортом, и, как следствие, к увеличению выбросов парниковых газов [4,5]. Работа дорожно-уличных сетей в режиме перегрузки и затора ведёт к общему росту числа дорожно-транспортных происшествий и мелких аварий (рис.2, первичные данные взяты из [3]).




Рис.2. Уровень дорожных происшествий в Республике Армения по годам

В г. Ереване состоят на учете более 230 *тыс.ед.* автотранспорта, из них ежедневно на улицы города выезжают около 140...170 *тыс.ед.* (60...65 %), кроме того, ежедневно в рабочие дни в город прибывает около 20...30 *тыс.ед.* из других районов республики. Г. Ереван ежедневно прибывают и убывают 400...450 *тыс.* граждан [6]. В результате, общее количество автотранспорта, используемого дорожно-уличной сетью г. Еревана, в рабочие дни составляет около 160...200 *тыс.ед.* Соответственно, на 1000 *м* постоянно используемых дорог приходится около 277 автомашин, что в 1,84 раза превышает предельно допустимые нормы, а часы пик - примерно с 8.00 -11.00 утра и с 17.00-20.00 вечера, когда транспортные потоки направлены “в одну сторону”, на 1000 *м* приходится около 500 автомашин, интенсивность движения в городе превышает на 90...350 % расчетных показателей генерального плана. Стремительный рост парка автотранспорта, отсутствие кардинальных мер по развитию дорожно-уличной сети приводят к постоянному осложнению дорожно-транспортной обстановки. Существующие пути решения транспортной проблемы современного г. Еревана разделяются на архитектурно-планировочные мероприятия и меры организационного характера. Эти мероприятия ограничены в реализации своей капиталоемкости, в некоторых случаях - вообще невозможны, или же проводимая градостроительная политика не в полной мере адаптируется к изменениям транспортных потребностей города. Реализация генерального плана транспортного развития города отстает от роста количества автотранспорта. Центр города занимает 13,39 *км²* площади, что составляет 5,9% от общей площади г. Еревана; население 130,4 *тыс.чел.*, что составляет 11,67% от общего числа населения города [1]. Здесь располагаются органы государственного управления, центры общественных услуг и крупные офисные здания, больницы, высшие учебные заведения, что вызывает определенные сложности в каких-либо изменениях конфигурации транспортной сети города. Планировка центральной части города была выполнена из расчета 4...5 этажной застройки. В настоящее время проводится реконструкция центральной части из расчета 6...9 и более этажей, без учета пропускной способности этих улиц, что приведет к дополнительной их нагрузке и еще в большей степени осложнит пропускную способность улиц центральной части г. Еревана (рис.3).




Рис.3. Центр Еревана (белым отмечены здания выше 6 этажей, построенные за последнее десятилетие).

На фоне резкого сокращения уровня зеленых зон города строительство новых дорог общегородского назначения проводится за счет зеленого массива города, что бесспорно усиливает экологическую нагрузку г. Еревана. Рост количества автомобилей требует организации дополнительных стояночных мест, особенно в торговых и культурно-бытовых зонах, возле транспортных узлов и в зоне крупных офисных зданий. Запрещение и ограничение парковки делает бессмысленным использование автотранспорта в городе, так как в движении он находится не более 10% дневного времени, а парковать его нет возможности. Много машин паркуют под знаком: “Стоянка и остановка запрещена”, что ведет к возникновению заторов, снижению пропускной способности улиц и средней скорости движения по городу, затрудняет перемещение пешеходных потоков. Например, в центре на просп. Маштоца в основное время дня из 6 полос 2 полосы всегда заняты паркованными автомобилями. В настоящее время в городе участники дорожного движения теряют в течение суток от 30 до 60 мин своего времени из-за низких скоростей движения и простоев в случае возникновения транспортных заторов. Ввиду высокой загруженности дорожно-уличной сети, скорости общественного пассажирского транспорта сегодня на 15...20% ниже рекомендованных нормативов, интервалы движения общественного пассажирского транспорта в часы “пик” из-за заторов на 65% маршрутов превышают нормативные 15 мин как минимум в 2 раза. Для нормализации интенсивных городских транспортных потоков и особенно для разгрузки перекрестка в системе “среда-машина-человек” важными ресурсами могут быть нервно-психическое состояние и уровень подготовки водителей.

Заключение

Выходом из сложившейся ситуации дорожно-уличной сети г. Еревана могут быть меры, направленные на увеличение ее пропускной способности:

- развитие дорожно-уличной сети, реконструкция и строительство объектов дорожной инфраструктуры, оптимизация организации движения;
- создание условий для парковки транспортных средств;
- синхронизация фаз светофоров на всех основных дорогах столицы;
- регулирование транспортного спроса за счёт развития общественного пассажирского транспорта и повышения качества его услуг;
- выделение первой полосы движения под общественный транспорт, исключение от первой полосы движения платных стоянок;

- регулярное проведение обучения водителей общественного пассажирского транспорта необходимым нормам и стандартам городского транспорта и обследование их нервно-психологического состояния;
- учитывая нарастание нервно-психических и физических нагрузок на водителей общественного пассажирского транспорта, разработана политика обеспечения их дополнительными финансово-экономическими компенсациями;
- регулирование транспортного спроса через введение ограничений на использование автотранспорта, несмотря на явную непопулярность подобных мер среди автовладельцев;
- информационное обеспечение участников движения, направленное на равномерное распределение транспортных потоков по дорожно-уличной системе;
- организация остановок городского транспорта на улицах города с учетом расписания всех маршрутов, проходящих по этой улице и людских потоков на данной остановке, с одновременным усилением требований к водителям на данных остановках;
- обеспечение оперативности проведения страховых процедур при авариях;
- использование экономических стимулов для увеличения доли новых автомобилей в городском автопарке.

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ
Մ.Ա. Ավագյան, Ա.Ա. Մելիքսեթյան

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան

Առանցքային բառեր. *էկոլոգիա, տրանսպորտային միջոցներ, ճանապարհափողոցային ցանց, թողունակություն, օպտիմալ կառավարում*

Ներկայացվում է ավտոճանապարհային ցանցի թողունակության նվազմանը և ք. Երևանի օդային ավազանի ավտոտրանսպորտից աղտոտմանը նպաստող գործոնների համալիր վերլուծությունը: Քննարկվում է ժամանակակից Երևանի տրանսպորտային հիմնահարցերի լուծման երկու հիմնական ուղիներ, ինչպիսիք են՝ ճարտարապետական պլանավորման միջոցառումները և կազմակերպչական բնույթի միջոցները:

MODERN YEREVAN'S TRANSPORTATION PROBLEMS AND THE WAYS FOR THEIR SOLUTIONS

M.A. Avagyan, A.A. Meliqsetyan

National University of Architecture and Construction of Armenia

Keywords: *ecology, transportation means, road network, carrying capacity, optimal administration*

Comprehensive analysis of the factors contributing to the lower capacity of the road network and air pollution by the emissions from the vehicles in Yerevan city is presented. Two basic ways to tackle the transportation problems of modern Yerevan such as the activities of architectural planning and organizational means are given.

ЛИТЕРАТУРА

1. <http://www.yerevan.am/1-394-Passport.html> (11.2013)
2. <http://www.armtown.com/news/am/prm/20080623/42942/>. (11.2013)
3. <http://www.armstat.am/am/?nid=45&year=2012> (11.2013)
4. <http://www.mnp.am/?p=160> (11.2013)
5. **Вермишев М., Месропян.** Оценка и прогноз выбросов парниковых газов автомобильным транспортом Армении // Сб.ст.: Армения. Проблема изменения климата. Ереван: Изд. дом “Лусабац”, 2003.- Вып. 1. - С. 35-38
6. <http://www.yerevan.am/edfiles/files/cragir.pdf> (11.2013)

Ներկայացվել է՝ 17.02.2015 թ.
Ընդունվել է տպագրության՝ 08.04.2015 թ.

ИССЛЕДОВАНИЕ СМЕЩЕНИЙ ИНТЕРФЕРЕНЦИОННЫХ ПОЛОС ПО РАЗНЫМ КРИСТАЛЛОГРАФИЧЕСКИМ НАПРАВЛЕНИЯМ, КАК МЕТОД ОБНАРУЖЕНИЯ И ОЦЕНКИ ОСТАТОЧНЫХ НАПРЯЖЕНИЙ В КРИСТАЛЛАХ

К.В. Алумян, Т.С.Мнацаканян, Т.О.Эйрамджян

Ереванский государственный университет

Ключевые слова: муаровые полосы, маятниковые полосы, линии изонапряжений дислокаций, “радиационные” точечные дефекты

Представлены результаты ранее реализованных экспериментов по изучению остаточных напряжений в кристаллах с применением рентгеноинтерферометрических методов. Обосновываются актуальность таких исследований, которые могут быть полезны при исследованиях полей напряжений в поликристаллических материалах. Приводятся также результаты последних экспериментальных работ, которые могут быть учтены при использовании монокристаллов в качестве подложек в современных интегральных схемах.

Предыдущие работы [1-6] касаются исследования кристаллических искажений и полей напряжений в монокристаллах кремния с применением рентгеноинтерферометрических методов. Это методы рентгеновской интерферометрии при использовании трехблочных кремниевых интерферометров и метод маятниковых полос (МП) рентгеновских лучей с использованием двухблочных интерферометров (клин-плоскопараллельный кристалл). Из основных экспериментальных результатов можно отметить следующие:

1. разработан и осуществлен метод внесения дислокаций в один из блоков двухблочных или трехблочных рентгеновских интерферометров и получены рентгеноинтерференционные картины в виде муаровых или маятниковых полос при наличии дислокаций в исследуемом кристаллическом образце;
2. в приближении линейной теории упругости теоретически вычислены и получены линии изонапряжений 60° дислокаций для кремниевых монокристаллов;
3. проведен численный расчет распределения интенсивностей маятниковых полос (МП), а также получена зависимость вычисленных значений смещений маятниковых полос ($\Delta\ell$) от параметра искажения решетки (U),

$U \sim \left[\left(\frac{\Delta d}{d} \right)^2 + \varphi^2 \right]^{1/2}$. После введения дислокаций в клиновидную пластину интерферометра снималась серия секционных топограмм, на которых видно, что вершины МП смещены от центральной линии рефлекса дважды дифрагированного пучка, а ветви МП повернуты относительно исходного положения (рис.4). На топограммах измерены смещения ($\Delta\ell$) МП и найдены распределения вершин МП в зависимости от параметра искажения (U), тем самым построена картина распределения напряжений вокруг введенных дислокаций. Сравнение (рис.1) и (рис.2)




Рис. 1. Распределения вершин МП на рентгеновских топограммах




Рис.2. Теоретически полученные линии изонапряжений дислокаций

показывает, что линии изонапряжений дислокаций и распределения вершин МП по всему кристаллу имеют одинаковый вид. Это обстоятельство позволяет использовать данный метод для исследования механических напряжений вокруг дислокаций в кристаллах;

4. показано, что муаровые картины и распределения вершин МП, полученные от дислокационных кристаллов, совпадают с линиями изонапряжений дислокаций, полученных в результате теоретических расчетов;
5. впервые рентгеноинтерферометрические методы, какими являются методы муаровых картин и маятниковых полос, применены для вычисления модуля упругости в локальных областях кремниевых кристаллов, в отличие от существующих других методов (например, ультразвуковых), в которых измеряется эффективный модуль упругости (усредненный по кристаллу). Вычисленные значения модуля упругости для данной ориентации с большой точностью совпадают с его значениями, полученными экспериментально от бездислокационного интерферометра. При внесении дислокаций в блоки интерферометра наблюдается заметное уменьшение (приблизительно на 10%) модуля упругости. Неравномерное распределение дефектов решетки приводит к неравномерному распределению модулей упругости по кристаллу, что было обнаружено в экспериментах. Следует добавить, что предлагаемым методом можно определить распределение модуля упругости по кристаллу не только в зависимости от распределения дислокаций, но и от градиента температуры, примесей и других неоднородностей;
6. впервые рентгеноинтерферометрический метод был применен для исследования искаженных областей кристалла, подвергнутого лазерному воздействию. Показано, что образование микротрещин и дислокаций в кристалле, вследствие лазерного воздействия, приводит к уменьшению локального значения модуля упругости кристалла.

Идентификация муаровых линий и распределения маятниковых полос с линиями изонапряжений в монокристалле позволяет экспериментально восстановить поле механических напряжений, создаваемое дислокациями. Вместе с этим, предлагаемая нами методика определения локальных значений статического модуля упругости дает возможность прогнозировать физические свойства полупроводниковых материалов при конструировании новых функциональных элементов, используемых в электронике. Применяемый метод может быть полезен для таких исследований, где необходимо учитывать распределения локальных деформаций и напряжений в исследуемом материале. Исследования касаются монокристаллов кремния, однако нужно отметить, что некоторые важные результаты этих работ можно применить для поликристаллических веществ, к которым относятся металлы, являющиеся неотъемлемой частью строительных конструкций. Из таких результатов следует отметить прежде всего тот факт, что при наличии различных дефектов в исследуемом кристалле упругая постоянная кристалла уменьшается, т.е. материал становится “мягче”. И если, например, одной из главных причин техногенных аварий является наличие в строительных конструкциях остаточных напряжений, то становится очевидным актуальность задачи исследования остаточных напряжений в материалах с применением сверхчувствительных экспериментальных методов. Однако большой научный и практический интерес представляет и исследование остаточных напряжений в самих монокристаллах. Ведь на современном этапе развития микроэлектроники особое внимание уделяется монокристаллическим подложкам микросхем, на основе которых создаются все микросхемы. Вследствие механических воздействий на этапе

первичной обработки монокристалла, таких как - резка кристалла на пластины, полировка и т.д., внутри кристалла могут образовываться остаточные внутренние напряжения. Эти напряжения особенно сказываются при работе микросхем в экстремальных условиях (в условиях действия радиации, температуры, электромагнитного излучения и др.). Например, наличие остаточных внутренних напряжений в подложках в процессе их эксплуатации может вызвать разрыв дорожек на микросхемах с последующим выходом из строя аппаратуры в целом. Поэтому задача исследования остаточных напряжений в монокристаллах особенно актуальна. Ведь большинство приборов работает на элементах, выполненных на подложках из монокристаллического кремния или арсенида галлия. В последних работах реализованы некоторые эксперименты по исследованию остаточных “радиационных” микронапряжений в монокристаллах кремния обусловленных воздействием электронного облучения. В этих экспериментах применен рентгеноинтерферометрический метод маятниковых полос (МП), а в качестве рабочего образца служила двухкристальная система (клин - толстый плоскопараллельный кристалл). В этих исследованиях электронному облучению подвергался клиновидный кристалл, при этом во избежание облучения остальной части интерферометра был применен специальный свинцовый каркас с окном, через которое падал пучок электронов. Исследовано образование “радиационных” дефектов в монокристаллах кремния при разных ориентациях электронного пучка по отношению к кристаллографическим направлениям исследуемого кристалла. В частности при облучении клиновидной пластины двухблочной системы быстрыми электронами (3Мэв) с разными значениями потока частиц (от $4 \cdot 10^{16}$ до $4 \cdot 10^{18}$ эл/см²) вдоль кристаллографического направления [111] на полученных топограммах наблюдались смещения $\Delta Y \sim (600-900 \text{ мкм})$ по высоте дифрагированного рентгеновского пучка (рис. 4),




Рис.3. Зависимость вычисленных значений смещений маятниковых полос (Δl) от параметра искажения решетки (u)

т.е. по направлению [112], что соответствовало образованию на поверхности кремниевого кристалла “аморфного” слоя толщиной $\delta \sim 20-35 \text{ мкм}$, от которого не происходит динамическая дифракция рентгеновских лучей. В другом эксперименте реализован тот случай, когда кристаллический блок интерферометра подвергается электронному облучению в направлении перпендикулярном отражающим плоскостям ($\bar{1}10$) интерферометра (рис. 5) с энергией электронов $\sim 3\text{Мэв}$ и суммарной дозой $6 \cdot 10^{16}$ до $2 \cdot 10^{18}$ эл/см². В отличие от предыдущего эксперимента, здесь целью ставилось обнаружение и оценка полей “радиационных” микронапряжений. Тут нужно особо отметить, что для обнаружения локальных микронапряжений точечных дефектов в кристаллах, возникающих под действием радиации, необходимо применение сверхчувствительных экспериментальных методов, одним из которых является рентгеновская интерферометрия. К тому же трудность исследования полей микронапряжений точечных дефектов связана с тем, что при малых дозах облучения, чтобы экспериментально зарегистрировать изменения на рентгеновских топограммах, необходимо электронный пучок направить перпендикулярно отражающим плоскостям интерферометра, так как чувствительность интерферометра наибольшая, когда атомы смещаются в направлении нормали отражающих плоскостей.




Рис.4. Схема эксперимента по исследованию влияния электронного облучения на МП: электронный пучок падает вдоль кристаллографического направления [111]

Поэтому подходящим направлением электронного облучения, удовлетворяющим это требование, будет направление как показано на рис. 5. И здесь тоже, как и в предыдущем эксперименте, нами был применен специальный свинцовый каркас с окном, через которое электронный пучок падал вдоль направления $[1\bar{1}0]$ (рис. 5). Из сравнения топограмм полученных до и после облучения, следует, что электронное облучение по направлению $[1\bar{1}0]$ приводит к смещениям маятниковых полос по ширине дифрагированного рентгеновского пучка, т.е. по направлению $[1\bar{1}0]$. При этом с увеличением дозы электронного облучения такие смещения МП увеличиваются (рис. 5).




Рис.5. Схема эксперимента по исследованию влияния электронного облучения на МП: электронный пучок падает вдоль кристаллографического направления $[1\bar{1}0]$

Известно, что электронное облучение кристалла приводит к появлению в нем дефектов Френкеля (межузельные атомы и вакансии), а точечные дефекты создают упругие поля согласно теории упругости [7], вызывая тем самым объемное расширение кристалла. Следовательно в этом случае происходит и изменение параметра решетки (относительная деформация $\Delta d/d$). С другой стороны по результатам ранее выполненных нами теоретических и экспериментальных работ [1,2] изменение межплоскостных расстояний $\Delta d/d$ в клиновидном блоке интерферометра приводит к смещениям МП по ширине дифрагированного пучка. Эти исследования касались тех случаев, когда в клиновидный блок были введены дислокации или же этот блок подвергался механическому растяжению или сжатию по тому же кристаллографическому направлению $[1\bar{1}0]$. Это подтверждает наше предположение, что облучение клиновидного кристалла в направлении перпендикуляр-

ном к отражающим плоскостям, в результате которого происходят такие же смещения МП, приводит к изменениям межплоскостных расстояний в этом направлении. Следовательно, измеряя на топограммах смещения МП по ширине рефлексов, обусловленных электронным облучением кристалла, и используя результаты численных расчетов, приведенных в [1,2], тем самым оцениваем относительные деформации $\Delta d/d$. Исходя из вышеизложенного, приходим к следующим выводам:

1. эффект смещения вершин маятниковых полос дает возможность судить о характере кристаллических искажений и дефектов, возникающих в кристалле вследствие его электронного облучения. Причем смещения МП в результате воздействия на кристалл могут происходить и в вертикальном направлении и по ширине дифрагированного рентгеновского пучка (рефлекса);

2. вертикальные смещения МП по направлению $[112]$, соответствуют случаю, когда на поверхности кристалла образуются сильно поврежденные микрообласти, вследствие случайного накопления радиационных точечных дефектов. От таких областей не происходит динамическая дифракция рентгеновских лучей. С помощью измеренных на топограммах вертикальных смещений можно определить размеры таких поврежденных областей;

3. горизонтальные смещения маятниковых полос по направлению $[110]$ свидетельствуют об образовании “радиационных” микронапряжений в результате электронного облучения исследуемого интерферометра. С помощью измеренных горизонтальных смещений МП можно оценить относительную деформацию кристалла ($\Delta d/d$) и ее изменение по глубине проникновения электронов при различных дозах облучения.

4. Полученные результаты могут быть учтены при исследовании остаточных “радиационных” напряжений в кристаллах в целом и при использовании монокристаллических подложек в интегральных микросхемах, в частности.

**ՏԱՐԲԵՐ ԲՅՈՒՐԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԻՆՏԵՐՖԵՐԵՆՅՈՒՆ ՇԵՐՏԵՐԻ
ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԲՅՈՒՐԵՂՆԵՐՈՒՄ
ՄՆԱՑՈՐԴԱՅԻՆ ԼԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴ**

Կ.Վ. Ալումյան , Թ.Ս.Մնացականյան, Տ.Հ. Էյրամջյան

Երևանի պետական համալսարան

Առանցքային բառեր. մուարի շերտեր ճոճանակային շերտեր, «ճառագայթային կետային» արատներ, դիսլոկացիաների իզոլարման գծեր

Ներկայացվել են միաբյուրեղներում մնացորդային լարումների ուսումնասիրության ավելի վաղ կատարված աշխատանքների փորձարարական արդյունքները ռենտգենաինտերֆերաչափական մեթոդների կիրառմամբ: Հիմնավորվել է այդ ուսումնասիրությունների արդիականությունը բազմաբյուրեղ նյութերի լարման դաշտերի հետազոտության դեպքում: Ներկայացվել են նաև վերջին փորձարարական աշխատանքների արդյունքները, որոնք կարող են օգտագործվել ժամանակակից ինտեգրալ սխեմաներում միաբյուրեղները որպես տակդիրներ կիրառելիս:

**THE STUDY OF INTERFERENTIAL LINE DISTORTIONS ACROSS DIFFERENT
CRYSTALLOGRAPHIC DIRECTIONS AS A METHOD FOR REVELATION AND
ASSESSMENT OF RESIDUAL TENSIONS IN CRYSTALS**

K.V. Alamyanyan, T.S. Mnatsakanyan, T.H. Eyranyan

Yerevan State University

Keywords: *moire fringes, pendellosung fringes, radiation point defects, lines of dislocation isotension*

The results of earlier experiments aimed to study the residual tensions in crystals by the application of X-ray interferometric methods are given. The importance of such studies is justified for the research of tension fields in polycrystalline materials. The results of recent experiments are described as well. These results can be taken into consideration while applying monocrystals as substrates in modern integral schemes.

ЛИТЕРАТУРА

1. Алумян К.В., Багдасарян Р.И., Баян М.К. Влияние кристаллических искажений на образование и вид маятниковых полос.1 // Кристаллография. - 1983. - Т.28. № 5. - С. 1024 - 1025.
2. Алумян К.В., Багдасарян Р.И., Баян М.К., Эйрамджян Ф.О. Влияние кристаллических искажений на образование и вид маятниковых полос.2 // Кристаллография. - 1983.- Т.28. № 5. - С.1026 -1027.
3. Эйрамджян Т.О., Погосян М.З., Алумян К.В., Мнацаканян Т.С. Использование интерферометрического метода для определения упругих констант монокристаллов, подвергнутых лазерному воздействию // Известия ЕГУАС. - 2011. - №1. - С.53-55.
4. Алумян К.В., Мнацаканян Т.С., Эйрамджян Т.О. Рентгеноинтерференционные методы исследования напряженного состояния материалов // Известия ЕГУАС. - 2011. - №6(26). - С.80-88.
5. Алумян К.В., Мнацаканян Т.С., Эйрамджян Т.О. Исследование остаточных напряжений в материалах с применением рентгеноинтерференционных методов. 1. γ -облучение // Известия ЕГУАС. - 2012. - №4(30). - С.100-104.
6. Алумян К.В., Мнацаканян Т.С., Эйрамджян Т.О. Исследование остаточных напряжений в материалах с применением рентгеноинтерференционных методов. 2. Перераспределение муаровых полос при больших дозах γ -облучения // Известия ЕГУАС. - 2013. - № 2(34). - С. 103-105.
7. Косевич А.М. Основы механики кристаллической решетки. - М.: Наука, 1972.

*Ներկայացվել է՝
Շնորհակալվել է տպագրության՝*

12.02.2015 թ.

07.04.2015 թ.

ՀՏԴ 628.112

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՑԱՆՑՈՒՄ ՀՈՍԱԿՈՐՈՒՄՆԵՐԻ
ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ

Ա.Ա.Սահակյան

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան

Առանցքային բառեր. ջրմուղի ցանցի գոտիավորում, հոսակորուստ, ճնշման կարգավորիչ, սեկտորավորում, օրվա կարգավորիչ ջրամբար

Քննարկվում են ջրմուղի ցանցերի գոտիավորման, սեկտորավորման և ճնշման կարգավորման խնդիրներ, ինչը մեծացնում է ցանցերի կառավարելիությունը և հուսալիությունը: Առաջարկվում են ջրի կորուստների հայտնաբերման տարբեր մեթոդներ, որոնք թույլ են տալիս նվազեցնել գոտիներում ջրի սպառումը: Շահագործման ընթացքում այս գործառնությունների շարունակական կիրառումը թույլ կտա կրճատել ջրի անթույլատրելի չափերի հոսակորուստները:

Երևան քաղաքի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի զարգացումը սկսվել է խորհրդային ժամանակներում, երբ մայրաքաղաքը և արդյունաբերությունն արագորեն զարգանում էին: Համակարգերը զարգացել են տարերայնորեն՝ առանց տեխնիկատնտեսական, բնապահպանական խնդիրների հիմնավոր վերլուծության: Դրանք անընդհատ հզորացվել են՝ չհիմնավորված մեծ ջրապահանջը բավարարելու համար՝ ներգրավելով ավելի շատ թվով ջրաղբյուրներ:

Մրցակցության և որակի իրական վերահսկողության բացակայության պատճառով ցածր է եղել նաև շինարարության որակը, իսկ շահագործման, սպասարկման և պահպանման աշխատանքները՝ անբավարար: Այս ամենի արդյունքում, ջրամատակարարման համակարգերում առկա են մեծ չափերի հասնող հոսակորուստներ, իսկ աղբյուրներից վերցվող ջրի քանակները՝ 2,0...2,5 անգամ գերազանցում են նորմերով հաշվարկված ջրապահանջի զարգացած երկրների ցուցանիշները [1]:

Երևանն ընդարձակվել է բարդ ռելիեֆ ունեցող տարածքի վրա՝ քաղաքի սահմաններում նիշերի տարբերությունը հասնելով մինչև 500 մետրի: Ջրմուղի ցանցը զարգանում էր շատ արագ, առանց պատշաճ գոտիավորում իրականացելու: Անթույլատրելի մեծ ճնշումներից խուսափելու համար կիրառվել է ճնշման կարգավորման անարդյունավետ եղանակ՝ բաշխիչ ցանցի որոշակի փականների բացվածքը փոքրացնելու միջոցով: Ցանցում առաջացող բարձր ճնշումների արդյունքում հաճախ խափանվում էր բաշխիչ ցանցի արմատուրը, ներքին ցանցն ու սանիտարական սարքերը, մեծանում վթարներ առաջանալու հավանականությունը, հոսակորուստների չափը և ջրօգտագործումը [2]:


Ջրամատակարարման համակարգում գործնականորեն չի իրականացվել ջրի քանակի հաշվառում, որի պատճառով հնարավոր չի եղել գնահատել տեղի ունեցող իրական հոսակորուստների չափը և տեղը [3]:

Ստեղծված իրավիճակից դուրս գալու, ինչպես նաև անթույլատրելի չափերի հասնող տեխնիկական ջրակորուստների դեմ պայքարի արդյունավետ միջոց է ցանցի գոտիավորման (սեկտորավորման) աշխատանքների իրականացումը [4], ինչը Երևանում սկսվեց իրագործվել 2005 թ.: Այս տարիների ընթացքում կատարված բազմաթիվ փորձերի արդյունքում մշակվեց ցանցի գոտիավորման իրականացման մեթոդ՝ արդեն կառուցված և գործող ցանցի պայմաններում: Այս դեպքում պետք էր հաշվի առնել կառուցված ցանցի առանձնահատկությունները՝ նիշերի մեծ տարբերությունը, օրվա կարգավորիչ ջրամբարների տեղադիրքային դասավորվածությունը և ծավալը, գոյություն ունեցող խողովակների տրամագծերը, շենքերի հարկայնությունը, բնակչության խտությունը և այլն:

Ցանցի գոտիավորման և կառավարելիության բարձրացման ծրագրի իրականացման նպատակով քաղաքում ստեղծվեցին ջրամատակարարման կառավարման գոտիներ, որոնք ընդգրկում էին 500-ից

մինչև 3000 բաժանորդ: Նախկինում գործող օդակաձև ցանցը փականների միջոցով ձևափոխվեց փական-դային ցանցի, վերածվեց առանձին սեկտորների և այդ սեկտորների սնման հատվածների վրա տեղադրվեցին մագնիսական հոսքաչափեր ու ճնշման գրանցման սովիչներ: Աշխատանքի նպատակն էր գնահատել յուրաքանչյուր գոտի մտնող ջրաքանակները և դրանք համեմատել բաժանորդների թվի հետ: Ստեղծելով միակողմանի սնուցում և բաժանորդների ճշգրիտ քանակ ունեցող ջրամատակարարման սեկտորներ, դժվար չէ գնահատել իրականությունը մոտ հոսակորուստների մակարդակը:

Ջրամատակարարման գոտիներ ստեղծելուց հետո, հաջորդ կարևորագույն խնդիրն է ճնշումների կառավարումը: Ցանցում ավելցուկային կամ թերի ճնշումներից խուսափելու համար անհրաժեշտություն առաջացավ, հատուկ համակարգչային ծրագրի միջոցով ստեղծել ցանցի հիդրավիկ մոդել, որի հիմնական դերը՝ համակարգի աշխատանքային փոփոխվող ռեժիմի դեպքում ելքերի և ճնշումների արժեքների մոտավոր գնահատումն է: Մոդելի կիրառման միջոցով հնարավոր է հայտնաբերել ջրամատակարարման ցանցի կրիտիկական և առավել խոցելի հատվածները, որոշել ճնշման կարգավորիչների և հոսքաչափերի տրամադրերը, տեղադրման վայրերը (նկ. 1):



Նկ.1. Ջրամատակարարման գոտու հիդրավիկ մոդելի օրինակ Արարկիի համայնքում

Հիդրավիկ մոդելի կիրառման և ճնշման կարգավորման արդյունքում փոքրանում է ջրամատակարարման ցանցում վթարների առաջացման և բնակարաններում սանիտարական սարքերի խափանման հավանականությունը, ինչպես նաև հոսակորուստների չափը: Առաջարկի գործնական կիրառումը ցույց է տվել, որ ցանցի գոտիավորման, սեկտորների ստեղծման և ճնշման կարգավորման արդյունքում գոտու սպասարկման տարածքում ջրի սպառումը նվազում է 8...10%-ով:

Հաշվի առնելով, որ ջրամատակարար կազմակերպությունը չի կարող միաժամանակ գործողություններ իրականացնել ջրամատակարարման բոլոր գոտիներում (Երևան քաղաքում առկա է մոտ 90 հիդրավիկ գոտիներ), ուստի անհրաժեշտ է գտնել հոսակորուստների առավել բարձր մակարդակ ունեցող գոտիները և առաջնահերթության սկզբունքով իրականացնել թաքնված վթարների հայտնաբերման և վերացման աշխատանքները: Հոսակորուստների մակարդակի գնահատման նպատակով առաջարկվում է օգտագործել տեսակարար կորուստների որոշման հետևյալ բանաձևը.

$$q_{hnu} = (Q_{qh2} - Q_{սպ}) / L_{զր},$$

որտեղ q_{hnu} -ը տեսակարար հոսակորուստն է, $l/լ.մ$, Q_{qh2} -ը՝ գոտու ծախսաչափի գրանցված նվազագույն գիշերային հոսքը, $լ/լ$, $Q_{սպ}$ -ն՝ գիշերվա ընթացքում բաժանորդների միջին սպառումը, $լ/լ$, $L_{զր}$ -ը՝ ջրագծերի երկարությունը, $մ$:


Գիշերվա ընթացքում բաժանորդի միջին սպառումը ընդունվում է սեփական սեկտորում 1,7

լ/բաժանորդ/ժամ, իսկ բազմաբնակարան շենքերում՝ 0,6 լ/բաժանորդ/ժամ: Այս թիվը վերցված է եվրոպական երկրներում կիրառվող հոսակորուստների կառավարման մասին առկա գրականությունից, որը գրեթե համապատասխանում է Երևան քաղաքի պայմաններին [4]: Խոշոր բաժանորդների գիշերային ծախսը հաշվարկվում է ելնելով փաստացի չափումներից, քանի որ այն կարող է զգալի ազդեցություն ունենալ գոտու գիշերային կորուստների գնահատման վրա:

Գոտիավորման ծրագրի հաջորդ փուլը նոր ստեղծված և արդեն շահագործվող ջրամատակարարման գոտում հոսակորուստների հայտնաբերումն ու վերացումն է՝ սահմանված մակարդակի բերելով ջրօգտագործումն ու հոսակորուստների չափը: Կազմակերպությունում օգտագործվում են հոսակորուստների հայտնաբերման հետևյալ հիմնական եղանակները.

Աստիճանային փորձարկում. գիշերային ժամերին փականների փակման միջոցով, գոտու ծայրակետերից սկսած, որոշվում է առանձին հատվածների գիշերային ծախսը և հայտնաբերվում հաշվարկներին չհամապատասխանող սպառում ունեցող խողովակի հատվածը:

Վթարված հատվածի ձայնալսում. Կորելացիա և ակվաֆոն տիպի ձայնային սարքերի միջոցով հայտնաբերվում է ջրամատակարարման ցանցի առավել աղմկոտ կետը, ինչը և հանդիսանում է վթարի վայրը: սարքի աշխատանքային սկզբունքը հետևյալն է. խողովակի վրա տեղադրված տվիչները որոշում են վթարից առաջացած աղմուկի վայրը և գրաֆիկական պատկերի տեսքով այն պատկերում համակարգչի մոնիտորի վրա (նկ.2):



Նկ 2. Կորելիատորի միջոցով հայտնաբերված մեծ աղմուկի (վթարի վայր) և տվիչներից դրա հեռավորության կապի գրաֆիկ. ա-մոտավոր, բ-ճշգրտված

Չափումների եղանակ. ընդունելով մեկ բազմաբնակարան շենքի սպառումը մոտ 0,5 լ/վ հոսակորուստները հայտնաբերելու նպատակով, շարժական մագնիսական հոսքաչափի միջոցով կատարված են չափումներ՝ սկզբում մեծ սպառում ունեցող ենթագոտու, ապա խողովակաշարի վթարված հատվածի հայտնաբերում:

Ճնշումների չափման եղանակ. ջրամատակարարման ցանցի հասանելի վայրերում կատարվում են ճնշման չափումներ և փաստացի տվյալների հիման վրա կառուցվում է տվյալ հատվածի էներգիայի գիծը, ըստ որի որոշվում է առավել մեծ ճանապարհային կորուստ ունեցող հատվածը, ինչը և խողովակաշարի հավանական վթարված տեղամասն է:

Ջրահեռացման ցանցի ուսումնասիրության միջոցով. վերցնելով փորձանմուշներ ջրահեռացման ցանցից և ուսումնասիրելով դրանց բաղադրությունը՝ հայտնաբերվում է առավել ջրիկ՝ ամոնիակային ազոտի կամ ֆոսֆորի համեմատաբար փոքր քանակություն պարունակող տեղամասը, հետևաբար ջրամատակարարման ցանցից դեպի ջրահեռացման ցանց մաքուր ջուր լցվելու մոտավոր վայրը: Ունենալով վթարի մոտավոր վայրը, դժվար չէ ձայնալսման միջոցով հայտնաբերել վթարի ճիշտ տեղը:

Հոսակորուստների վերացումից և ջրամատակարարման գոտու ծախսը կարգավորելուց հետո անհրաժեշտ է ստեղծել գոտու անձնագիր՝ ելակետային տվյալներով, որում գրանցվում են գիշերային և ցերեկային ծախսերը, օպտիմալ ճնշումները, ճնշման կարգավորիչների պարամետրերը, փականների բացվածքների չափերը, ենթագոտիներ մտնող ջրաքանակները և այլ տվյալներ:

Ընդհանուր առմամբ, գոտիավորումից հետո հոսակորուստների հայտնաբերումը շարունակական գործընթաց է, և անհրաժեշտ է պարբերաբար կատարել ելակետային և փաստացի չափումների տվյալների համեմատություն, շեղումների դեպքում իրականացնել հոսակորուստների և թաքնված վթարների հայտնաբերում և վերացում, ճնշումների կարգաբերում և կորուստների գնահատում:

Պարբերաբար ստուգումների արդյունքների վերլուծությունը հնարավորություն կտա ճիշտ պլանավորել իրականացվող նորոգման և վերակառուցման աշխատանքները՝ ապահովելով ջրամատակարարման պատշաճ մակարդակ:

ОСНОВНЫЕ ПРИНЦИПЫ ВЫЯВЛЕНИЯ УТЕЧЕК ВОДЫ В СЕТЯХ ВОДОСНАБЖЕНИЯ

A.A. Saakyan

Национальный университет архитектуры и строительства Армении

Ключевые слова: зонирование водопроводной сети, утечка, регулятор давления, резервуар суточного регулирования

Рассмотрены вопросы зонирования и секторизации сетей водоснабжения, задачи регулирования давлений, что повышает степень управляемости сети. Предлагаются также различные методы выявления утечки воды, которые позволяют снизить уровень потребления воды в зонах. Продолжительное применение этих действий в процессе эксплуатации позволит сократить недопустимый уровень утечки воды.

MAIN DETECTION PRINCIPLES OF LOSSES IN WATER SUPPLY NETWORK

A.A. Sahakyan

National University of Architecture and Construction of Armenia

Keywords: zoning of water supply network, loss, pressure regulator, sectorization, daily regulatory reservoir

The issues related to the zoning of water supply network, sectorization, and pressure regulation are discussed that increase manageability and reliability of network. Various water loss detection methods are given to reduce water consumption level in the zones. Continuous application of those activities in the exploitation process will minimize unacceptable amount of water loss.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **FICHTNER JEN** Consult. <Երևանի Ջրմուղ-Կոյուղում Մասնավոր հատվածի մասնակցության նախապատրաստման ծրագիր> I փուլի հաշվետվություն. – Երևան, - 2004. -251 էջ:
2. **СНиП 2.04.02-84***. Госстрой России, М. 1997, - 128с.
3. **A.UTILITY** a Company of the ACEA group. <Ելակետային տվյալների տարվա Հաշվետվություն>. - Երևան, 2001. - 55էջ:
4. **Երևանի** <Ջրմուղ-Կոյուղի ընկերություն, Ջրամատակարարման բաշխիչ համակարգում հոսակորուստների կրճատում շահագործման ձեռնարկ. - Երևան, 2006. - 63 էջ:

Ներկայացվել է՝ 16.02.2015թ.
Ընդունվել է տպագրության՝ 20.04.2015թ.

ՀՏԴ 502.51:479.25

ՈՂՋԻ ԳԵՏԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

Ք.Ս. Սահակյան, Ն.Խ. Եղիազարյան

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան

Առանցքային բառեր. Ողջի գետ, ջրի աղտոտվածություն, հանքարդյունաբերություն, ծանր մետաղներ, համալիր գնահատում

Դիտարկվում է Ողջի գետի էկոհամակարգի վրա հանքարդյունաբերական գործունեության ազդեցությունը: Ջրի աղտոտվածության համալիր գնահատման մեթոդի կիրառմամբ իրականացվել է Ողջի գետի էկոլոգիական վիճակի գնահատում, որի համար հիմք են հանդիսացել Ողջի գետի վերաբերյալ 2006-2012 թթ. պաշտոնական տվյալները: Ջրի աղտոտվածության համալիր գնահատման այս մեթոդը հնարավորություն է տալիս ջրի քիմիական բաղադրության անալիտիկ տվյալները ձևափոխել հարաբերական ցուցանիշների և համալիր գնահատել ջրահոսքի աղտոտվածության մակարդակն ու ջրի որակը:

Սյունիքի մարզի հիմնական ջրային զարկերակը Ողջի գետն է՝ իր մշտական և ժամանակավոր վտակներով: Գետը սկիզբ է առնում Կապուտջուղ և Եղասար սարերի լանջերից: Այն տիպիկ լեռնային գետ է, հոսքի մեծ արագությամբ և բազմաթիվ մանր վտակներով, որոնք լեռնային առվակներ են: Ողջի գետն Արաքս գետի ձախափնյա վտակն է, իր մեծությամբ Ջանգեզուրում երկրորդը՝ Որոտան գետից հետո: Մթնոլորտային տեղումների և գրունտային ջրերի հաշվին գետի սնուցումը խառն է, գերակշռում է հալոցքային սնուցումը (60...70%): Ողջի գետ են թափվում նաև ժամանակավոր ջրահոսք ունեցող զգալի քանակի վտակներ, որոնք իրենց հետ պարբերաբար բերում են սելավային բնույթի ջրաքարային հոսքեր [1]:

Ողջի գետի ավազանը սելավավտանգ է: Սելավային, տարափային վարարումները դիտվում են 5...10, իսկ աղետային վարարումները՝ 20...50 տարին մեկ պարբերականությամբ: Ողջի գետի ձախափնյա Արծվանիկ վտակի կիրճում տեղակայված է Ջանգեզուրի պղնձամուլիբդենային գործարանին պատկանող և ներկայումս գործող Արծվանիկի պոչամբարը՝ տեղակայված Ողջիի գետաբերանից մոտ 35 կմ հեռավորության վրա: Վտակի երկարությունը 17 կմ է, ջրահավաք մակերեսը՝ 48 կմ², միջին անկումը՝ 50%: 2006 թ. ապրիլից սկսած՝ Ջանգեզուրի պղնձամուլիբդենային գործարանի կողմից կատարվում է Ողջի գետի և արտադրական կեղտաջրեր ընդունող Խալաջ վտակի ջրերի բաղադրության ամենամսյա դիտանցում [2]:


Հանքավայրերի բաց և ստորգետնյա եղանակով շահագործումը բացասական ազդեցություն ունի ջրոլորտի և շրջակա միջավայրի վրա: Հանքավայրերի բաց եղանակով շահագործման ժամանակ առաջացած մակաբացման ապարները, որոնց քանակը մի քանի անգամ գերազանցում է օգտակար հանածոների պաշարներին, սովորաբար պարունակում է մեծ քանակությամբ մետաղներ, որոնցից լուծելի միացությունները ներթափանցում են ջրային ավազաններ: Լցակույտներում կուտակված ապարները ժամանակի ընթացքում օքսիդանում են՝ առաջ բերելով նոր խնդիրներ (օրինակ՝ սուլֆիդների օքսիդացումից ստացվում են ջրում լավ լուծվող սուլֆատներ): Հանքավայրերի հարստացման ժամանակ ջրոլորտին պատճառված վնասները մեծ են հատկապես արտակարգ իրավիճակների դեպքում [3]:

1 տ հանքաքարի հարստացման համար, կախված հարստացման սխեմայից, պահանջվում է 4...6 մ³ ջուր: Հարստացման փուլում ջուրն օգտագործվում է մանրացման, տեղափոխման և հարստացման համար, որտեղ լայնորեն կիրառվում են թթուներ, ցիանիդներ, աղեր, հիմքեր և խեժեր: Պոչամբարների զբաղեցրած տարածքները շատ հաճախ հասնում են հազարավոր հեկտարների՝ մեծ վտանգ ներկայացնելով շրջակա միջավայրի համար: Պոչամբարներում կուտակվում են ֆլոտացիոն տեխնոլոգիայով հարստացվող հանքաքարերի թափոնները, որոնք առաջանում են խիստ թունավոր քիմիական ազդանյութերի (реагенты) կիրառմամբ [3]: Մարդկային գործունեության ազդեցությունը բնական լանդշաֆտների վրա ներկայումս հասնում է ահռելի ծավալների և բացասաբար է անդրադառնում վերջիններիս որակական և

քանակական հատկությունների վրա: Բնական ռեսուրսների ինտենսիվ և անխնա օգտագործումը, դրանց կառավարման, մոնիտորինգի և որակի գնահատման մեխանիզմների բացակայությունն Էկոհամակարգերի տեխնաձին բեռնվածության մեծացման, որակի վատթարացման, իսկ առանձին դեպքերում նաև դրանց որակական սպառման պատճառ են հանդիսանում: Որոշ ծանր մետաղներ թեև արտանետման քանակական ծավալներով այնքան էլ մեծ չեն, սակայն առանձնահատուկ տեղ են գրավում իրենց բարձր թունածին ազդեցությամբ:

Արդյունաբերական արտադրության տարբեր ճյուղերի անընդհատ զարգացումն աղտոտում է հողային ծածկույթը և ջրոլորտը ծանր մետաղներով: վերջնական արդյունքում՝ հողը ենթարկելով վատթարացման: Ծանր մետաղների մեջ կան որոշ միկրոտարրեր, որոնք օրգանիզմների համար ունեն կենսական նշանակություն: Էկոհամակարգում դրանց ավելցուկային պարունակությունն ունենում է ճնշող, երբեմն էլ թունավոր ազդեցություն կենդանի օրգանիզմների վրա: Ծանր մետաղների թունավոր ազդեցությունը կենսաբանական համակարգերի վրա պայմանավորված է սպիտակուցների սուլֆիդիդրիլային խմբերի հեշտ միացման հետ, ինչով պայմանավորված՝ խախտվում է օրգանիզմի նյութափոխանակությունը:

Նյութ և մեթոդ: Ջրային օբյեկտների էկոլոգիական հետազոտության ոլորտում մեծ ուշադրություն է դարձվում ջրի որակի ինտեգրալ գնահատման միջոցների ստեղծման և օգտագործման խնդիրներին, որոնք ամբողջ ջրաքիմիական տեղեկատվությունը կենտրոնացնում են մեկ ընդհանուր համալիր արժեքի՝ ինդեքսի մեջ: Ջրի աղտոտվածության համալիր գնահատման այս մեթոդը հնարավորություն է տալիս ջրի քիմիական բաղադրության անալիտիկ տվյալները ձևափոխել հարաբերական ցուցանիշների և համալիր գնահատել ջրահոսքի աղտոտվածության մակարդակն ու ջրի որակը [4]: Ուսումնասիրությունների համար հիմք են հանդիսացել Ողջի գետի վերաբերյալ ՀՀ Բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված պաշտոնական տվյալները [5]: Անցկացվել է համեմատական վերլուծություն ՀՀ Բնապահպանության նախարարության կողմից ներկայացված 6 տարվա դիտարկումների միջև (նկ.):



Նկ. Ողջի գետի միջին կոնցենտրացիաների գերազանցումը ՄԹԿ-ից (պատիկը)

Գետի աղտոտվածության համալիր գնահատման համար որոշվել են ընդհանրացված գնահատվող բալի (ԸԳԲ) և ջրի աղտոտվածության տեսակարար կոմբինատոր ինդեքսի (ՋԱՏԿԻ) արժեքները: ԸԳԲ-ի և ՋԱՏԿԻ-ի որոշման համար նախ հաշվում են աղտոտվածության դեպքերի կրկնվողականությունը՝ α_i , որը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$\alpha_i = n_1 / n_2 \times 100 \% , \tag{1}$$

որտեղ n_1 -ն տվյալ դիտարկումում ուսումնասիրվող ժամանակահատվածի (տվյալ դեպքում՝ տարվա կտրվածքով) i-րդ ցուցանիշի այն արժեքների թիվն է, որոնք գերազանցում են ՄԹԿ-ն, n_2 -ն տվյալ դիտարկումում տարվա ընթացքում i-րդ ցուցանիշի արժեքների ընդհանուր թիվը (աղ.1):

Ըստ α_i -ի արժեքի տրվում է ջրի աղտոտվածության տևականությունը:

Աղտոտվածության համալիր գնահատման նպատակով կիրառվող տարեկան
ցուցանիշների արժեքները

Տարի Ցուցիչ	2006	2008	2009	2010	2011	2012
n_1	7	10	10	6	8	10
n_2	7	11	12	10	10	11
α_i , (%)	100	90.9	83,3	60	80	90,9

Այնուհետև, որոշվել է ՍԹԿ-ի գերազանցման պատիկության միջին արժեքը՝ β_i , որը հաշվարկվում է միայն փորձանմուշում ՍԹԿ-ն գերազանցող ցուցանիշների համար (հաշվարկը չի ներառում նորմերի սահմաններում դիտվող ցուցանիշներ) [4]:

$$P = \sum_{i=1}^n \frac{C_{ij}}{L_i}, \quad (2)$$

որտեղ՝ P-ն պատիկությունն է, C_{ij} -ն (աղ. 2) j-րդ փորձանմուշում i-րդ ցուցանիշի կոնցենտրացիան է, որը գերազանցել է ՍԹԿ-ն, L_i -ն i-րդ ցուցանիշի սահմանային թույլատրելի նորմը:

β_i -ն որոշվում է հետևյալ բանաձևով.

$$\beta_i = \frac{P}{n_1}, \quad (3)$$

Աղտոտվածության պատիկության ցուցանիշների արժեքներն ըստ տարիների

նշ արժեքն ըստ տարիների	2006, $n_i = 7$	2008, $n_i = 11$	2009, $n_i = 12$	2010, $n_i = 10$	2011, $n_i = 10$	2012, $n_i = 11$
Աղտոտիչի P պատիկությունը						
Նիտրիտ իոն	2,0	1,7	1,5	2,2	2,1	3,0
Քրոմ	132,0	2,0	-	-	-	2,3
Մանգան	16,0	25,3	15,2	-	15,7	19,2
Պղինձ	109,0	112,0	77,0	93,0	128,0	119,6
Ցինկ	13,0	12,2	9,3	7,4	12,6	10,8
Վանադիում	3,0	2,0	2,0	-	2,0	2,2
Ամոնիում իոն	1,3	2,0	1,3	1,2	-	2,3
Սուլֆատ իոն	-	1,4	1,3	1,4	2,1	1,6
Ալյումին	-	8,8	6,3	7,7	6,8	8,5
Սելեն	-	2,0	3,0	-	2,0	2,0

Աղտոտվածության դեպքերի կրկնողականության և ՍԹԿ-ն գերազանցման պատիկության միջին արժեքի միջոցով որոշվում են աղտոտվածության դեպքերի կրկնողականության մասնակի գնահատման S_{α_i} (աղ. 3), և ՍԹԿ-ն գերազանցման պատիկության մասնակի գնահատման S_{β_i} (աղ. 4) բալերը, որոնց միջոցով հաշվում են ԸԳԲ և ՋՍԿԻ արժեքները.

$$S = \sum_{i=1}^{N_j} \frac{S_{\alpha_i} \cdot S_{\beta_i}}{N}, \quad (4)$$

որտեղ ($S_{\alpha_i} \cdot S_{\beta_i}$) արտադրյալը տվյալ դիտակետի համար ջրի աղտոտվածության ընդհանրացված գնահատվող բալն (ԸԳԲ) է ըստ առանձին ցուցանիշների (ցույց է տալիս ուսումնասիրված աղտոտիչներից յուրաքանչյուրի ներդրման չափը ջրի ընդհանուր աղտոտվածության մեջ), S-ը՝ տվյալ դիտակետի համար ջրի աղտոտվածության տեսակարար կոմբինատոր ինդեքսը կամ ջրի աղտոտվածության համալիր գնահատականը, N-ը՝ գնահատման մեջ հաշվի առնվող ցուցանիշների թիվը: Աղ. 5-ում տրված է ՍԹԿ գերազանցման պատիկության աստիճանը:

Աղյուսակ 3

Աղտոտվածության գնահատվող բալի արժեքներն ըստ տարիների

Տարի	2006	2008	2009	2010	2011	2012
Գնահատվող բալ						
S_{α_i}	100,00	90,9	83,3	60,0	80,0	90,9
S_{β_i}	39,47	15,4	99,6	11,29	17,13	15,4

Աղյուսակ 4

Գետի ջրի որակի դասակարգումն ըստ առանձին ջրաքիմիական ցուցանիշներով աղտոտվածության դեպքերի կրկնողականության

Աղտոտվածության դեպքերի կրկնողականություն,%	Ջրի աղտոտվածության բնույթ	Ընդհանրացված գնահատող բալ՝ ըստ կրկնողականության, $S_{\alpha i}$	Կրկնողականության արժեքի 1% բաժին ընկնող ընդհան-րացված գնահատող բալի մաս
[1, 10]	Հազվադեպ	[1, 2]	0,11
[10, 30]	Անկայուն	[2, 3]	0,05
[30, 50]	Կայուն	[3, 4]	0,05
[50, 100]	Բնութագրական	4	-

Աղյուսակ 5

Գետի ջրի որակի դասակարգումն ըստ առանձին ջրաքիմիական ցուցանիշներով ՍԹԿ գերազանցման պատիկության արժեքի

ՍԹԿ գերազանցման պատիկության արժեքը	Ջրի աղտոտվածության մակարդակի բնույթը	Ընդհանրացված գնահատող բալ՝ ըստ ՍԹԿ գերազանցման պատիկության, $S_{\alpha i}$	ՍԹԿ գերազանցման պատիկության արժեքի 1%-ին բաժին ընկնող ընդհանրացված գնահատող բալի մաս
[1, 2]	Ցածր	[1, 2]	1,000
[2, 10]	Միջին	[2, 3]	0,125
[10, 50]	Բարձր	[3, 4]	0,025
[50, ∞)	Չափազանց բարձր	4	0,025

Եզրակացություն: Ողջի գետի ջրերի աղտոտվածության գնահատման նպատակով կատարված վերլուծությունը ցույց է տվել, որ Ողջի գետն ունի միջինից բարձր աղտոտվածություն, որում գերակայող աղտոտիչներն են՝ նիտրիտը, մանգանը, պղինձը, ցինկը, վանադիումը, քրոմը և սելենը: Գետի առավել աղտոտված հատվածն ընկած է Կապանի լեռնահարստացուցիչ կոմբինատից դեպի ներքև:

Առաջարկություն: Ուսումնասիրման արդյունքները հիմք են հանդիսացել հետևյալ առաջարկությունների համար.

- ենթահունային ջրընդունիչների կառուցում, որը թույլ կտա արտահոսած ջրերը հետագայում օգտագործել փոշենստեցման գործընթացում (որպես տեխնիկական ջուր),
- հանքարդյունաբերական ընկերությունների կողմից առավել արդյունավետ մեխանիզմների մշակում և կիրառում՝ ուղղված հանքուղիների չմաքրված ջրի արտահոսքի կանխմանը դեպի Ողջի գետ,
- ոլորտի ընկերություններում պղնձազերծման առավել արդյունավետ եղանակների մշակում և կիրառում,
- պետական լիազոր մարմինների կողմից էկոլոգիական անվտանգության պահանջների կատարմանն ուղղված հետևողական և անընդհատ վերահսկողական աշխատանքների իրականացում,
- պոչամբարների տարածքների կանաչապատում,
- Ողջի գետի ջրի աղտոտվածության և դրա հետևանքների վերաբերյալ ազդակիր բնակչության իրազեկության բարձրացում:

ЭКОЛОГИЧЕСКАЯ ОЦЕНКА РЕКИ ВОХЧИ

К.С. Саакян, Н.Х. Егиазарян

Национальный университет архитектуры и строительства Армении

Ключевые слова: река Вохчи, загрязнение воды, горная промышленность, тяжелые металлы, комплексная оценка

Рассмотрено влияние горнопромышленной деятельности на экосистему реки Вохчи. С применением метода комплексного анализа загрязненности воды была осуществлена оценка экологического состояния реки Вохчи, за основу которой были приняты официальные данные реки Вохчи 2006...2012гг. Метод комплексного анализа загрязненности воды дает возможность превратить аналитические данные химического состава воды в относительные показатели и комплексно оценить уровень загрязненности водного стока и качество воды.

ECOLOGICAL ASSESSMENT OF RIVER VOKHJI

Q.S. Sahakyan, N.Kh. Yeghiazaryan

National University of Architecture and Construction of Armenia

Keywords: river Vokhji, water pollution, mining industry, heavy metals, comprehensive assessment

The influence of mining industry activities on Vokhji River's ecosystem is discussed. The evaluation of the ecological situation of Vokhji River is done by water pollution assessment method based on 2006-2012 official data. Given comprehensive assessment method of water pollution enables to modify the analytical data of chemical composition of water into relative indices and complexly evaluate water pollution level as well as water quality.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մանասյան Մ.Գ., Գրիգորյան Ա.Թ., Պոտոսյան Ա.Հ. Սյունիքի մարզ (բնությունը, բնակչությունը, տնտեսությունը). - Երևան: ԵՊՀ հրատ., 2002. -55 էջ:
2. Թութունջյան Ա. Ա., Փիրումյան Գ. Պ. ՀՀ Սյունիքի մարզի գետերի ջրերի որակի և ինքնամաքման ընդունակության գնահատում /Գորիսի պետ. համալս. միջազգ. գիտաժող. աշխ. ժող.- Գորիս, 2011. -254-259 էջ:
3. Ներսեսյան Ս.Ս. Բնապահպանական հարցերն ընդերքօգտագործման ոլորտում: Մեթոդ. ձեռնարկ /ԵՊՀ. – Երևան, ԵՊՀ հրատ., 2013. – 48 էջ :
4. Մարգարյան Լ.Ա., Փիրումյան Գ. Պ. Մակերևույթային ջրերի որակի համալիր որոշման ինդեքսային և էլեկտրոնային մոդելներ – Երևան, 2011.- 39 էջ:
5. «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ՝ <http://www.armmonitoring.am/>:

Ներկայացվել է՝

02.03.2015 թ.

Ընդունվել է տպագրության՝

20.04.2015 թ.

ՀՏԴ 626;627

ՀԵՂՈՒԿԱՏԱՐ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԻ ՈՒՂԱԳԻԾ ՏԵՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆ ՏԱՏԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵԶՐԱՅԻՆ ՏԱՐԲԵՐ ԱՄՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ

Հ.Ղ. Հարությունյան

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան

Առանցքային բառեր. *խողովակաշար, տատանումներ, սեփական հաճախություն, պտտման իներցիա*

Հեղուկատար խողովակաշարերի կայունությունը և տատանումները նկարագրող երևույթների մաթեմատիկական մեկնաբանությունները, կախված բազմազործոն պարամետրերից, արդիական են և գործնական կարևոր հետաքրքրություն են ներկայացնում: Երևույթի որակական և քանակական կողմերի նկարագրման համար իրականացվել է հետազոտություն, ուր հաշվի է առնվել նաև խողովակի լայնական սահքն ու պտտման իներցիան: Թվային օրինակներով, ամփոփված են խողովակաշարի տեղամասի տատանումները նկարագրող պարամետրերի փոփոխությունները: Կատարված են արդյունքների համեմատություններ:

Առաջին անգամ հեղուկատար խողովակաշարի ուղղաճիծ տեղամասի սեփական տատանումների խնդիրը դիտարկված է [1]-ում՝ հիմք ընդունելով ձողերի հաշվարկման տեսությունը: Հետագայում հեծանների լայնական ծռման դասական տեսության սահմաններում կատարվեցին համապատասխան ճշգրտումներ, իներցիոն ուժերի հաշվառման տեսանկյունից, որի արդյունքում խողովակաշարի տեղամասի տատանումները նկարագրող դիֆերենցիալ հավասարումը երկայնական ձգող S ուժի ազդեցության պայմաններում ներկայացվեց հետևյալ տեսքով [2-4]՝

$$EI_1 \frac{\partial^4 \eta}{\partial x^4} + (m_1 + m_2) \frac{\partial^2 \eta}{\partial t^2} + 2m_2 w \frac{\partial^2 \eta}{\partial x \partial t} + (m_2 w^2 - S) \frac{\partial^2 \eta}{\partial x^2} = 0, \quad (1)$$

որտեղ EI_1 -ը խողովակի ծռման կոշտությունն է, η -ն՝ ճկվածքը, t -ն՝ ժամանակը, m_1, m_2 -ը համապատասխանաբար, խողովակի և հեղուկի զանգվածներն են միավոր երկարության համար, w -ն՝ հեղուկի հոսքի արագությունը, S -ը երկայնական ուժը, որում կարող է ներառվել նաև հեղուկի ճնշման ուժը:

Խողովակաշարի ուղղաճիծ տեղամասի լայնական տատանումների դինամիկ կայունության հարցերին են նվիրված վերջին տարիներին կատարված հետազոտությունները [5-7]: [6]-[7]-ում աշխատանքներում դիտարկված են խողովակաշարի ուղղաճիծ տեղամասի սեփական տատանումների խնդիրները լայնական սահքի և պտտման իներցիայի հաշվառման պայմաններում, որոնք հատկապես բարձր կարգի տատանումների դեպքում, էական ազդեցություն են ունենում տատանման բնութագրերի վրա: Երկայնական ուժի ազդեցության դեպքում խողովակաշարի ուղղաճիծ տեղամասի շարժման դիֆերենցիալ հավասարումները կունենան հետևյալ տեսքը [7]՝

$$\frac{\partial^2 \eta}{\partial t^2} + \left[a_1 w^2 - b_1 \left(1 + \frac{kS}{GF_1} \right) \right] \frac{\partial^2 \eta}{\partial x^2} + 2a_1 w \frac{\partial^2 \eta}{\partial x \partial t} + b_1 \frac{\partial \theta}{\partial x} = 0, \quad (2)$$

$$\frac{\partial^2 \theta}{\partial x^2} - a_2 \frac{\partial^2 \theta}{\partial t^2} + b_2 \left(1 + \frac{kS}{GF_1} \right) \left(\frac{\partial \eta}{\partial x} - \theta \right) - C_2 \frac{\partial^3 \eta}{\partial x \partial t^2} = 0, \quad (3)$$

որտեղ $\eta(x,t)$ -ն ձկվածքն է, $\theta(x,t)$ -ն՝ լայնական հատույթի պտտման անկյան միջին արժեքը, G -ն՝ սահքի մոդուլը, k -ն՝ հատույթի ձևը բնութագրող գործակից է (բարակապատ խողովակի համար $k=2$): Մյուս նշանակումները նույնն են, ինչ որ կատարված է [7]-ում.

$$a_1 = m_2 / (m_1 + m_2), \quad b_1 = GF_1 / k(m_1 + m_2), \quad a_2 = m_1 / EF_1, \quad b_2 = GF_1 / kEI, \quad C_2 = m_2 I_2 / EF_2 I_1:$$

Այստեղ $F_1 I_1 - F_2 I_2$ -ը համապատասխանաբար խողովակի լայնական հատույթի և անցքի մակերեսներն ու իներցիոն մոմենտներն են:

Կիրառելով փոփոխականների անջատման հայտնի մեթոդը և ներմուծելով չափագուրկ պարամետրեր՝ ստացված հավասարումների լուծումները ներկայացնենք հետևյալ տեսքով.

$$\eta(x,t) = \bar{\eta}(\xi) e^{(\varepsilon+i\omega)At}, \quad \theta(x,t) = \bar{\theta}(\xi) e^{(\varepsilon+i\omega)At}, \quad x = \ell \xi, \quad (4)$$

որտեղ ℓ -ը խողովակի դիտարկվող տեղամասի բնութագրական երկարությունն է, $\bar{\eta}, \bar{\theta}$ -ն որոնելի ֆունկցիաներն են, կախված ξ - չափագուրկ պարամետրից, ω, ε -ը՝ տատանումների անչափ հաճախությունը և մարման պարամետրը, $A = \sqrt{EI_1 / (m_1 + m_2)} \ell^4$:

Համատեղ լուծելով (1)-(4) հավասարումները և կատարելով ոչ բարդ ձևափոխություններ՝ կստանանք.

$$\frac{d^4 \bar{\eta}}{d\xi^4} + (\beta^2 - \gamma^2 \frac{kS}{GF_1}) \frac{d^2 \bar{\eta}}{d\xi^2} + 2\beta\psi(\varepsilon+i\omega) \frac{d\bar{\eta}}{d\xi} + (\varepsilon+i\omega)^2 \bar{\eta} = 0, \quad (5)$$

$$\left. \begin{aligned} & [\beta^2 - \gamma^2 (1 + \frac{kS}{GF_1})] \frac{d^2 \bar{\eta}}{d\xi^2} + 2\beta\psi(\varepsilon+i\omega) \frac{d\bar{\eta}}{d\xi} + (\varepsilon+i\omega)^2 \bar{\eta} + \gamma^2 \frac{d\bar{\theta}}{d\xi} = 0, \\ & \frac{d^2 \bar{\theta}}{d\xi^2} + \gamma^2 (1 + \frac{kS}{GF_1}) (\frac{d\bar{\eta}}{d\xi} - \bar{\theta}) - \frac{1-\psi^2}{\lambda_1^2} (\varepsilon+i\omega)^2 \bar{\theta} + \frac{\psi^2}{\lambda_2^2} (\varepsilon+i\omega)^2 \frac{d\bar{\eta}}{d\xi} = 0, \end{aligned} \right\}, \quad (6)$$

որտեղ $\beta = w \sqrt{\frac{m_2 \lambda_1^2}{EF_1}}, \quad \psi = \sqrt{\frac{m_2}{m_1 + m_2}}, \quad \gamma = \sqrt{\frac{\lambda_1^2}{2(1+\mu)k}}, \quad \lambda_1 = \ell / \sqrt{I_1 / F_1}, \quad \lambda_2 = \ell / \sqrt{I_2 / F_2}, \quad \mu$ -ն Պուասոնի

գործակիցն է:

Ստացված հավասարումների գործնական կիրառության նպատակով դիտարկենք օրինակներ: Պարզության համար ընդունենք, որ դիտարկվող դեպքերում տեղի են ունենում հարմոնիկ տատանումներ ($\varepsilon=0$):

1. Եզրերով ազատ հենված խողովակ: Այս դեպքում (5) և (6) հավասարումների լուծումները ներկայացնենք հետևյալ տեսքով՝

$$\bar{\eta} = \alpha \sin \pi \xi, \quad \bar{\theta} = b \cos \pi \xi, \quad (0 \leq \xi \leq 1), \quad n = 1, 2, \dots, \quad (7)$$

որոնք բավարարում են խնդրի եզրային պայմաններին: (5) և (6) հավասարումներին բավարարող եզրային պայմաններն են՝

$$\text{երբ } \xi = 0 \text{ և } \xi = 1, \quad \bar{\eta} = 0, \quad \frac{d^2 \bar{\eta}}{d\xi^2} = 0,$$

$$\text{երբ } \xi = 0 \text{ և } \xi = 1, \quad \bar{\theta} = 0, \quad \frac{d\bar{\theta}}{d\xi} = 0:$$

Այնուհետև տեղադրելով $\bar{\eta}$ -ի արժեքը (7)- ից (5)-ի մեջ և կիրառելով Գալյորկինի մեթոդը, կստանանք տատանման n -րդ ձևին համապատասխանող անչափ հաճախությունը

$$\omega_n = \pi n \sqrt{\pi^2 n^2 \left(1 + \frac{S}{S_\varnothing n^2}\right) - \beta^2}, \quad (8)$$

որտեղ $S_\varnothing = \frac{\pi^2 EI_1}{\rho^2}$ -ն էյլերյան ուժն է:

Այս դեպքում հեղուկի հոսքի կրիտիկական արագությունը, որի դեպքում տեղի է ունենում կայունության կորուստ, կորոշվի հետևյալ բանաձևով՝

$$w_{kn} = \frac{\pi n}{\lambda_1} \sqrt{\frac{EF_1}{m_2}} \sqrt{1 + \frac{S}{S_\varnothing n^2}} \quad : \quad (9)$$

Այնուհետև, համատեղ լուծելով (6), (7)-ը և կրկին կիրառելով Գալյորկինի մեթոդը՝ կունենանք անչափ հաճախությունների որոշման հետևյալ հավասարումը.

$$\begin{aligned} & \frac{1-\psi^2}{\lambda_1^2} \omega^4 - \left\{ \pi^2 n^2 \left[1 + \left(\frac{1-\psi^2}{\lambda_1^2} \left(1 + \frac{S}{S_\varnothing \gamma^2} \right) + \frac{\psi^2}{\lambda_2^2} \right) \gamma^2 - \frac{1-\psi^2}{\lambda_1^2} \beta^2 \right] + \left(\gamma^2 + \frac{S}{S_\varnothing} \right) \right\} \omega^2 - \\ & - \pi^2 n^2 \left[\left(\pi^2 n^2 + \gamma^2 + \frac{S}{S_\varnothing} \right) \beta^2 - \pi^2 n^2 \left(\gamma^2 + \frac{S}{S_\varnothing} \right) - \gamma^2 \frac{S}{S_\varnothing} \right] = 0 : \end{aligned} \quad (10)$$

Ստացված հավասարման ազատ անդամի գրո լինելու պայմանից կորոշվի հեղուկի հոսքի կրիտիկական արագությունը, որը ոչ բարդ ձևափոխություններից հետո կբերվի հետևյալ տեսքի.

$$w_{kn}^* = \frac{\pi n}{\lambda_1} \sqrt{\frac{EF_1}{m_2}} \sqrt{\frac{1 + \left[\frac{1}{\gamma^2} + \frac{1}{n^2 \pi^2} \right] \frac{S}{S_\varnothing}}{1 + \frac{\pi^2 n^2}{\gamma^2} + \frac{S}{\gamma^2 S_\varnothing}}} \quad : \quad (11)$$

Կրիտիկական արագությունների համար ստացված (9) և (11) բանաձևերի համեմատությունից պարզվում է, որ սահքի դեֆորմացիայի և պտտման իներցիայի հաշվառման դեպքում կայունության կորուստը տեղի է ունենում ավելի փոքր արագությունների դեպքում:


Այդ համեմատությունը բերված է աղ.1-ում, որտեղից հետևում է, որ նշված տարբերությունն ավելի նկատելի է բարձր կարգի տատանումների դեպքում:

Աղյուսակ 1

Կրիտիկական արագությունների w_{kn}^* / w_{kn} հարաբերությունը


$\lambda_1 = 35$			
n	S/S \varnothing =-0.8	S/S \varnothing =0	S/S \varnothing =1
1	2,09954	0,97969	0,72692
2	1,20388	0,92546	0,83839
3	0,88833	0,85217	0,81345
4	0,79132	0,77375	0,75368
5	0,70860	0,69888	0,68746

Նկ. 1-3-ում բերված են տատանումների անչափ հաճախությունների փոփոխման գրաֆիկները, հեղուկի հոսքի անչափ արագության β պարամետրից կախված, տարբեր հարմոնիկների համար: Այստեղ նույնպես տարբերությունը մեծանում է բարձր կարգի տատանումների դեպքում:



Նկ. 1. Տատանումների հաճախությունների փոփոխման գրաֆիկները

($\lambda_1 = 35, \lambda_2 = \sqrt{2}\lambda_1, \psi = 0.7, S/S_0 = -0.8$). ———— - *նատական տեսությանը*, - - - - - *սահքի և պտտման իներցիայի հաշվառմամբ*



Նկ. 2. Տատանումների հաճախությունների փոփոխման գրաֆիկները


($\lambda_1 = 35, \lambda_2 = \sqrt{2}\lambda_1, \psi = 0.7, S/S_0 = 0$). ———— - *նատական տեսությանը*, - - - - - *սահքի և պտտման իներցիայի հաշվառմամբ*

2. Եզրերով ամրակցված խողովակ: Այս դեպքում համապատասխան լուծումները ներկայացնենք հետևյալ տեսքով՝

$$\bar{\eta} = a(1 - \cos 2\pi\xi), \quad \bar{\theta} = b \sin 2\pi\xi, \quad 0 \leq \xi \leq 1, \quad (n = 1, 2, \dots), \quad (12)$$

որոնք բավարարում են (5) և (6) հավասարումներին համապատասխանող հետևյալ եզրային պայմաններին.

$$\text{երբ } \xi = 0 \text{ և } \xi = 1, \quad \bar{\eta} = \frac{d\bar{\eta}}{d\xi} = 0, \quad \bar{\eta} = \bar{\theta} = 0:$$



Նկ. 3. Տատանումների հաճախությունների փոփոխման գրաֆիկները

($\lambda_1 = 35, \lambda_2 = \sqrt{2}\lambda_1, \psi = 0.7, S/S_3 = 1$). ————— - դասական տեսությամբ, - - - - - սահքի և պտտման իներցիայի հաշվառմամբ

Նախորդի նմանությամբ կատարելով նույն գործողությունները, դիտարկվող դեպքի համար n -րդ հարմոնիկին համապատասխանող անչափ հաճախությունը կորոշվի հետևյալ բանաձևով.

$$\omega_n = \frac{2}{\sqrt{3}} \pi \sqrt{4\pi^2 n^2 \left(1 + \frac{S}{S_3 n^2}\right) - \beta^2}, \quad (13)$$

որտեղ $S_3 = \frac{4\pi^2 EI_1}{\ell^2}$ -ը էյլեքյան ուժն է:

Հեղուկի հոսքի կրիտիկական արագության որոշման համար ունենում ենք հետևյալ բանաձևը.

$$w_{kn} = \frac{2\pi m}{\lambda_1} \sqrt{\frac{EF_1}{m_2}} \sqrt{1 + \frac{S}{S_3 n^2}}: \quad (14)$$

Այնուհետև, համատեղ լուծելով (6), (12)-ը և կիրառելով նույն գործողությունները՝ կունենանք անչափ հաճախությունների որոշման հետևյալ հավասարումը.

$$3 \frac{1-\psi^2}{\lambda_1^2} \omega^4 - \left\{ 4\pi^2 n^2 \left[\left(\frac{1-\psi^2}{\lambda_1^2} \left(1 + \frac{S}{S_3 \gamma^2} \right) + \frac{\psi^2}{\lambda_2^2} \right) \gamma^2 + 3 - \frac{1-\psi^2}{\lambda_1^2} \beta^2 \right] + 3 \left(\gamma^2 + \frac{S}{S_3} \right) \right\} \omega^2 - 4\pi^2 n^2 \left\{ \beta^2 \left(4\pi^2 n^2 + \gamma^2 + \frac{S}{S_3} \right) - 4\pi^2 n^2 \left(\gamma^2 + \frac{S}{S_3} \right) - \gamma^2 \frac{S}{S_3} \right\} = 0, \quad (15)$$


որտեղից ստացվում է նաև հեղուկի հոսքի կրիտիկական արագության որոշման բանաձևը.

$$w_n^* = \frac{2\pi m}{\lambda_1} \sqrt{\frac{EF_1}{m_2}} \sqrt{\frac{\left(1 + \frac{S}{S_3 n^2}\right) + \frac{4\pi^2}{\lambda_1^2} 2(1+\mu)k \frac{S}{S_3}}{1 + 4\pi^2 n^2 \frac{2(1+\mu)k}{\lambda_1^2} \left(1 + \frac{S}{S_3 n^2}\right)}}: \quad (16)$$

Այս դեպքում նույնպես կատարված են համեմատություններ, որոնք բերված են աղ. 2-ում և նկ. 4-6 -ում:


Կրիտիկական արագությունների w_{kn}^* / w_{kn} հարաբերությունը

$\lambda_1 = 35$			
n	$S/S_0 = -0.8$	$S/S_0 = 0$	$S/S_0 = 1$
1	0,56478	0,92546	0,90096
2	0,73610	0,77375	0,78552
3	0,59935	0,63142	0,65581
4	0,49206	0,52119	0,54845
5	0,41281	0,43897	0,46556




Նկ. 4. Տատանումների հաճախությունների փոփոխման գրաֆիկները

($\lambda_1 = 35, \lambda_2 = \sqrt{2}\lambda_1, \psi = 0.7, S / S_0 = -0.8$). ———— - դասական տեսությամբ, - - - - - սահքի և պտտման իներցիայի հաշվառմամբ



Նկ. 5. Տատանումների հաճախությունների փոփոխման գրաֆիկները

($\lambda_1 = 35, \lambda_2 = \sqrt{2}\lambda_1, \psi = 0.7, S / S_0 = 0$). ———— - դասական տեսությամբ, - - - - - սահքի և պտտման իներցիայի հաշվառմամբ



Նկ. 6. Տատանումների հաճախությունների փոփոխման գրաֆիկները

($\lambda_1 = 35, \lambda_2 = \sqrt{2}\lambda_1, \psi = 0.7, S/S_0 = 1$). ——— - դասական տեսությամբ, - - - - - սահքի և պտտման իներցիայի հաշվառմամբ

Կատարված հետազոտության արդյունքում հանգում ենք հետևյալ եզրակացությունների.

1. Սահքի և պտտման իներցիայի հաշվառման պարագայում խողովակի կայունության կորուստը տեղի է ունենում հեղուկի առավել փոքր արագությունների դեպքում:
2. Առանցքային սեղմող ուժի առկայության դեպքում, կախված խողովակի եզրերի ամրացման պայմաններից, երկարալիք տատանումների դեպքում ($n = 1, 2$) հնարավոր է հակառակ երևույթները (նկ 1.):
3. Խողովակի լայնական տատանումների հաճախականությունների արժեքների տարբերություններն ավելի մեծ են բարձր կարգի տատանումների դեպքում:

В настоящее время для населения с ограниченным достатком доходов преобладающими должны стать жилые дома социального типа средней этажности. Отметим, что, к сожалению, специально разработанных унифицированных проектов массовой застройки для этой категории населения нет, и поэтому в каждом конкретном случае реализуется индивидуальный проект, что, конечно, приводит к значительным отрицательным последствиям из-за того, что проектируется отдельными лицами без учета необходимых норм.




Рис. 5. Блок – секции серии 1А 450 и 451 приняты в массовом строительстве городов Армении

В настоящее время задача состоит в том, чтобы на основе накопленного опыта строительства и проектирования, с учетом современных подходов, осуществить строительство среднеэтажных жилых домов, которые при правильных экономических решениях будут доступны более широкому слою населения с ограниченными доходами, при этом дома должны быть наделены определенным комфортом при оптимальных показателях площадей квартир и снижении их стоимости [2,3].

Для широкого и массового внедрения рациональных и социально – доступных жилищ прежде всего необходимо иметь комплексные проекты застройки на свободных городских или пригородных территориях, стоимость освоения которых будет более низкой даже с учетом проведения инженерных компактных коммуникаций, стоимость которых довольно высока. Естественно, что все эти комплексные задачи невозможно решить путем использования принципов штучного проектирования, имеющего в основе негативные предпосылки однообразия, отсутствие индивидуализации облика и целый ряд других последствий, свойственных этому методу. Опыт показывает, что всё это невозможно осуществить без новых научно - обоснованных подходов, разработки новых методов и принципов проектирования, унифицированных серий проектов, в том числе с ограниченной номенклатурой и гибкими возможностями, основанными на их унификации, модификации и трансформативности, которые основаны на сочетании типового и индивидуального проектирования. Внедрение перечисленных подходов позволит совершенно по новому подойти к осуществлению поставленной задачи, глубже вникнуть в сущность архитектурных решений и, учитывая новые требования, найти самые оптимальные решение. Сочетание лучших достоинств типового и индивидуального проектирования нашло свое отражение в реализованном жилом квартале «Вагаршапат» в г. Эчмиадзине (рис. 6), (Госпремия Армении в области градостроительства 1981г.), Высшая премия Всесоюзного смотра достижений советской архитектуры за лучшие 10 работ 1975–1980 гг.), жилой квартал “Молодежный” и жилой район “Аван – Ариндж” в г. Ереване (дипломы республиканского смотра за “Лучшие постройки года”) [4].

По сравнению с тенденциями штучного проектирования эти прогрессивные подходы проектирования заставляют задуматься о современных методах проектирования, которые весьма далеки от развития массового строительства доступного жилища, разработанных новых решений важнейших социально – экономических

проблем. К сожалению, сегодня в Армении нельзя говорить о том, что жилые дома проектируются с учетом таких факторов, какими являются социальные требования, демография населения, структура жилого фонда, эстетические и функциональные проблемы, требования к жилищу, природно-климатические условия, градостроительные решения, конструктивные системы, инженерное оборудование зданий, строительные материалы. Немаловажно также отметить учет экономического фактора при проектировании жилых домов.




Рис. 6. Жилой квартал "ВАГАРШАПАТ" в г. Эчмиадзине, 1977 г.

В этой связи отметим реализацию застройки жилого социально – доступного квартала «Арцах» в г. Степанакерте, при которой были использованы проектные решения серии новых типов 4...5-ти этажных жилых домов. По всем типам домов, квартир и застройки квартала приведены технико – экономические показатели с разработкой каталога проектов. Работа по заказу министерства градостроительства НКР была выполнена в 2008 г. в научно – проектной мастерской при кафедре архитектурного проектирования и дизайна под руководством автора Гарри Рашидяна (рис. 7,8) [4]. При этом, в номинации на лучший проект года «Проект жилого квартала «Арцах» в г. Степанакерте был удостоен первой премии Министерства градостроительства РА 2009г. (автор Г. Рашидян, соавтор К. Мхитарян), а научно – проектные обоснования и методы проектирования были изданы в

виде отдельной книги "Новые формы социально – доступного жилища для условий НКР ", которая в 2012 г. была удостоена Президентской премии. Как в прошлом, так и в настоящем среднеэтажное строительство является наиболее приемлемым для решения проблем разработки и внедрения новых типов жилых домов социального типа, поскольку его реализация:




Рис. 7. Планировочная структура квартир в комплексе с застройкой первичного жилищного облика с распределительными застройками для отдыха

- наиболее экономична по строительным и эксплуатационным затратам,
- мало проблематична в конструктивном и технологическом отношении, особенно в условиях повышенной сейсмичности;
- легко и быстро возводима;
- не требует использования стационарных громоздких кранов;
- способствует осуществлению строительства небольшими стараниями, без ущерба для гигиенических качеств застройки;
- обеспечивает достаточно высокую плотность жилищного фонда и рациональное использование территории, особенно при застройке жилых комплексов и групповой застройке.

Проблема разработки и внедрения квартирных жилых домов средней этажности, являясь наиболее актуальной государственной и социально-экономической задачей, требует комплексного проектирования в виде серий проектов, сокращения номенклатуры, наделенных комбинаторскими качествами, модификации решений в зависимости от условий места строительства.



Րիս. 8. Жилой квартал "Арцах " в г. Степанакерте

Совершенно очевидным является и то, что это не прерогатива отдельных проектировщиков. Такую важную задачу невозможно решить без соответствующего патронража со стороны властных структур и организации проектирования, специалистов высокой профессиональной подготовки, способных решить эту проблему, опираясь на современные достижения науки и практики.

**ՄԻՋԻՆ ՀԱՐԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ՆՈՐ ՏԵՍԱԿԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆԱԽԱԴԲՅԱԼՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

Վ.Պ. Ոսկանյան

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան

Առանցքային բառեր. առանց վերելակի բնակարանային տեսակի տներ, սոցիալական և էլիտային տներ, միջին հարկայնության կառուցապատում, ցածրահարկ տներ

Քննարկվում է Հայաստանի Հանրապետության կարևորագույն և արդի թեմաներից մեկը՝ բնակարանային շինարարության զարգացումը: Նշված թեման և դրա ճարտարապետական մարմնավորումը, ինչպես նաև բնակչությանը հարմարավետ բնակարանով ապահովելը շարունակում են մնալ հանրապետության, երկրի և հասարակության կարևորագույն հիմնախնդիրներից մեկը: Ակնհայտ է, որ միջին հարկայնության բնակելի շենքերը չպետք է լինեն անցյալի փոքրամետրաժ բնակելի տների և բնակարանների նման, որոնց հիման վրա նախորդ դարի 50-60-ական թվականներին լուծվում էր բնակարանային խնդիրը:

Ինչ վերաբերում է բնակելի էլիտային տներին, որոնք ոչ այդքան վաղ Հայաստանի Հանրապետությունում ունեին լայն տարածում, ներկա պահին բնակչության ապահովված շերտի պահանջարկը դրանց նկատմամբ սպառվել է: Ընդ որում, սահմանափակ եկամուտներով բնակչության լայն շերտերը կարող են ապավինել միայն սոցիալ տեսակի խնայողական տների ձեռքբերմանը, առավել հասանելի, մատչելի և տնտեսական՝ ըստ շինարարական և շահագործման միջոցների ծախսումով, որին էլ նվիրված է սույն հոդվածը:

FORMATION FEATURES AND EXPLOITATION PREREQUISITES FOR THE NEW TYPES OF MID-RISE RESIDENTIAL HOUSES IN THE CONDITIONS OF THE REPUBLIC OF ARMENIA

V.P. Voskanyan

National University of Architecture and Construction of Armenia

Keywords: *apartment houses without elevators, social and elite houses, mid-rise apartment houses, low-rise public housing*

One of the most important and up-to-date topics for the development of housing construction in the Republic of Armenia is discussed hereby. Mentioned theme, its architectural embodiment, and also the problem of providing all the segments of population with the well-planned housing remains the most essential challenge of the republic, country and society. Obviously, mid-rise residential buildings should not be small-sized replica of houses and apartments of the past, based on which the housing problem of 50 - 60s of the last century was being solved.

As for elite houses, so popular in the RA recently, the demand of well-founded segments of the population for them has vanished at the moment. Meanwhile, wider layers of population with limited revenues can opt for the acquisition of handier, cheaper and more economical mid-rise houses of social type that require fewer expenses for their construction and exploitation.

ЛИТЕРАТУРА

1. Архитектурное проектирование жилых зданий/ **М. В. Лисициан, В. Л. Пашковский, З. В. Петунина** и др.; Под ред. М. В. Лисициан, Е. С. Пронина. - М.: Архитектура – С, 2006. - 488с.
2. **Рашидян Г. Г.** Развитие архитектуры массового жилища Армении и задачи современного этапа: монография. - Ереван: ЕрАСИ, 1999. - 87с.
3. **Давтян Г. Г.** Особенности формирования архитектурно – планировочных решений малоэтажных жилых домов для городской застройки повшенной плотности в условиях жарких районов Армении. Дисс. на соиск. уч. ст. канд. арх. - М., 1989. - 154с.
4. **Рашидян Г. Г.** Новые формы социально – доступного жилища для условий НКР: монография. - Ереван: ЕГУАС, 2009. - 95с.

Ներկայացվել է՝

18.03.2015 թ.

Ընդունվել է սպառնություն՝

27.04.2015 թ.

ՀՏԴ 351.713

«ԱՆՏՈՄՍ ՀԱՆԴԻՍԱՏԵՍ» ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ԴՐԱ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Ա.Ղ. Ասատրյան

Ճարտարարապետության և շինարարության Հյաստանի ազգային համալսարան

Առանցքային բառեր. հանրային բարիք, օպտիմալ ծավալ, հարկում, պատճառներ, մոդելներ

Ժամանակակից պետության տնտեսական գործունեության ամենացայտուն գործառնություններից է հանդիսանում հանրային բարիքների ստեղծումը: Դրա իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները ապահովվում են պետության եկամուտների՝ գլխավորապես հարկերի միջոցով: Հենց հարկերի հավաքագրման ժամանակ էլ ի հայտ են գալիս սուբյեկտներ, ովքեր ազատորեն օգտվում են ստեղծված հանրային բարիքներից՝ առանց դրանց դիմաց վճարելու, այսինքն խուսափում են հարկեր վճարելուց: Տվյալ երևույթը հայտնի է որպես «անտոմս հանդիսատես» հիմնախնդիր, որի էության և լուծման որոշ մոդելների բացահայտմանն է նվիրված սույն հոդվածը:


Մասնավոր բարիքի արտադրության ժամանակ անհատը հիմնվում է եկամուտների և ծախսերի վրա: Հանրային բարիքի արտադրության ժամանակ որոշել անհատի օգուտներն անհնար է, քանի որ բացակայում է տվյալ անհատի նախասիրությունների ու սպասելիքների մասին լիարժեք տեղեկատվությունը: Եվ պետության համար դժվար է բացահայտել՝ որքանով է արդյունավետ իրականացվել այս կամ այն հանրային բարիքի արտադրությունը: Օրինակ, ինչպես կարելի է որոշել ճանապարհներից օգտվելիս անհատական օգուտները կամ հանրային պաշտպանության շուկայական գինը: Հանրային բարիքների ֆինանսավորումն իրականացվում է հարկման միջոցով՝ մասնավոր բարիքների արտադրությունից գանձված միջոցների հաշվին:

Հանրային բարիքների օպտիմալ ծավալները: Տեսականորեն հնարավոր է կազմել հանրային բարիքների օպտիմալ ծավալների որոշման մոդել, որը հաշվի է առնում տնտեսության ծախսերը և սպառողների օգուտները: 1950-ական թթ. կեսերին այդպիսի մոդել է առաջարկվել Փ.Սամուելսոնի կողմից [1]: Այն հիմնված է Պարետո-օպտիմալի որոշման վրա, երբ հանրային բարիքի արտադրության համար առանձնացված միջոցները՝ ի հաշիվ մասնավոր բարիքների արտադրության ծավալների կրճատման, կբարձրացնեն հասարակության գոնե մի քանի անդամների բարեկեցությունը՝ առանց մյուսներիը նվազեցնելու: Այն հնարավոր կլինի, եթե հանրային բարիքի նկատմամբ պահանջարկի անհատական արժեքը մեծ լինի դրա արտադրության սահմանային արժեքից:

Նկ. 1-ում պատկերված են հանրային բարիքի սպառողների երկու կորեր՝ D_1 և D_2 , և շուկայական կորը՝ D_3 : Ի տարբերություն մասնավոր բարիքի շուկայական պահանջարկի կորի որոշման, որը որոշվում է անհատական կորերի հորիզոնական ամփոփմամբ, հանրային բարիքի շուկայական կորը ստացվում է անհատական կորերի նկատմամբ ուղղահայաց ուղղվածությամբ: Այս տարբերությունը բացատրվում է նրանով, որ առաջին դեպքում մրցակցային շուկայում գինը մշտական է, փոխվում է ծավալը, իսկ երկրորդ դեպքում փոխվում է գինը՝ հանրային բարիքի ծավալի ամրագրման շնորհիվ:

Հանրային բարիքի Պարետո-արդյունավետ ծավալը որոշվում է շուկայական պահանջարկի կորի (D_3) և հանրային բարիքի արտադրության սահմանային ծախսերի կորի հաստմից:

Հանրային բարիքի արտադրության ֆինանսավորումը շուկայական տնտեսության համար լուրջ մարտահրավեր է, քանզի բոլորը պահանջում են դրանց առկայությունը, իսկ վճարել դրանց համար՝ ոչ ոք չի ցանկանում:



Նկ. 1. Հանրային բարիքի Պարետո-օպտիմալ արտադրություն [2]

«Անտոմս հանդիսատես» հիմնախնդիրը և դրա պատճառները: Ժամանակակից միջազգային շուկայական տնտեսության համար լուրջ խնդիրներից է հարկերից խուսափելը: Վերջինիս դեմ պայքարն իրականացվում է նաև իրավական միջոցներով, սակայն որոշիչ հաջողություններ այդ հարցում դեռևս, չեն գրանցվել: Հարկումից զոյացած միջոցները պետությունն օգտագործում է հանրային բարիքների արտադրության համար, որոնցից օգտվում են բոլորը: Ստացվում է, որ ֆիրմաները, որոնք հարկեր չեն վճարել, հանրային հատվածի ծառայություններից օգտվում են անվճար, այսինքն՝ ի հայտ է գալիս «անտոմս հանդիսատես» հիմնախնդիրը (free-rider problem), երբ անհատը գիտակցաբար չի ցանկանում վճարել հանրային բարիքի դիմաց՝ ակնկալելով օգուտ ստանալ առանց վճարումների [3]: «Անտոմս հանդիսատեսի» երևույթը ընդունված է կապել հանրային բարիքի պահանջարկի չբացառվող բնույթի (տեխնիկապես հնարավոր չէ կամ շատ թանկ է բացառել ինչ-որ մեկին օգտվելու տվյալ բարիքից), ինչպես նաև նրանց ոչ մրցակցային կամ ոչ ընտրովի լինելու հետ (մեկ անհատի կողմից հանրային բարիքից օգտվելը չի կրճատում վերջինիս՝ մյուսների հասանելիք քանակը):

«Անտոմս հանդիսատես» հիմնախնդրի առաջացման պատճառները կարելի է բաժանել սուբյեկտիվ և օբյեկտիվ մասերի:

Սուբյեկտիվ պատճառներ-հանրային բարիքներում հարկատուների կողմից իրենց իրական նախապատվությունների թաքցնելը: Հանրային բարիքի ֆինանսավորման մասնակիցներին ձեռնտու է թաքցնել հանրային բարիքի անհրաժեշտությունն իրենց համար, որպեսզի քիչ վճարեն դրա դիմաց: Եթե սպառողների թիվը քիչ է, ապա իրավիճակը վերջիններիս խրախուսում է ազնիվ արտահայտելու իրենց նախասիրությունների մասին, քանի որ սխալ տեղեկատվությունը կարող է հանգեցնել բարիքի թերարտադրությանը: Եվ ընդհակառակը, սպառողների թվի աճը բերում է «նապաստակների» քանակի ավելացմանը, որոնք հույս ունեն, որ հանրային բարիքը կհասցվի՝ անկախ իրենց ներդրումից:

Օբյեկտիվ պատճառներ (I) - քաղաքացիների մոտ լիարժեք տեղեկատվության բացակայությունը, կապված առանձին հանրային բարիքի համար տեղեկատվության համար վճարման գանձման բարձր ծախսերի առկայության հետ: Օրինակ, անհատը, որը չի հետաքրքրվում երկրաբանությամբ, կարող է և չիմանալ, թե որքան արժի ուրանի արտադրությունը, որն ուղղվում է միջուկային ռումբի արտադրության համար: Այդ իսկ պատճառով նա կարող է անգիտակցաբար խեղաթյուրել իր պատկերացումները պետության պաշտպանական ծախսերի մասին:


Օբյեկտիվ պատճառներ (II) - պետության «սխալները» հանրային բարիքի արտադրության օպտիմալ ծավալի որոշման ժամանակ, որը գտնվում է պահանջարկի և հանրային բարիքի առա-

ջարկի հատման կետում: Սովորաբար հանրային բարիքի նկատմամբ պահանջարկն ուռճացված է լինում, այն մի քանի պատճառներով է տեղի ունենում.

- հանրային բարիքի սպառողների և դրա արտադրությունը ֆինանսավորող հարկատուների միջև անհամապատասխանությունը,
 - կարճաժամկետ հանրային բարիքների վերագնահատումը,
 - շուկայական մեխանիզմի թերությունների շտկման համար ավելորդ միջամտությունը,
 - հանրային բարիքի առաջարկի յուրահատկությունները,
 - հանրային բարիքի օպտիմալ ծավալի և որակի որոշման դժվարությունը,
 - արտադրողի մենաշնորհը,
 - արտադրողների մոտ սնանկության մեխանիզմների բացակայությունը:
- Կարելի է նկատել, որ օբյեկտիվ պատճառները (I) և (II)-ում հատվում են, քանի որ տեղեկատվության բացակայության հարցում հաճախ մեղավոր է պետությունը:

«Անտոմս հանդիսատես» հիմնախնդրի լուծման մեթոդներ: Տնտեսագիտության տեսության մեջ կան մի շարք մոդելներ, որոնցում փորձ է արվում առաջարկել «անտոմս հանդիսատես» հիմնախնդրի լուծման մեխանիզմ: Նկարագրենք դրանցից մի քանիսը.

- *Լինդալի մոդել* («կամավոր փոխանակման» մոդել)-առաջարկվել է 1919 թ. շվեդ տնտեսագետ Է.Լինդալի կողմից: Մոդելի կարևորությունը ապացուցվեց ավելի քան 40 տարի անց, երբ ապացուցվեց, որ Լինդալի հավասարակշռությունը հանդիսանում է Պարետոյի արդյունավետը: Մոդելի գրաֆիկական մեկնաբանումը բերված է նկ. 2-ում:



Նկ. 2. Լինդալի մոդելը

Նկ. 2-ում ներկայացված են հանրային բարիքի նկատմամբ A և B անհատների պահանջարկի կորերը (D_A) և (D_B): K կետում A անհատը ոչ մի ծախսեր չի կրում, փոխարենը անհրաժեշտ ծավալի 100%-ը ներդնում է B անհատը: Դեպի L կետը շարժվելիս A անհատի մասնաբաժինն աճում է, իսկ B անհատինը՝ նվազում այնքան, մինչ դառնում է 0: Այսինքն վերջինս օգտվում է հանրային բարիքից անվճար: O կետը, որն առաջանում է երկու կորերի հատումից, ներկայացնում է Լինդալի հավասարակշռության կետը: Հենց այս կետում է, որ երկու անհատների համար էլ հանրային բարիքի օգտակարությունը հավասար է հարկային արժեքին:

Լինդալի մոդելի սահմանափակումները հաղթահարելու համար Ջ.Մ. Կլարկի, Գրովսի և Ու. Վիկրիի կողմից ստեղծվել է մոդել, որը կոչվում է *Կլարկի հարկ* [4]: Մոդելի էությունն այն է, որ հարկատուներից յուրաքանչյուրին հարցնում են, թե որքանով է նա պատրաստ վճարել այս կամ օբյեկտի շինարարության համար: Կլարկի հարկից զատ յուրաքանչյուր հարկատու վճարում է հարկ, որը հավասար է հանրային բարիքի արժեքը՝ բաժանած բնակիչների թվի վրա: Այս հարկը ոչ մի կերպ կախված չէ անհատի վարքից և այդ պատճառով էլ այն քննարկվող հարցի շրջանակներում հետաքրքրություն չի ներկայացնում: Օրինակ, առաջին և երկրորդ հարկատուները կնախընտրեին, որ պետությունը կառուցի նոր կամուրջ:

Երրորդ հարկատուն ավելի շատ հետաքրքրված է հեռախոսակայանի թարմացմամբ: Յուրաքանչյուր մասնակցի համար օգտակարության բաշխումը կարելի է ներկայացնել աղյուսակի տեսքով:

Աղյուսակից երևում է, որ պետությունը նոր միջոցներ կհատկացնի նոր կամրջի շինարարության համար: Այդ դեպքում Կլարկի հարկն առաջին հարկատուի համար հավասար կլինի 200 –150 = 50 միավորի (միջոցների արժեքը, որը կփոխեր բոլոր հարկատուների համախառն բարեկեցությունը՝ առաջինի ընտրությանը չմասնակցելու դեպքում): Այստեղից կարելի է համարել, որ Կլարկի հարկը խրախուսում է արդարությունը, քանի որ սեփական նախասիրություններում սխալվելու արդյունքում անհատը ռիսկի է դիմում, որ նախագիծը, որում ինքը հետաքրքրված էր, չի իրագործվի:

Աղյուսակ

Հարկատու	Կամուրջ	Հեռախոսակայան	Կլարկի հարկ
1	100	0	50
2	150	0	100
3	0	200	0
Ընդհանուր շահույթը	250	200	-

Մեկ այլ ուղով է գնացել ամերիկյան տնտեսագետ Մ. Սեսնովիցը, իսկ հետագայում Գ. Բեկկերը 1972թ. վերանայեց մոդելը, որն անվանվեց «բանական գողեր» (*«рациональные воры»*): Մոդելի հիմնական էությունն այն է, որ այնպիսի հանրային բարիքի ապահովումը, ինչպիսին է օրինապահությունը, պետք է լինի «հակաբարիք»-ի միջոցով, ինչպիսին է պատիժը: Մ.Սեսնովիցն իր «Եկամուտ՝ կոտորելով գողությունից» (*«Доход от кражи со взломом»*) աշխատությունում փորձել է բանաձևի միջոցով արտահայտել հանցագործի մաքուր եկամուտը՝ կախված տարբեր գործոններից:

$$R = (1 - p)S + p(S - D) = S - pD,$$

որտեղ R -ը կողոպտիչի եկամուտն է, p -ն՝ հավանականությունը, որ գողը կբռնվի և կպատժվի, S -ը՝ գողության մեծությունը, D -ն՝ կողոպտիչի կորուստների դրամական մեծությունը, որը նա կրում է պատժի արդյունքում:

Փոփոխականների որոշակի հաշվարկի դեպքում «անտոմս հանդիսատես» հիմնախնդրի լուծման համար գլխավորն այն բանի հավանականության ճիշտ ընտրությունն է, որ գողը կբռնվի (p) և պատժի արդյունքում կկրի կորուստների որոշակի մեծություն (D): Որքան մեծ են p և D փոփոխականները այնքան հանցագործության եկամտաբերությունը ցածր է, հետևաբար, այնքան քիչ մարդիք կընտրեն հանցագործի «կարիերան»:

Կան մի շարք այլ մոդելներ ևս, որոնք փորձում են գտնել «անտոմս հանդիսատես» հիմնախնդրի լուծման ուղիները: Դրանցից են՝ Մ. Օլսոնի «Ընտրովի խրախուսման հայեցակարգը», Մ. Ալլինգհամի և Ա. Սանդոյի «Հարկատուի բանական ընտրությունը», Լ. Ֆիլիպսի, Գ. Վոտի-կրոստերի և Կ. Էսկրիջի «Օպտիմալացնող խուզարկողները» և այլ մոդելներ:

СУЩНОСТЬ ПРОБЛЕМЫ «БЕЗБИЛЕТНИКА» И ПОИСКИ ЕЕ РЕШЕНИЯ

А.Г. Асатрян

Национальный университет архитектуры и строительства Армении

Ключевые слова: общественное благо, оптимальный объем, налогообложение, причины, модели

Одной из наиболее ярких черт экономической деятельности современного государства - создание общественных благ. Финансовые ресурсы, необходимые для реализации этого, обеспечиваются с помощью государственных доходов, в основном, за счет налогов. При сборе налогов выявляются субъекты, которые свободно пользуются общественными благами, но не платят за них, т.е. уклоняются от

уплаты налогов. Это явление известно, как «проблема безбилетника». Рассматриваются сущность указанной проблемы и модели ее решения.

"FREE - RIDERS" PROBLEM AND THE WAYS FOR ITS SOLUTION

A.G. Asatryan

National University of Architecture and Construction of Armenia

Keywords: *public good, optimal amount, taxation, reasons, models*

The most striking feature of the economic activity of a modern state is the creation of public good. Financial resources required for the realization are obtained by the means of public revenues, and especially taxation. During the tax collection process subjects appear who freely utilize public good without paying their taxes. This phenomenon is known as the "free-rider problem" the essence and several solution models of which are being revealed hereby.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. <http://www.mirecon.susu.ac.ru/library/micro/gl46raz2.html>
2. **Фролова Н.Л.** Общественные блага: сущность и проблема эффективного предоставления // Вест. МГУ. Экономика. – 2001. Сер. 6. – С 21-22.
3. https://ru.wikipedia.org/wiki/Эффект_безбилетника
4. **Вэриан Х.Р.** Микроэкономика. Промежуточный уровень. Современный подход / Пер. с англ. – М., 1997. - 681 с.

Ներկայացվել է՝

02.04.2015 թ.

Ընդունվել է տպագրության՝

27.04.2015 թ.

ՀՏԴ 331.56

**ՀՀ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ**

Զ.Զ. Մանվելյան, Ա.Ռ. Անդրեասյան

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան

***Առանցքային բառեր.** զբաղվածություն, գործազրկություն, շուկա, աշխատանք, բնակչություն*

Հետազոտվել է զբաղվածության և գործազրկության սոցիալ-տնտեսական բնույթը: Դիտարկված են մի շարք երկրների գործազրկության ցուցանիշների առանձնահատկությունները և կիրառվող հաղթահարման ուղիները: Վերլուծության է ենթարկվել ՀՀ թաքնված գործազրկության առաջացման պատճառները և հետևանքները: Հետազոտության հիման վրա առաջարկվում են հնարավոր տարբերակներ ՀՀ գործազրկության մակարդակի կրճատման համար:

Գործազրկությունը մակրոտնտեսական այն հիմնախնդիրն է, որն առավել անմիջականորեն ներգործում է յուրաքանչյուր մարդու վրա: Մարդկանց մեծամասնության համար աշխատանքի կորուստը նշանակում է կենսամակարդակի իջեցում, ինչն առաջ է բերում լուրջ հոգեբանական ցնցումներ: Այդ պատճառով գործազրկության հիմնահարցը հաճախ դառնում է քաղաքական բանավեճերի առարկա: Գործազուրկները տնտեսապես ակտիվ բնակչության ժամանակավորապես չաշխատող մասն են: Համաձայն ՀՀ Օրենսգրքի 7-րդ հոդվածի՝ «Գործազուրկ համարվում են աշխատանքային տարիքի այն զբաղված քաղաքացիները, որոնք աշխատանք են փնտրում և որոնք չեն ստանում զբաղվածությամբ պայմանավորված եկամուտ: Իսկ նրանք, ովքեր ունեն աշխատանք կամ զբաղված են ոչ լրիվ աշխատանքային օրվա ընթացքում, մտնում են զբաղվածների կատեգորիայի մեջ» [1]:

Եթե մարդը կարողանար ցանկացած ժամանակ արագ աշխատանք գտնել, ապա աշխատանքի տեղավորման մակարդակը կլիներ շատ բարձր, իսկ գործազրկության մակարդակը կմոտենար զրոյին:

Մեր կողմից փորձ է արվել դիտարկել գործազրկության և զբաղվածության դինամիկան խոշոր երկրներում և վերլուծել կիրառվող հաղթահարման ուղիները:

Ինչպես հայտի է, Եվրոմիությունը դեռ այն տեղն է, որտեղ տնտեսագիտական և սոցիալական ինստիտուտները ապահովում են կյանքի ամենաբարձր մակարդակներից մեկը: Այս արժեքներն ինչ-որ չափով պահպանվում են ի շնորհիվ բարձր զարգացման մակարդակի, որը եվրոպացիների իդենտիֆիկացված կարևոր տարրն է և նրանց հպարտության աղբյուրը: Եթե համեմատենք տնտեսական հավասարությունը (համեմատությունը բնակչության 1 անձի ՀՆԱ-ն ամենաաղքատ և ամենահարուստ նահանգների միջև), ապա այն կազմում է՝ ԱՄՆ-ում 2:1, իսկ Եվրոխորհրդում՝ 6,5:1 [2]:

Ինչպես ցույց են տալիս դիտարկումները, 2013 թ. Չինաստանում գործազրկության մակարդակը կազմել է 4,1%: Նմանատիպ ցուցանիշ գրանցվել է 2011 և 2012 թթ. 4-րդ եռամսյակի վերջում երկրում գործազրկության մակարդակը, համեմատած 3-րդ եռամսյակից բարձրացել է 4,05%: Ընդհանուր առմամբ, անցյալ տարի Չինաստանի քաղաքներում բացված էր 13,1 մլն նոր աշխատատեղ և մոտավորապես 5,66 մլն մարդ կրկին համարվում են զբաղված: 12-րդ հնգամյակում (2011-2015 թթ.) կառավարության աշխատանքում առաջնային ուղղություններից մեկը հայտարարված է նոր աշխատատեղերի ստեղծումը: Այդ տարիներին երկրի իշխանություններն իրենց առջև դրել են խնդիր՝ պահպանել գործազրկության մակարդակը 5%- ի սահմաններում [3]:

2014 թ. գործազրկության մակարդակը ՀՀ-ում հասել է ռեկորդային՝ 19,35%: Դա վկայված է 2015 թ. գլոբալ զբաղվածության տենդենցներում, որը տպագրված է Աշխատանքի Միջազգային Կազմակերպության զեկույցում: Զեկույցում նշվում է, որ ընդհանուր առմամբ գործազրկության մակարդակը Եվրոպայի կենտրոնական և հարավ-արևելյան մասերում (երկրները, որոնք որ չեն մտնում Եվրոխորհրդ) ավելի

բարձր է, քան ԱՊՀ-ում, որտեղ միակ բացառությունն է Հայաստանը: Ըստ զեկույցի՝ գործազրկության մակարդակը 2013 թ. գրանցվել է 18,64% (ամենաբարձր ցուցանիշը ԱՊՀ-ում), որը 2014 թ. աճել է: Հարևան Վրաստանում 2014 թ. գործազրկության մակարդակը կազմել է 14,2%, Ադրբեջանում՝ 5,4%: Չեկույցում նշվում է, որ գործազրկության մակարդակը նույնպես բարձրացել է Թուրքիայում (9,92%) և Ռուսաստանում (մոտ 5,9%) [4]:

Ըստ ԱՄԿ-ի զեկույցի՝ գործազուրկների քանակը ամբողջ աշխարհում 2014 թ. աճել է մոտ 5 մլն-ով և կազմել է ավելի քան 202 մլն մարդ, իսկ գործազրկության մակարդակը հասել է մինչև 6%-ի: ՀՀ-ում գործազրկության մակարդակը շարունակում է ավելանալ, հատկապես երիտասարդության մեջ (13%) [5]:

Տնտեսագետները գործազրկությունը ուսումնասիրում են դրա պատճառները որոշելու, ինչպես նաև զբաղվածության վրա պետական քաղաքականության միջոցները կատարելագործելու համար: Գործազրկության պատճառները բազմազան են, նշենք դրանցից մի քանիսը.

- տնտեսության կառուցվածքային տեղաշարժերը, նոր տեխնոլոգիաների, սարքավորումների ներդրումն առաջ են բերում աշխատուժի հարաբերական ավելցուկ,
- տնտեսական անկումները և ճգնաժամերը ստիպում են ձեռնարկատերերին կրճատել իրենց բոլոր պահանջները, այդ թվում նաև աշխատանքային ռեսուրսների նկատմամբ,
- կառավարության և արհմիությունների վարած քաղաքականությունը: Աշխատավարձի վարձատրության ուղղությամբ աշխատավարձի նվազագույն մակարդակի բարձրացումը հանգեցնում է արտադրության ծախսերի ավելացմանը և դրանով իսկ նվազեցնում է աշխատանքային ռեսուրսների նկատմամբ պահանջարկը:

Բացի պաշտոնապես գրանցված գործազուրկներից, գոյություն ունի նաև թաքնված գործազրկություն, որը որոշվում է անուղղակի եղանակներով, որպես կանոն՝ փորձագիտական գնահատմամբ: Թաքնված գործազրկությունը բնորոշ է, մասնավորապես, մեր հանրապետությանը, քանզի պայմանավորված է աշխատաժամանակի մեծ կորստով, արտադրության ծավալների կրճատման ժամանակ աշխատողների ավելցուկային թվաքանակի պահպանմամբ, գյուղական բնակչության զգալի մասի թվացյալ ինքնազբաղվածությամբ: Թաքնված գործազուրկ են համարվում նաև նրանք, ովքեր, առանց դիմելու զբաղվածության ծառայություններին, ինքնուրույն են փնտրում աշխատանք: Վերլուծությունները ցույց տվեցին, որ ՀՀ-ում գոյություն ունի ոչ միայն ստվերային գործազրկություն, այլև ստվերային զբաղվածություն. ինչքան շատ է ստվերային տնտեսության մասը, այնքան շատ մարդիկ են աշխատում «ստվերում»:

Աղյուսակում ամփոփված են ՀՀ-ում 2013-2014 թթ. զբաղվածության և գործազրկության տվյալները:

Աղյուսակ

ՀՀ-ում 2013-2014 թթ. զբաղվածության և գործազրկության տվյալները

Մակարդակներ	Տարեթվեր	
	2013 թ., %	2014 թ., %
Զբաղվածության	51,9	50,1
Գործազրկության	18,64	19,35

Աղյուսակում արտացոլված տվյալները կարելի է բացատրել մի շարք հանգամանքներով: Նախ՝ Աշխատանքի Միջազգային Կազմակերպության մեթոդաբանությամբ գործազրկության մակարդակը հաշվարկելիս ներառված են հարկադիր արձակուրդները, որոնք չեն արտացոլվում պաշտոնական վիճակագրության մեջ: Երկրորդը՝ աշխատանք փնտրող և աշխատանքի անցնելուն պատրաստ ոչ բոլոր անձինք են, որ ցանկանում են գրանցվել զբաղվածության ծառայություններում, կապված ինչպես բյուրոկրատական քաշքշուկի, այնպես էլ դրա համար անհրաժեշտ փաստաթղթերի հավատարմագրման բարդությունների:

հետ: Իրական և պաշտոնապես գրանցված գործազրկության մակարդակների տարբերությունը կապված է նաև այն փաստի հետ, որ բնակչության մի մասը, որը Աշխատանքի Միջազգային Կազմակերպության մեթոդաբանությամբ վերաբերում է գործազուրկների կատեգորիային, անցումային պայմաններում կարողանում է ստանալ թաքնված եկամուտներ սովորաբար տնտեսությունից: Ընդ որում, այդ եկամուտները կարող են էապես գերազանցել գործազրկության նպաստներին: Նշենք, որ բնակչությունը հիմնականում զբաղվածության ծառայություն է դիմում ծայրահեղ դեպքերում, քանի որ առաջարկվող աշխատանքների ընտրանին շատ սահմանափակ է, իսկ նպաստների չափերը չնչին են: Հետևաբար, այնտեղ, որտեղ հեշտ է լինում աշխատանք գտնելն առանց զբաղվածության ծառայություն դիմելու, պաշտոնապես գրանցված և Միջազգային Կազմակերպության մեթոդաբանությամբ հաշվարկված գործազրկության մակարդակների միջև տարբերությունը մեծ է, իսկ այն տարածաշրջաններում, որտեղ առաջարկվող թափուր աշխատատեղերի շուկան սահմանափակ է, այդ տարբերությունը կլինի ավելի փոքր: Գործազրկության գնահատման հարցում Միջազգային Կազմակերպության մեթոդաբանության և պաշտոնական մարմինների տարբերությունը բացատրվում է նաև «գործազուրկ» հասկացության նկատմամբ մոտեցումների տարբերությամբ:

Բնակչության զբաղվածության քանակական բնութագրման նպատակով վիճակագրության մեջ կիրառվում են հստակ ցուցանիշներ, որոնցից են բնակչության զբաղվածության գործակիցը, աշխատանքային ռեսուրսների զբաղվածության գործակիցը, աշխատունակ տարիքում աշխատունակ բնակչության զբաղվածության գործակիցը, գործազրկության գործակիցը և այլն:

Ներկայացնելով գործազրկության ստանդարտ գործակիցը և հաշվի առնելով մեր հանրապետության աշխատանքի շուկայի առանձնահատկություններն ու գործազուրկների հաշվառման ձևերի տարբերությունները, մեր երկրում գործազրկության ստանդարտ գործակիցի հաշվարկման ժամանակ ավելի ճիշտ է գործազուրկների թվի փոխարեն օգտագործել չզբաղված բնակչության թիվը:

Հայաստանի Հանրապետությունում գործազրկության իրական մակարդակը հավանաբար անհնար է որոշել, քանի որ անհնար է հաշվարկել արտադրության դադարեցման հետ կապված հարկադիր արձակուրդները, արտադրական տարողությունների թերբեռնվածության պատճառով ոչ լրիվ աշխատանքային օրվա զբաղվածությունը, հարկադիր արտագաղթի մաշտաբները և այլն: Միաժամանակ, այս յուրահատկությունները չպետք է խոչընդոտ հանդիսանան աշխատանքի շուկայի ուսումնասիրության ժամանակակից մեթոդների մշակման համար:

Ինչպես նշում է «Ալտերնատիվա» վերլուծական կենտրոնի տնօրեն, տնտ. գիտ. դոկտ. Թ. Մանասերյանը, «Հայաստանում իրական գործազրկության մակարդակն ավելի բարձր է այն ցուցանիշներից, որը ներկայացրել է ազգային վիճակագրական ծառայությունը»: Ըստ Թ. Մանասերյանի՝ ձմռան ամիսներին գործազրկությունն անգամ կարող է հասնել մինչև 20% և ավելի, սակայն այդ մակարդակը չի հասնում 40%-ի, ինչպես պնդում են շատերը [4]:

Ինչպես հայտնի է, գործազրկության հաղթահարման ուղիները բաժանվում են երկու մասի՝ ուղղակի և անուղղակի.

- ուղղակի ճանապարհ՝ դա երկրի արտադրության վերականգնումն է և նոր աշխատատեղերի կազմակերպումը բոլոր տնտեսական ոլորտներում,

- անուղղակի ճանապարհ՝ վարչական կամ օրենսդրական զբաղվածության կանոնավորում: Դա նշանակում է.

- 1) վարձու աշխատողների իրավական պաշտպանության ապահովում,
- 2) զբաղվածության այլընտրանքային ձևերի օգտագործում: Բացի ձկուն և ոչ ավանդական զբաղվածության ձևերից, ապահովում է աշխատակիցների շահագործման օպտիմալ ռեժիմն ընտրելու հնարավորությունը, հարկավոր է օգտագործել նաև աշխարհի աշխատանքի փորձը «աշխատանքի աշխատատեղերի բաժանումը» (job sharing) և աշխատանքի բաշխումը (work sharing) ճիշտ ժամանակին և ճիշտ տեղում. այսօր դու ես աշխատում, իսկ վաղը՝ ես, դու՝ այնտեղ, ես՝ այստեղ,
- 3) գործազրկության համակարգի զարգացման ապահովագրում,

- զբաղվածության հատկացված ֆոնդի մասնաբաժնի ավելացում, որը թույլ կտա խթանել ձեռնարկությունների վերակազմավորումը,

- ապահովագրական սկզբունքների օգտագործումը, երբ ֆոնդի ստեղծմանը գործատուի հետ միաժամանակ մասնակցում է նաև հենց ինքը՝ աշխատուժը,

- գործազրկության հարմարեցումը շուկայի փոփոխվող պահանջներին, անցնելով պատրաստված մասնագիտական համակարգը, ելնելով եղած առավելագույն բազային որակավորումից,

- զբաղվածության ծառայության կենտրոնում գործազուրկների գրանցման գործընթացի հեշտացում:

Օրինակ, սոցիալական ապահովագրությունը Չինաստանում բաժանվում է 5 մասի՝ հիմնական թոշակատուների, բժշկական և գործազրկության ապահովագրական ֆոնդեր, նաև ապահովագրական ֆոնդեր, որոնք կապված են աշխատատեղերում առաջացած վնասվածքների հետ, հղիության և ծննդաբերության կապակցությամբ:

4. Ճգնաժամի ժամանակ հարկերի նվազեցումը փոքր ընկերությունների պահպանման համար: Օրինակ՝ ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբաման առաջարկեց նվազեցնել փոքր բիզնեսի հարկային բեռը, միևնույն ժամանակ գործատուներին մեկ տարով ազատել եկամտահարկի վճարումից և երաշխավորել իրենց հասանելիությունը կրեդիտներին: Ըստ նախագահի՝ 2015 թ. դա կբերի նոր աշխատատեղերի ստեղծմանը: Բացի դրանից, ԱՄՆ-ի նախագահը դիմել է Կոնգրեսին բարձրացնել փոքր բիզնեսի վարկերի սահմանաքանակը *2 մլն դոլարից* մինչև *5 մլն դոլար* [6]: Փոքր բիզնեսի ընկերակցությունը գործում է նաև Հայաստանում, թեպետ այդ միջոցներն ապահովվում են միայն վարկեր ներկայացնելով: Այդ հարկերի բեռի ուղղության իջեցումը պետք է օգտագործել նաև մեր երկրում:

5. Գործազրկությանը կնպաստի նաև մակարդակի շերտավորումը, կախված նրանից, թե ընտանիքում քանի երեխա և կախյալ կա:

Վերոնշյալ միջոցները չեն կարող լիովին լիկվիդացնել և զգալիորեն կրճատել ցիկլային գործազրկությունը: Այդպիսի արդյունք լինում է այդ դեպքում, երբ երկրում առկա է տնտեսական իրավիճակի բարելավում: Դրա համար պետք է գործի այնպիսի քաղաքականություն, որ երկրում պայքարը գործազրկության դեմ ուղղորդվի երկար ժամանակի ընթացքում, ապահովելով ոչ միայն բնակչության զբաղվածությունը, այլ նաև կայուն տնտեսական աճ:

ՀՀ-ում գործազրկության դեմ քաղաքականության թերացումը հետևյալն է՝ այն ունի կարճատև ուղղություն. հիմնականում տրամադրվում էր նպաստ և գործազուրկները զբաղվում են «ինչ-որ մի բանով»: Դրա համար հայկական աշխատանքի շուկայում նոր ակտիվ քաղաքականությունը պետք է անցկացվի համալիր կարգով, միանգամից մի քանի ուղղություններով և պետք է գործի երկարատև:

Զբաղվածության կարևոր ռազմավարական նպատակները պետք է լինեն՝ բարելավում, ելնելով զբաղվածության տնտեսական և սոցիալական արդյունավետության կառուցվածքի և ձևերի փոփոխություններից, ստեղծել պայմաններ մարդկային կապիտալի զարգացման համար, զբաղվածության ոլորտում տնտեսական հարաբերությունների բարելավումից:

ИССЛЕДОВАНИЕ ДИНАМИКИ ЗАНЯТОСТИ И БЕЗРАБОТИЦЫ В РА И ПУТИ ИХ ПРЕОДОЛЕНИЯ

3.3. Манвелян, А.Р. Андреасян

Национальный университет архитектуры и строительства Армении

Ключевые слова: *занятость, безработица, рынок, работа, население*

Исследован социально-экономический характер занятости и безработицы. Проанализированы различия особенностей показателей безработицы в ряде стран и применяемые пути ее преодоления. Исследованы причины и последствия скрытой безработицы в РА. На основе исследования, предложены возможные варианты сокращения уровня безработицы в РА.

**EMPLOYMENT AND UNEMPLOYMENT DYNAMICS ANALYSIS AND THE DEFEATING
WAYS IN THE REPUBLIC OF ARMENIA**

Z.Z. Manvelyan, A.R. Andreasyan

National University of Architecture and Construction of Armenia

Keywords: employment, unemployment, market, job, population

Socio-economic essence of employment and unemployment are examined hereby. The peculiarities of unemployment indicators and rehabilitation approaches of several countries were observed. Hidden unemployment reasons and their repercussions in the Republic of Armenia are analyzed as well. Possible solutions for the reduction of the RA unemployment are given based on current research.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Աշխատանքային Օրենսգիրք:
2. Денисенко М.Б., Хараевой О.А., Чудиновских О.С. Иммиграционная политика в Российской Федерации и странах Запада. – М., 2003. – Гл. – 4. – 34 с.
3. **Official website** of United Methodist Foundation, <http://www.umf.org/>.
4. **Official website** of United Methodist Foundation, <http://www.umf.org/>.
5. **Official website** of world bank, <http://www.worldbank.org/>.
6. **Official website** of world bank, <http://www.worldbank.org/>.
7. Бункина М.К. Макроэкономика: учебник. - М.: ДИС, 2002. - 320 с.
8. Грязнова А.Г. Макроэкономика. - М.: КНОРУС, 2008. - 688 с.

Ներկայացվել է՝

02.03.2015 թ.

Շնորհանվել է տպագրության՝

15.04.2015 թ.

ՀՏԴ 316.776.32

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄՆԵՐԻ ԴԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ա. Բեզարյան, Շ. Մարտիրոսյան

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան

Առանցքային բառեր. *հաղորդակցում, մենեջմենթ, ինֆորմացիա, պատճառականություն, կազմակերպություն, կազմակերպական գործընթաց*

Դիտարկվել է կազմակերպության գործընթացներում հաղորդակցումների և դրա մասնակից-սուբյեկտների դերն ու նշանակությունը: Ուսումնասիրվել են հաղորդակցային շարժը, կազմակերպական հաղորդակցումներն իրենց առանձնահատկություններով: Ուսումնասիրությունների արդյունքում կառուցվել է կազմակերպության արտաքին և ներքին միջավայրերում տեղի ունեցող հաղորդակցումների գծապատկերը և ցույց տրվել նրանց փոխկապվածությունը:

Մարդիկ անկախ մասնագիտությունից, սեռից, տարիքից և ազգային պատկանելիությունից առօրյայում շփվելով միմյանց հետ՝ փոխանակում են ինֆորմացիա: Ոմանք բանավոր, ոմանք էլ գրավոր արտահայտում են այն միտքը կամ տալիս ինֆորմացիան, որը դիմացինը ցանկանում է լսել կամ հաղորդակցվողը ցանկանում է փոխանցել: Մրան կարող է հետևել նաև պատասխան «հարվածը»: Այս ամբողջ գործընթացն անվանվում է մեկ բառով՝ հաղորդակցում: Այն ամենուր է և հանդիսանում է մարդկային հարաբերությունների հիմնական շարժիչ ուժը. բոլոր այն դիմաշարժերը, ժեստերը, սիմվոլները, ձայնի հնչերանգը և բառերն ու արտահայտությունները, որ մենք օգտագործում ենք շփվելիս, դրանք բոլորը հաղորդակցման միջոցներ են:

Հաղորդակցումը սահմանվում է որպես մի գործընթաց, որի ընթացքում երկու կամ ավելի մարդիկ փոխանակվում են ինֆորմացիայով և վերլուծում ստացածը [1]: Այս գործընթացի նպատակն է որոշակի վարքի նկատմամբ պատճառականության դրսևորումը կամ նրա վրա ազդեցությունը: Մակայն ինֆորմացիայի փոխանակումն հենց իրենով չի երաշխավորում փոխանակման կողմերի մասնակիցների՝ իրար հասկանալու և հաղորդակցման արդյունավետ շփում [2]: Տեղեկատվության փոխանակում տեղի է ունենում միայն այն դեպքում, երբ մի կողմն առաջարկում է ինֆորմացիա, իսկ մյուսն ընդունում է այն: Այդ պատճառով արդյունավետ հաղորդակցումները կողմերից յուրաքանչյուրից պահանջում են հաղորդակցման որոշակի ունակություններ, կարողություններ և փոխըմբռնում: Հաղորդակցումը կազմակերպությունների արդյունավետ գործունեության բաղկացուցիչ տարրն է:

Շատ կազմակերպությունների մենեջերներ կարծում են, որ հաղորդակցման գործընթացն իրենից ոչ մի դժվարություն չի ներկայացնում: Իրենք աշխատողները նույնպես համոզված են դրանում, քանի որ մտածում են, որ եթե կա հստակ դրված նպատակ և դրան հասնելու եղանակներ, ապա հաղորդակցումն այստեղ ոչ մի կապ չունի: Սակայն թե՛ մենեջերները, թե՛ աշխատողները մոռանում են, որ հաղորդակցումը բացի տեղեկատվության փոխանցման միջոց հանդիսանալուց, այն նաև պատճառականության գործիք է, որը կարող է կիրառվել՝ աշխատանքն ավելի արդյունավետ դարձնելու, ինչպես նաև կազմակերպության ներսում աշխատողների միջև սերտ աշխատանքային կապեր ստեղծելու համար:

Ներկայացնենք հաղորդակցման գործընթացը, բաղկացուցիչ տարրերն ու մասնակիցներին: Ուղարկողն այն անձն է, ով ցանկանում է իր գաղափարն ու սկզբունքները հաղորդել այլ մարդկանց, փնտրել տեղեկատվություն: Նա պետք է կողմնորոշի իր հղումը՝ ընտրելով սիմվոլներ, որոնցից կազմված կլինի իր հաղորդագրությունը: Այն փոխանցվում է որոշակի ուղիների միջոցով, որոնցով հաղորդագրությունը հասնում է ստացողին, վերջինս կողմնորոշվում է հաղորդագրությունում առկա սիմվոլները և իր համար որոշում դրանց նշանակությունը [3]: Այն դեպքում, երբ ստացողն արձագանքում է ուղարկողի հաղորդագրությանը պատասխան հաղորդագրությամբ՝ առաջանում է հետադարձ կապ: Այն ժամանակ, երբ հաղորդակցման ուղիներով տեղեկատվ-


վությունը փոխանցվում է ստացողին, իսկ նա կողագերծելուց հետո հետ է ուղարկում այն, տեղի են ունենում «խափանումներ», որոնք կարող են ազդել հաղորդակցության որակի վրա:

Հաղորդակցումը մեծ ազդեցություն ունի ինչպես կազմակերպության ներսում մարդկային հարաբերությունների, այնպես էլ կազմակերպության գործունեության վրա: Հաղորդակցման սուբյեկտներ հանդիսանում են կազմակերպության աշխատողները, իսկ քանի որ աշխատանքում հաղորդակցումը կազմակերպության գործունեության իրականացման և կարգավորման միջոց է հանդիսանում՝ անհրաժեշտ է տեղեկատվությունն առանց «խափանումների» աշխատողներին և մենեջերներին հասցնել, որպեսզի կազմակերպությունը տնտեսական վնասներ չկրի կամ դա չանդրադառնա աշխատանքային մթնոլորտի վրա:

Մարդկանց հաղորդակցային անհատական հատկանիշները ևս կարևոր են: Դրանցից կարելի է առանձնացնել լսելու կարողությունը, որը տարածվում է ինչպես ենթակայների, այնպես էլ մենեջերների ու մատակարարների վրա: Լսելու կարողություն ասելով հասկանում ենք հաղորդագրությունն ընդունելու այն ունակությունը, որոնցով մենք հստակ առանձնացնում ենք նրանում եղած փաստերն ու զգացողությունները և ճիշտ ընկալում դրանց իմաստը: Միայն այդ դեպքում կարելի է ճիշտ պատասխանել տրված հարցին կամ հաղորդագրությանը (լսելը կազմում է արդյունավետ հաղորդակցման 75%-ը, ընդ որում մարդկանց մեծ մասը դրա վրա ծախսում է ժամանակի ընդամենը 30-40%-ը): Հաղորդակցային անհատական հատկանիշներն առավել կարևորվում են նպատակների սահմանման ժամանակ, քանի որ դրանք ենթադրում են որոշակի գործողությունների սկիզբ և անհրաժեշտ է ուշադիր լինել աշխատանքային առաջադրանքների, ցուցումների և այլ կարգադրությունների նկատմամբ: Նպատակը կազմակերպության ապագայում ցանկալի վիճակն է, հետևաբար աշխատող-ղեկավար (ներքին), և կազմակերպություն-մատակարար (արտաքին) կապը պետք է հնարավորինս արդյունավետ կազմակերպվի՝ նյութական, ժամանակային և ֆինանսական վնասներ չկրելու համար:

Հաղորդակցման գործընթացը կազմակերպության աշխատողներին ավելի հասանելի դարձնելու նպատակով կառուցվում է այդ գործընթացի ցանցը, որի միջոցով տրվում են բոլոր այն հանձնարարությունները, խնդիրները, որ դրել է նրանց առջև ղեկավարությունը և վերջինս նույն ցանցի միջոցով ստանում է այն պատասխանները, լուծումները, առաջարկները, որոնք կատարվել են աշխատողների կողմից:

Նկ. 1-ում ներկայացված է կազմակերպական հաղորդակցում, որն անընդհատ կրկնվող գործընթաց է, ինչպես նաև հաղորդակցման գործընթացի ցանցի օրինակ: Կազմակերպություն արտաքին միջավայրից «մուտք» է գործում տեղեկատվությունը՝ օրենսդրական ակտերի, նորմերի կամ արտաքին միջավայրի այլ գործոնների մասին տեղեկատվության տարբեր ձևերով, իսկ կազմակերպության ներսում, հաղորդակցային ուղիների միջոցով փոխարկվելով մի տեսակից մյուսին, դուրս է գալիս արտաքին միջավայր՝ այս դեպքում դեպի սպառողական հաղորդակցում, որտեղից ինֆորմացիան փոխարկվելով ու հարստացվելով, շարունակում է ճանապարհը:




Նկ. 1 Հաղորդակցման շարժ

Այսպես շարունակաբար ընթանում է կազմակերպության ընթացիկ գործունեությունն ապահովող հաղորդակցման գործընթացը: Տեղեկատվության տարածման միջոցներ հանդիսացող տեղեկատվական տեխնոլոգիաները նպաստում են հաղորդակցային գործընթացի ավելի արագ ու արդյունավետ կազմակերպմանը:

Հաղորդակցման տեսակին հարմար ուղիների ընտրությունը կախված է նրանից, թե ինչ ճանապարհով ենք կազմակերպության ներսում և նրա սահմաններից դուրս հաղորդագրությունը փոխանցում՝ վերինց ներքև, ներքինց վերև, թե հորիզոնական: Այսինքն, կախված ուղղությունից, կփոխվի հաղորդակցային ուղիներով անցնող հաղորդագրության բովանդակությունը:

Այսպիսով, դիտարկելով կազմակերպության արտաքին և ներքին միջավայրը, նրանում տեղի ունեցող ինֆորմացիայի շարժը և հաղորդակցման ուղիները, կարելի է ներկայացնել կազմակերպական հաղորդակցումները (նկ. 2):



Նկ. 2. Կազմակերպական հաղորդակցում

Ներքև իջնող հաղորդակցումները դրանք այն հաղորդագրություններն են, որոնք ուղարկվում են ղեկավարների կողմից իրենց ենթականերին: Հաղորդակցման հետևյալ ուղղով անցնող հաղորդագրությունները հիմնականում լինում են.

- նպատակների և ռազմավարության ներդնում: Մենեջերների կամ կազմակերպության ղեկավար օղակների կողմից ռազմավարության կամ նպատակների հստակեցումը բերում են աշխատողների կողմից դրանց հստակ բաշխմանն ու կատարմանը,
- պաշտոնի հետ կապված հանձնարարություններ և հրահանգներ: Մրանք որոշակի աշխատանքների կատարման և կազմակերպության գործունեության մնացած տեսակների հետ դրանց փոխադարձ կապի մասին ուղեցույցներ են,

- ընթացակարգեր և տարատեսակ կանոններ: Այս տիպի հաղորդագրություններում նկարագրվում են կազմակերպության քաղաքականությունը, կանոնները, օրենքները, նորմերը և կառուցվածքը,
- գործունեության արդյունքների հետադարձ կապ: Այս տիպի հաղորդագրությունները պարունակում են տեղեկություն այն մասին, թե որքան լավ կամ վատ են աշխատակիցները կամ առանձին ստորաբաժանումները կատարել իրենց աշխատանքային հանձնարարությունները,
- գաղափարների առաջարկում: Այս տիպի հաղորդագրությունները կոչված են մոտիվացնել աշխատողներին կազմակերպության առաքելության, դրա մշակութային արժեքների ընդունման հարցում՝ կազմակերպելով զանազան միջոցառումներ և երեկոյթներ:

Ներքև իջնող հաղորդակցումներն իրենց մեջ պարունակում են առաջադրանքների կամ կոնկրետ գործողության կատարման համար հրամանների, կարգադրությունների ձևով անհրաժեշտ մեթոդների և օրենքների մասին տեղեկատվություն: Հաղորդակցման այս տիպն ավելի շատ կրում է կանոնակարգող և կարգավորող բնույթ: Ղեկավարների և աշխատողների միջև կապող օղակ հանդիսացող մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի խնդիրն է դառնում ղեկավարների կողմից արձակված որոշումների ճիշտ և ժամանակին փոխանցումը:

Վերև բարձրացող հաղորդակցումները ձևավորում են հաղորդագրություններ, որոնք փոխանցվում են կազմակերպության ստորին օղակներից դեպի վերին օղակներ: Դրանց հատուկ են հաղորդագրության հետևյալ հինգ տեսակները.

- խնդիրներ և հարցեր: Հաղորդագրություններ, որոնք ձևավորվում են աշխատողների խնդիրներից և հարցերից,
- բարելավման մասին առաջարկություններ: Քանի որ կազմակերպության ստորին օղակներն ավելի «մոտ» են կազմակերպության բուն գործունեությանը, ապա աշխատողների կողմից կարող են ներկայացվել զանազան ընթացակարգեր՝ աշխատանքի որակի կամ արդյունավետության բարձրացման վերաբերյալ,
- գործունեության արդյունքների մասին հաշվետվություններ: Ղեկավար օղակներին որոշակի պարբերաշրջանը մեկ հաշվետվություններ են ներկայացվում կազմակերպության աշխատողների կամ առանձին ստորաբաժանումների գործունեության վերաբերյալ,
- բողոքներ և վեճեր: Աշխատողների կողմից բողոքներն ու վեճերը պետք է հասնեն կառավարման բարձր օղակներին և լուծում ստանան նրանց կողմից,
- ֆինանսական և հաշվապահական տեղեկատվություն: Այսինքն, ծախսերի, եկամուտների, վաճառքի ծավալների, պարտքերի ու հաշիվների կամ տարատեսակ ֆինանսական ցուցանիշների մասին տվյալներ, որոնք կարող են հետաքրքրել ղեկավարությանը:

Այս տիպի հաղորդակցումներում աշխատողները ներկայացնում են իրենց առաջարկություններն ու բողոքները, կամ ներկայացնում տվյալներ, որոնք հասանելի չեն ղեկավար օղակներին: Այս հաղորդակցումները կարելի է համարել տեղեկատվական, քանի որ նպաստում են ներքև իջնող հաղորդակցումների, ինչպես նաև ամբողջ կազմակերպության գործունեության ավելի արդյունավետ կազմակերպմանը:

Հորիզոնական հաղորդակցումներն իրենցից ներկայացնում են աշխատակիցների միջև հաղորդագրություններ, որոնք կարող են լինել ինչպես մեկ ստորաբաժանման մեջ, այնպես էլ դրա սահմաններից դուրս: Դրանք, ինչպես ցանկացած հաղորդակցում, ստեղծված են տեղեկատվություն հաղորդելու համար, որն այս դեպքում կարող է հանդիսանալ աջակցման կամ գործունեության կոորդինացման խնդրանքներ [4]: Հորիզոնական հաղորդակցումները ներառում են հաղորդագրությունների հետևյալ տեսակները.

- ստորաբաժանման ներսում խնդիրների լուծում,
- ստորաբաժանումների աշխատանքի կոորդինացում: Հաղորդագրությունները, որով փոխանակվում են ստորաբաժանումներն՝ ուղղված են համատեղ նախագծերի կամ ընդհանուր խնդիրների լուծմանը,

- փոփոխությունների և բարելավումների նախաձեռնություններ, որոնցով խմբերը կամ ստորաբաժանումները փոխանակվում են՝ կազմակերպության բարելավման, զարգացման և փոփոխման նպատակներով:

Հորիզոնական հաղորդակցումները կիրառվում են ոչ բոլոր կազմակերպություններում, սակայն կարևոր են ժամանակակից պայմաններում գործունեություն ծավալելու համար: Աշխատողների միմյանց հետ ազատ շփումը, տեղեկատվության փոխանցումը տարբեր ստորաբաժանումներով նպաստում են կազմակերպության արդյունքների մասին աշխատողների կողմից տեղեկացվածության մակարդակի բարձրացմանը, ինչը թույլ կտա արագ արձագանքել արտաքին միջավայրի փոփոխություններին՝ առանց որևէ լուրջ տնտեսական վնասներ կրելու:

Սպառողական հաղորդակցումները ստեղծված են հաղորդակցման գործընթացի բարելավման նպատակով: Եթե դիտարկենք համայնքների աշխատանքը, որոնցում աշխատանքի արդյունավետությունը գնահատվում է բնակիչների կողմից դրանց կատարած աշխատանքի կամ մատուցված ծառայությունների որակով, ապա կարելի է գրակացնել, որ ինչքան շատ լինեն բնակիչ-համայնք կապող ուղիները, այնքան ավելի որակյալ ծառայություններ կմատուցի համայնքը: Հաղորդակցման հետևյալ տեսակի դեպքում առկա են հաղորդագրությունների ստորն նշված տեսակները.

- բողոքներ: Անկախ նրանից, կազմակերպությունն իր գործունեությունից հետապնդում է շահույթ, թե ոչ, պետք է առավել ուշադիր լինի իր սպառողների բողոքների նկատմամբ, որոնք թույլ կտան (հաղորդակից ուղիների զարգացվածության, տեղեկատվության տարողունակության պայմաններում) լուծել առկա խնդիրները: Դրանք կարող են կապված լինել ինչպես հաճախորդների, այնպես էլ մատակարարների, ինչու չէ՝ նաև շուկայի այլ մասնակիցների հետ,
- առաջարկներ: Հետևյալ հաղորդագրություններում սպառողների կողմից ներկայացվում են առաջարկություններ որևէ աշխատանքի բարելավման ուղղությամբ, կամ մատակարարներն ու կազմակերպության գործընկերները հանդես են գալիս որևէ նոր նախագծի առաջարկով:

Սպառողական հաղորդակցումները նախատեսված են արտաքին միջավայրի հետ շփումն ապահովելու համար. կազմակերպությունը դրանց միջոցով ստանում է սպառողական նախընտրությունների, մատակարարների պայմանների, շուկայում մրցակիցների դիրքերի մասին տեղեկատվություն և կարողանում ճիշտ կողմնորոշվել հետագա գործողություններում:

Որպեսզի հաղորդակցումն առավելագույնս կարողանա նպաստել կազմակերպական արդյունքներին հասնելուն՝ անհրաժեշտ է հաշվի առնել կազմակերպության կառուցվածքը և դրան համապատասխան հաղորդակցման միջոցներ կիրառել: Օրինակ, ուղղահայաց ֆունկցիոնալ կազմակերպություններում (կրում են կենտրոնացված բնույթ) գերակշռում են ներքև իջնող հաղորդակցումները, որոնք բերում են աշխատողների կողմից պատճառականության նվազման, ինչպես նաև վերև բարձրացող հաղորդակցումների ոչ ամբողջական կիրառման շնորհիվ աշխատանքային մթնոլորտի լարվածության, ինչպես նաև կազմակերպության նյութական և ֆինանսական ռեսուրսների կորստի պատճառ հանդիսանում: Ավելի ապակենտրոնացված բնույթ կրող կազմակերպություններում հաղորդակցումները կիրառվում են բոլոր ուղղություններով՝ կազմակերպության հետ առնչվող ցանկացած տեղեկատվություն հասանելի դարձնելու նպատակով:

Կազմակերպության արտաքին և ներքին միջավայրերն իրար կապում և կազմակերպության ներսում տեղեկատվության փոխանակման հիմնական գործիք է հանդիսանում հաղորդակցումը: Կազմակերպության ներսում այն նպաստում է աշխատողների միջև աշխատանքային բարիդրացիական հարաբերությունների, աշխատանքային «առողջ» մթնոլորտի ստեղծմանը, ինչպես նաև մենեջերներին, բաժնի կամ ստորաբաժանման ղեկավարներին համապատասխան տեղեկատվություն տրամադրելու և աշխատողներից կազմակերպական արդյունքների մասին տեղեկանալու հնարավորություն է ընձեռում: Կազմակերպության արտաքին միջավայրում հաղորդակցումները հանդես են գալիս կազմակերպության արտաքին քաղաքականության վարման գործիքի դերում: Ցանկացած դեպքում հաղորդակցումներն իրենց մեջ պարունակում են տեղեկատվություն:

Հաղորդակցումները կազմակերպության համար կարևորվում են նրանով, որ թույլ են տալիս լրացուցիչ տնտեսական օգուտներ ստանալ: Այսպիսով, պլանավորման, կազմակերպման, վերահսկման գործընթացներում նյութական և ֆինանսական ռեսուրսների ճիշտ բաշխումը հնարավոր է միայն աշխատողների, բաժինների միջև մեծածավալ և ընդգրկուն տեղեկատվության փոխանակման շնորհիվ, որն էլ ապահովում են հաղորդակցումները: Հակառակ դեպքում կազմակերպությունը շարժվում է միայն նախապես հստակեցված պլանով՝ առանց գաղափար կազմելու ներկայիս իրավիճակի մասին, ինչպես նաև արտաքին միջավայրում կատարվող փոփոխություններին չի կարողանաում ժամանակին և ճիշտ ձևով արձագանքել, ինչը հանգեցնում է ինչպես մրցունակության մակարդակի նվազեցման, շուկայում մասնաբաժնի կորստի, այնպես էլ կարող են կազմակերպության սնանկության պատճառ հանդիսանալ պապված՝ արտաքին միջավայրում կատարվող տնտեսական, քաղաքական և սոցիալ-մշակութային փոփոխությունների հետ:

Ժամանակակից պայմաններում կազմակերպությունների ղեկավար օղակների հիմնական ուշադրությունը կենտրոնացած է արդյունավետ գործունեություն ծավալելու ուղղությամբ: Արդյունավետ գործունեությունը ենթադրում է հաղորդակցումների կիրառման միջոցով կազմակերպական իրական և պլանավորված արդյունքների համապատասխանում, ծախսերի կրճատում՝ ֆինանսական, նյութական ռեսուրսներն ուղղելով նոր ապրանքների մշակմանը կամ արտադրական հզորություններով ապահովմանը:

Այսպիսով, դիտարկելով հաղորդակցումներն ու նրանց դերը կազմակերպության մեջ, կարելի է եզրակացնել, որ.

- հաղորդակցումները տեղեկատվության փոխանցման միջոցներ են, որոնք մարդկանց համար անհրաժեշտ պայման են կազմակերպությունում համատեղ աշխատանքի համար և հանդիսանում են կառավարչական գործունեության համարյա բոլոր տիպերի բաղկացուցիչ մասը,
- կազմակերպական հաղորդակցումների բարդ համակարգում կարելի է առանձնացնել հաղորդակցումների ներքև իջնող, վերև բարձրացող և հորիզոնական հաղորդակցումները, որոնցից յուրաքանչյուրն իր «ներդրումն» ունի արդյունավետ հաղորդակցումների կազմակերպման գործում,
- քանի որ հաղորդակցումները տեղեկատվություն են փոխանցում, անհրաժեշտ է վերացնել այդ գործընթացում հանդիպող արգելքները և նվազագույնի հասցնել «խափանումները»,
- «խափանումների» վերացման համար անհրաժեշտ է հաշվի առնել կազմակերպության կառուցվածքը, միջավայրը, որում նա ծավալում է իր գործունեությունը և մենեջերի կողմից համապատասխան փորձ ու գիտելիքներ կիրառելով՝ կազմակերպությունում ստեղծել արդյունավետ հաղորդակցումներ:

РОЛЬ КОММУНИКАЦИЙ В ОРГАНИЗАЦИИ

А.А.Бегларян, Ш.С. Мартиросян

Национальный университет архитектуры и строительства Армении

Ключевые слова: коммуникация, менеджмент, информация, мотивация, организация, организационный процесс

Выявлены роль и значение коммуникаций и субъектов – участников в процессах организаций. Исследованы коммуникационное движение и организационные коммуникацией со своей спецификой. В результате исследований построен график коммуникаций происходящих во внешней и внутренней средах и показана их взаимосвязь.

THE ROLE OF COMMUNICATIONS IN THE ORGANIZATION

A.A. Beglaryan, Sh.S. Martirosyan

National University of Architecture and Construction of Armenia

Keywords: communication, management, information, causality, organization, organizational process

The role and importance of communications and its participant-subjects in the functioning of the organization are examined. Communication flow and the peculiarities of organizational communications have been studied. During the course of investigations the graph of the communications within the external and internal environments of the organization is drawn and their interdependence is outlined.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Дафт Ричард Л.** Менеджмент.-СПБ:Питер 2004.-863с.
2. **Терентьева Ю. В.** Роль коммуникации в системе мотивации персонала // Вестник Томского гос. ун. - 2008,- №316.-с. 4.
3. **Мильнер Б. З.** Теория организации.-М: Инфра-М, 2000.- 85с.
4. **Басенко В.П., Жуков Б.М., Романов А.А.** Организационное поведение: современные аспекты трудовых отношений. Уч. пос.-М.: Акад. Естествозн.-2009. -с. 182-192.

Ներկայացվել է՝
 Ընդունվել է տպագրության՝

03.03.2015թ.
 16.04.2015թ.

ՀՏԴ 336.77.01

**ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Ռ.Ա. Քոսյան, Վ.Ս. Հանյան

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան

Առանցքային բառեր. *բանկեր, շինարարական կազմակերպություններ, վարկավորում*

Ներկայացվել է բանկային ծառայությունների որոշ տեսակների տեսական մեկնաբանումները:

Հետազոտվել է ոլորտում առկա խնդիրները, դուրս են բերվել Հայաստանի Հանրապետությունում բանկերի կողմից շինարարական կազմակերպություններից մատուցվող ծառայությունների հիմնախնդիրները և առաջարկվել են դրանց լուծման ուղիները:

2015 թ. հունվարի 15-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում գործել են 21 առևտրային բանկեր՝ իրենց 522 մասնաճյուղերով և 1 զարգացման բանկ (Համահայկական բանկ) [1]: Ամբողջ աշխարհում ներկայումս շատ ձեռնարկություններ օգտվում են բանկերի կողմից տրամադրվող վարկերից: Դրանից անմասն չեն նաև ՀՀ-ում գործող շինարարական ձեռնարկությունները:

Բանկերի կողմից շինարարական կազմակերպություններին տրամադրվում են հետևյալ վարկերի տեսակները՝ բիզնես վարկեր, լիզինգ, հիփոթեք: Ստորև ներկայացնենք վարկերի տվյալ տեսակները:

Հիփոթեքային վարկ- Տրամադրվում է տուն ձեռք բերելու, վերանորոգելու կամ հողամասը կառուցապատելու համար՝ գրավադրելով այդ տունը կամ հողամասի կառուցապատման դեպքում՝ հողամասի կառուցապատման իրավունքը:

Հաշվի առնելով ժամանակակից պայմաններում հիփոթեքային վարկի նշանակությունը մեր բնակչության համար, մանրամասն անդրադառնանք նրա էությանը: Հիփոթեքային վարկը այն վարկն է, որը տրվում է բնակչությանը անշարժ գույք գնելու նպատակով:

Բիզնես կամ առևտրային վարկ- տրամադրվում է անհատ ձեռնարկատերերին կամ իրավաբանական անձին տնտեսական գործունեության իրականացման, այդ թվում նաև արտադրության կազմակերպման, առևտրի, ծառայությունների մատուցման, բիզնեսի ընդլայնման և զարգացման նպատակով:

Բիզնես վարկն արտահայտում է վարկային հարաբերություններ, որոնք առաջանում են երկու տնտեսավարող սուբյեկտների միջև (ձեռնարկություններ, ֆիրմաներ, ԲԲԸ, ՍՊԸ և այլն): Այն վարկային հարաբերությունը երկու արտադրողների միջև վարկառուն որպես վարկ ստանում է սովորական ապրանք, որի արժեքի վճարումը հետաձգվում է: Վարկային հարաբերություններում մատակարարը հանդես է գալիս որպես վարկավորող, իսկ գնորդը՝ վարկառու սուբյեկտ:

Լիզինգը առաջացել է անգլ. to lease բայից, որը նշանակում է վերցնել և տալ ժամանակավոր օգտագործման: Լիզինգի էությունը ամենից շատ արտացոլող մեկնաբանությունը հետևյալն է. *լիզինգը իրենից ներկայացնում է ժամանակավորապես ազատ կամ ներգրավված ֆինանսական միջոցների ներդրում, որի դեպքում լիզինգատուն պարտավորվում է որպես սեփականություն ձեռք բերել պայմանագրով նախատեսված գույքը նշված արտադրողից և հատկացնել այդ գույքը լիզինգառուին որոշակի վճարի դիմաց և հետագայում գնման իրավունքով:*

«Լիզինգ» հասկացությունը հիմնված է սեփականության իրավունքի մասնատման վրա, որի էությունն է՝ տիրապետման, տնօրինման և օգտագործման իրավունքները: Լիզինգային գործարքի բովանդակությունը կազմում են դրա առարկան և կողմերը:

Լիզինգի առարկա կարող են հանդիսանալ ցանկացած ոչ սպառողական շարժական և անշարժ գույք, այդ թվում կազմակերպություններ և այլ համալիրներ, տրանսպորտային միջոցներ և այլ գույք, որը կարող է լիզինգատուի կողմից օգտագործվել իր ձեռնարկատիրական գործունեության իրականացման նպատակով:

Նշենք նաև, որ ՀՀ Կենտրոնական Բանկն իր վիճակագրական վերլուծությունների մեջ մեծ տեղ է տվել շինարարության ոլորտի ուսումնասիրությանը, որի արդյունքում դուրս են բերվել սույն ոլորտի կազմակերպությունների գործունեության ընդլայնմանը խոչընդոտող գործոնները, որը ներկայացված է աղ. 1-ում:

Աղյուսակ 1

Շինարարական ոլորտի կազմակերպությունների գործունեության ընդլայնմանը խոչընդոտող գործոնները [2]

	2012.4	2013.1	2013.2	2013.3	2013.4	2014.1	Բանկի փոփոխություն	%		
								Փոքր	Միջին	Խոշոր
Պահանջարկի նվազումը	1	1	1	1	1	1	0	63	72	75
Այլ կազմակերպությունների մրցակցությունը	2	2	2	2	2	2	0	28	12	9
Ֆինանսական խնդիրները	5	4	3	3	3	3	0	12	16	9
Հարկային օրենսդրությունը	3	6	5	4	4	4	0	12	4	8
Ոչ բարենպաստ տնտեսական միջավայրը	4	5	4	6	5	5	0	7	4	4
Փոխարժեք	6	3	7	7	9	6	3	5	0	2
Որակյալ աշխատուժի պակասը	7	7	6	5	6	7	-1	0	4	4
Աշխատուժի պակասը	9	9	8	8	8	8	0	2	0	2
Համապատասխան նյութերի/ սարքավորումների բացակայությունը	8	8	9	9	7	9	-2	0	0	0

Ելնելով ԿԲ-ի վիճակագրական տվյալներից, ֆինանսական խնդիրները շինարարական կազմակերպություններում զգալի դեր են կատարում, իսկ բանկերի կողմից տրամադրվող ֆինանսական միջոցները հանդիսանում են ձեռնարկության ներգրավված միջոցների գրեթե հիմնական աղբյուրը, որտեղից էլ առաջ է գալիս բանկերի կողմից մատուցվող ծառայությունների հիմնախնդիրների լուծման հրատապությունը:

ՀՀ բանկերի կողմից շինարարական ձեռնարկություններին մատուցվող ծառայությունների հետ կապված առանձնացնենք մի քանի հիմնախնդիրներ.

1. Վարկային բարձր տոկոսադրույքները
2. Գրավ/վարկ փոխհարաբերության ցածր տոկոսադրույքները
3. Անվստահություն նորաբաց կազմակերպությունների նկատմամբ
4. Երաշխավորների պարտադիր առկայություն
5. Տեղեկատվության մեծ քանակություն
6. Բանկի կողմից իրացվելիության խնդիրների անտարբերություն

1. *Վարկային բարձր տոկոսադրույքներ:* Բիզնես վարկերը ներկայումս ունեն հետևյալ միջին տոկոսադրույքը՝ մոտ 17%: Հիփոթեքային վարկերը տրամադրվում են միջինը 12%-ով: Լիզինգը տրամադրվում է միջինը 16% տոկոսադրույքով: Ելնելով ՀՀ վիճակագրական ծառայության շինարարական ոլորտի ցուցանիշներից, երևում է, որ 2008թ.-ից սկսած ՀՀ-ում շինարարության հիմնական ցուցանիշների ինդեքսը պարբերաբար նվազում է նախորդող հաշվետու տարվա նկատմամբ:

Աղյուսակ 2

Շինարարական հիմնական ցուցանիշների ինդեքս [3]

	2009 թ.	2010 թ.	2011 թ.	2012 թ.	2013 թ.
Շինարարության ծավալը նախորդ տարվա նկատմամբ, %	62,6	97,5	91,1	97,4	92,3

Ցուցանիշներից երևում է, որ ՀՀ-ում գործող շինարարական կազմակերպություններն ունեն միջինը շրջանառության 12%-ի նվազում, որից կարելի է եզրակացնել, որ բանկերի կողմից տրամադրվող վարկերի բարձր տոկոսադրույքները կբերեն ձեռնարկության համար ֆինանսական կորուստների: Այդ իսկ պատճառով անհրաժեշտություն է առաջանում վերանայել բանկերի կողմից տրամադրվող վարկերի տոկոսադրույքները, որը կհանգեցնի շինարարական ոլորտի ակտիվացմանը, նոր ձեռնարկությունների ստեղծմանը և այլն, հետևաբար նաև երկրի տնտեսական վիճակի բարելավմանը:

Տոկոսադրույքի վերանայման գործընթացի վերահսկման նպատակով առաջարկում ենք ստեղծել ընդհանուր հանձնաժողով «Կենտրոնական Բանկի», «Ֆինանսների նախարարության», «Քաղաքաշինության նախարարության», «Շինարարների միության» համապատասխան բարձր որակավորում ունեցող մասնագետներից, որպեսզի ապահովենք բոլոր կողմերի շահերի պաշտպանությանը:

2. *Գրավ/վարկ փոխհարաբերության ցածր տոկոսադրույք:* Հայաստանի Հանրապետությունում գրավ/վարկ փոխհարաբերությունը կազմում է միջինը 60%: Դա նշանակում է, որ անհրաժեշտ գումարի 40%-ը վարկառուն պետք է հայթայթի այլ ուղիներով, որը շատ դեպքերում անհնարին է, իսկ դա իր հերթին բերում է շինարարական ձեռնարկության պլանավորված ներգրավվող միջոցների չստացման, որի արդյունքում շինարարական ձեռնարկությունը չի կարողանում իրականացնել իր կողմից մշակված ծրագիրը, որը իր հերթին բերում է ընդհանուր տնտեսական աճի տեմպերի դանդաղեցմանը: Իհարկե մեկ ձեռնարկության տնտեսական վիճակի վատթարացումը չի կարող էական ազդեցություն ունենալ պետության ընդհանուր տնտեսական աճի վատթարացման վրա, սակայն քանի որ տվյալ խնդրի առաջ կարող են կանգնել շատ շինարարական ձեռնարկություններ, ինչպես նաև այլ կազմակերպություններ, որոնց հանրագումարն էլ իր վատ ազդեցությունը կունենա պետության տնտեսական վիճակի վրա: Սույն խնդրի լուծումը մենք տեսնում ենք գրավ/վարկ փոխհարաբերության տոկոսի բարձրացման մեջ:

3. *Անվստահություն նորաբաց կազմակերպությունների նկատմամբ:* Գոյություն ունի որոշակի կարծրատիպ, որ եթե ձեռնարկությունը նորաբաց է, ուրեմն նրա հետ կապված ռիսկերը շատ ավելի մեծ են, քան երկար տարիներ գոյություն ունեցող կազմակերպություններինը, որն էլ բերում է անվստահության տվյալ կազմակերպությունների նկատմամբ: Սակայն, քիչ չեն այն դեպքերը, երբ նոր կազմավորված ձեռնարկության անդամները հանդիսանում են տվյալ ոլորտում շատ բարձր որակավորում ունեցող անձինք, ում նկատմամբ անվստահություն ցուցաբերելը բանկերի կողմից ոչ մասնագիտական մոտեցում է, քանի որ այդ մասնագետները հետևյալ ոլորտում իրենց զգալի ներդրումն ունեն:

Այս խնդրի լուծման համար առաջարկում ենք, որպեսզի ձեռնարկության կողմից բանկին ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման ընթացքում հաշվի առնվեն նաև շինարարական ձեռնարկության կադրերի բարձր որակավորումը և նրանց անցած ճանապարհը:

4. *Երաշխավորների պարտադիր առկայություն:* Առօրյա կյանքում վարկ ստանալու նպատակով բանկերի մեծամասնությունը պահանջում են պարտադիր երաշխավորների առկայություն, որը խոչընդոտներ է առաջացնում վարկառուի մոտ, քանի որ, միշտ չէ, որ առկա են բանկերի պահանջներին համապատասխանող երաշխավորողներ: Ինչպես նաև մեծ քանակությամբ անձիք պատրաստ չեն երաշխավորել, խուսափելով հնարավոր հավելյալ պատասխանատվությունից: Որոշ դեպքերում, բանկերը հաշվի չեն առնում ձեռնարկության հեղինակությունը, իսկ այդ պահին, կազմակերպությունը կարող է չունենալ համապատասխան քանակությամբ երաշխավորներ, որն էլ իր հերթին պատճառ կհանդիսանա վարկի մերժման համար: Առաջարկում ենք երաշխավորների քանակը նվազեցնել, իսկ որոշ դեպքերում ամբողջովին բացառել:
5. *Տեղեկատվության մեծ քանակություն առկայություն:* ՀՀ-ում 2015թ. Հունվարի 15-ի դրությամբ գործել է 21 առևտրային բանկ և մեկ զարգացման բանկ, որոնք իրենց մարքեթինգային քաղաքականություն արդյունքում շուկային տրամադրել են բավականաչափ մեծ ծավալի տեղեկատվություն: Նման տեղեկատվություն վերամշակելու և ճիշտ որոշում կայացնելու համար ձեռնարկություններին անհրաժեշտ է հավելյալ ժամանակահատված և աշխատանքային ռեսուրսներ, որոնք կարող են հանգեցնել ձեռնարկության արտադրության ինչպես ինքնարժեքի բարձրացմանը, այնպես էլ որոշ ֆինանսական կորուստների, նախագծերի ձգձգման և այլն: Խնդրի լուծումը մենք տեսնում ենք բանկերի քանակի նվազեցմամբ, որը կարող է ներկայացվել մի քանի միավորումով, որի արդյունքում ահռելի տեղեկատվությունը շուկայում կսկսի նվազել, սակայն, բանկերը կշարունակեն իրենց բնականոն գործունեությունը:
6. *Բանկի կողմից իրացվելիության խնդիրների անտարբերություն:* Բանկերի կողմից տրամադրվող վարկերն ունեն տարբեր ժամկետներ: Վարկի տրամադրման ժամանակ կազմվում է վարկի մարման համապատասխան ժամանակացույց, որի խախտումը կարող է հանգեցնել շինարարական ձեռնարկության վարկային պատմության նկատմամբ անվստահության: Հաշվի առնելով շինարարության ոլորտում հնարավոր փոփոխությունները, որը կարող է կախված լինել պետության ընդհանուր տնտեսական վիճակից, բնակչության կենսամակարդակի վատացումից, համաշխարհային տնտեսական ճգնաժամներից և այլն, շինարարական ձեռնարկությունը կարող է կանգնել խնդիրների առաջ ինչպես կատարվող շինարարության ավարտի ժամկետների հետ կապված, այնպես էլ պատրաստի արտադրանքի նախատեսված ժամանակում վաճառքի հետ: Այս ամենը կարող է հանգեցնել նրան, որ ձեռնարկությունը չկարողանա ժամանակին կատարել իր վարկային պարտավորությունները: Այս խնդիրը բավականին հաճախ է առաջ գալիս ինչպես շինարարական, այնպես էլ այլ ձեռնարկությունների մոտ, այդ իսկ պատճառով առաջարկում ենք, որպեսզի բանկերը վերը նշված խնդիրների առաջացման դեպքում, որը կհիմնավորվի վարկառուի կողմից, հնարավորինս ճիշտ մոտեցում ցուցաբերեն և փորձեն հնարավորության դեպքում կատարել վարկի ժամկետների վերանայում կամ փոփոխություն:

Այս աշխատության մեջ ներկայացվեց հիմնախնդիրներից միայն մի քանիսը, սակայն, դրանք չեն սահմանափակվում նշվածներով: Մեր կողմից առաջարկվող հիմնախնդիրների լուծման ուղիները կարող են նպաստել Հայաստանի Հանրապետությունում գործող այն կազմակերպությունների տնտեսական իրավիճակի բարելավմանը, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն առնչվում են վերոնշյալ հիմնախնդիրների հետ:

Հարկ է նշել, որ բիզնեսի համար նախատեսված վարկերը կարող են համարվել ոչ միայն ձեռնարկատիրության աջակցման գործիք, այլ նաև հզոր զենք աղքատության դեմ պայքարելու և սոցիալական նշանակության նախագծերի առաջարժման համար [4]:

**ПРОБЛЕМЫ БАНКИХ УСЛУГ, ПРЕДОСТАВЛЯЕМЫХ СТРОИТЕЛЬНЫМ
ОРГАНИЗАЦИЯМ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

Р.А. Косян, В.С. Анян

Национальный университет архитектуры и строительства Армении

Ключевые слова: банк, строительная организация, кредитование

Представлены теоретические интерпретации некоторых видов банковских услуг. Рассмотрены вопросы данной сферы и выявлены проблемы, связанные с банковскими услугами, которые предназначены для строительных организаций Армении и предложены пути их решения.

**THE PROBLEM OF SERVICES OFFERED BY BANKS TO THE CONSTRUCTION
COMPANIES IN ARMENIA**

R.A. Kosyan, V.S. Nanyan

National University of Architecture and Construction of Armenia

Keywords: banks, construction organizations, crediting

Theoretical interpretations of some banking services are given. The problems of this sector are studied. An attempt is made to identify the problems associated with banking services designed for construction companies in Armenia and solution approaches are proposed for those problems.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ-ում ֆինանսական ծառայությունների պորտալ-www.rate.am
2. ՀՀ ԿԲ Գործարար միջավայրի ցուցանիշ (ԳՄՑ), 2014 թվականի առաջին եռամսյակ- <http://cba.am>
3. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Երևան, 2014, 606 էջ
4. Савинова Д.В. Модель кредитования малого бизнеса // Банковское дело. 2008. N11. С. 64-66

Ներկայացվել է՝

19.01.2015 թ.

Ընդունվել է տպագրության՝

24.03.2015 թ.

ՀՏԴ 330.131.7

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ռ.Ա. Քոսյան Գ.Կ. Կնյազյան

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան

Առանցքային բառեր. *շինարարություն, ձեռնարկատիրություն, ռիսկ, վերլուծություն, գնահատում*

Հայաստանի Հանրապետությունում գործող շինարարական կազմակերպությունները միշտ չէ, որ իրականացնում են ռիսկերի վերլուծության և գնահատման գործընթացները հիմնավորելով այն շուկայում առկա խնդիրներով: Աշխատանքում տրված է այդ հիմնախնդիրներից որոշների լուծման ուղիները, որոնք հիմնավորված են ներկայացված հետազոտություններով, ինչպես նաև միջազգային տեսական և պրակտիկ աշխատանքներով:

Ռիսկերի վերլուծությունը ռիսկային գործոնների բացահայտման և դրանց կարևորության գնահատման ընթացակարգն, ըստ էության, որոշակի անցանկալի իրադարձությունների իրականացման հավանականության վերլուծությունն է, որոնք բացասական ազդեցություն կարող են ունենալ շինարարական կազմակերպության ձեռնարկատիրական գործունեության վրա: Ռիսկերի վերլուծությունից հետո իրականացվում է ռիսկերի գնահատում: Ռիսկերի գնահատումը քանակական կամ որակական եղանակով ռիսկերի մեծության որոշումն է:

Որակական գնահատումը ենթադրում է ռիսկերի բացահայտում, նրանց յուրահատկությունների ուսումնասիրություն, համապատասխան ռիսկերի իրականացումից հետևանքների մատնանշում տնտեսական վնասների տեսքով, յուրաքանչյուր ռիսկի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրի բացահայտում:

Ռիսկերի քանակական գնահատման փուլում նախնական քայլը ռիսկերի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումն է: Այդ տեղեկատվությունը պետք է պարունակի ռիսկերի կանխատեսելիության գնահատման համար անհրաժեշտ տվյալները՝ կորուստների չափը և առաջացման հաճախականությունը (հավանականությունը), այսինքն վնասների բաշխումը, ինչպես նաև այլ բնութագրեր: Հետագա բոլոր որոշումների արդյունավետությունը կախված է նրանից, թե կհաջողվի արդյոք հավաքագրել բավարար որակով և քանակով տեղեկատվություն: Այդ իսկ պատճառով տարբեր աղբյուրների նկատմամբ վստահության որոշված մակարդակը այն կարևորագույն չափորոշիչն է, որին պետք է բավարարեն տեղեկատվության աղբյուրները:

Կարելի է առաջարկել մի շարք չափանիշներ ռիսկերի բացահայտման ու վերլուծության գործընթացը փուլերի բաժանելու համար: Առավել տարածված չափանիշ է հանդիսանում ռիսկերի ուսումնասիրության մակարդակը: Ըստ վերջինիս կարելի է առանձնացնել ներքոնշյալ փուլերը [1].

- ռիսկի ըմբռնում, այսինքն որակական վերլուծություն, ուղեկցված ռիսկերի կառուցվածքային առանձնահատկությունների վերլուծությամբ,
- անբարենպաստ պատահույթների առաջացման կոնկրետ պատճառների և նրանց բացասական ազդեցության ուսումնասիրություն,
- ռիսկերի համակարգային ուսումնասիրություն՝ այն ռիսկերի ամբողջական, համակարգային պատկերի տրամադրում, որոնց հետ առնչվում է շինարարական կազմակերպությունը:

Որոշ կազմակերպություններ ռիսկ մենեջմենթի ընթացքում վերլուծության վերը նշված ոչ բոլոր փուլերն են իրականացնում, բայց առավել ամբողջական և համակարգային տարբերակը ներառում է բոլոր երեք փուլերը:

Ռիսկերի գնահատման և վերլուծության անկյունաքարն է հանդիսանում տեղեկատվությունը, իսկ հետագայում, անորոշության և ռիսկայնության պայմաններում, հանդիսանում է ճիշտ որոշումների կայացման նախադրյալը: Անհրաժեշտ տեղեկատվության քանակն ու պարունակությունը կախված են կոնկրետ իրավիճակներից, սակայն հավաքագրվող տեղեկատվությանը բոլոր դեպքերում պետք է բավարարի մի շարք սկզբունքների.

- օգտակարություն,
- ռիսկերի կառավարման արդյունավետություն,
- տեղեկատվության մատչելիություն,
- տեղեկատվության արժանահավատություն:

Ներկայացված ռիսկերը մասամբ հակասական են, օրինակ, մատչելիության սկզբունքը կարող է հակադրվել օգտակարության կամ արժանահավատության սկզբունքի հետ: Այսպիսով տեղեկատվության աղբյուրները և նրանցից ստացվող տեղեկությունները պետք է նախապես մանրակրկիտ ուսումնասիրվեն ըստ ներկայացված սկզբունքների, իսկ վերլուծությունը պետք է լինի համակարգային: Վերլուծության նպատակն է հասնել տեղեկատվության հավաքագրման և մշակման մի իրավիճակի, որին բնորոշ են փոխզիջումներ վերը նշված սկզբունքների միջև:

Ներկայումս առավել տարածված են հանդիսանում ռիսկերի վերլուծության հետևյալ մեթոդները [2].

- վիճակագրական,
- փորձագիտական գնահատականների,
- վերլուծական,
- ֆինանսական կայունության և վճարունակության գնահատման,
- ծախքերի նպատակահարմարության գնահատման,
- ռիսկերի կուտակման հետևանքների գնահատման,
- զուգորդման:

Չնայած ռիսկերի վերլուծության և գնահատման մեթոդների բազմազանությանը, ՀՀ շինարտադրական գործունեության ռիսկերի գնահատման գործընթացում առկա են մի շարք հիմնախնդիրներ: Ստորև ներկայացրել ենք դրանցից որոշները.

1. փորձագետների սուբյեկտիվության բարձր մակարդակի առկայություն,
2. ռիսկերի վերլուծության և գնահատման ՀՀ տնտեսական համակարգին հարմարեցված մեթոդների բացակայություն,
3. տեղեկատվության արժանահավատ աղբյուրների սղություն,
4. շինարարական ոլորտում ռիսկերի դասակարգման համընդանուր մոդելի բացակայություն,
5. շինարտադրության ոլորտում նեղ մասնագիտացում ստացած ակտուարների սղություն:

Փորձագետների սուբյեկտիվության բարձր մակարդակի առկայություն. Ռիսկերի գնահատման փորձագիտական մեթոդը ենթադրում է երկու կամ ավելի փորձագետների առկայություն: Փորձագետների գնահատականը ենթարկվում է կայունության վերլուծության, ինչը իրականացվում է հստակ կանոններով: Նախ և առաջ առավելագույն թույլատրելի տարբերությունը երկու փորձագետների գնահատականներում չպետք է գերազանցի 50-ը: Համեմատումը իրականացվում է ըստ մոդուլի, ինչը հնարավորություն է ընձեռում վերացնել փորձագետների կողմից սահմանված, առանձին ռիսկերի վերաբերյալ, հավանականություններում անընդունելի հակադրությունները: Եթե փորձագետների քանակը մեծ է երեքից, ապա գնահատականները ենթարկվում են զույգ առ զույգ համեմատման:

Երկրորդ հերթին, ռիսկերի ընդհանուր հավաքածուի վերաբերյալ փորձագետների գնահատականների համամանության գնահատման համար ընտրվում են երկու փորձագետներ, որոնց կարծիքները

առավելագույնս համընկնում են: Համընկման հաշվարկման համար գնահատականները գումարվում և բաժանվում են գնահատականների թվին: Բաժանումից ստացված քանորդը չպետք է գերազանցի 25-ը: Փորձագետների կարծիքներում հակադրությունների հայտնաբերման դեպքում դրանք քննարկվում են փորձագետների ժողովում: Հակադրությունների բացակայության դեպքում բոլոր գնահատականներից ստանում են միջին թվաբանական, ինչն էլ օգտագործվում է հետագա հաշվարկներում:

Կատարված հետազոտությունների արդյունքում դուրս ենք բերել, որ ուսումնասիրված շինարարական կազմակերպությունների մեծ մասը չունեն պատշաճ ֆունկցիոնալությամբ կազմավորված ռիսկերի գնահատման և կառավարման բաժին, իսկ այն կազմակերպությունները որոնք ունեն միջտ չէ որ օգտվում են երկու կամ ավել փորձագետների ծառայություններց, ուստի ռիսկերի գնահատումը կրում է սուբյեկտիվ բնույթ և չի կարող ապահովել ռիսկերի կառավարման պատշաճ մակարդակ: Համաշխարհային փորձը փաստում է, որ ռիսկերի գնահատման պատշաճ կազմակերպմանն ուղղված ծախսերը մեծամասամբ արդարացված են:

Ռիսկերի վերլուծության և գնահատման ՀՀ տնտեսական համակարգին հարմարեցված մեթոդի բացակայության և տեղեկատվության արժանահավատ աղբյուրների աղության հիմնախնդիրների լուծման համար առաջարկում ենք ստեղծել շինարարական ռիսկերի գնահատմամբ և վերլուծությամբ զբաղվող գիտահետազոտական ինստիտուտ, որի կողմից կմշակվեն ՀՀ տնտեսական համակարգին ինտեգրված մեթոդներ: Գիտահետազոտական ինստիտուտը կմատուցի նաև խորհրդատվական ծառայություններ, որոնք նորաբաց կազմակերպությունների համար կլինեն անվճար, պայմանով, որ այդ կազմակերպությունները պարտավորվում են սահմանված ժամանակահատվածի համար տրամադրեն ամփոփ հաշվետվություն: Նախատեսվում է, որ ինստիտուտը թողարկելու է տեղեկագիր, որը լույս է տեսնելու տարին չորս անգամ: Տեղեկագիրը իր մեջ կպարունակի վերոնշյալ հաշվետվությունների ամփոփ վերլուծությունը, ինչպես նաև ռիսկի ոլորտի տարբեր մասնագետների հետազոտությունների արդյունքներ, գիտական աշխատություններ և այլն:

Շինարարական ոլորտում ռիսկերի դասակարգման համընդհանուր մոդելի բացակայություն. սույն հիմնախնդիրը լուծելու նպատակով մենք արդեն իսկ մշակել ենք շինարարական ռիսկերի դասակարգման մոդել, որը առաջարկում ենք կիրառել բոլոր շինարարական կազմակերպություններին՝ ռիսկերը դասակարգելիս [3]:

Շինարտադրության ոլորտում նեղ մասնագիտացում ստացած ակտուարների աղություն. Առաջարկում ենք ՃՀԱՀ-ի և գիտահետազոտական ինստիտուտի համատեղ ջանքերով պատրաստել համապատասխան կադրեր:

ПРОБЛЕМЫ ОЦЕНКИ И АНАЛИЗА РИСКОВ СТРОИТЕЛЬНЫХ ОРГАНИЗАЦИЙ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Р.А. Косян, Г.К. Князян

Национальный университет архитектуры и строительства Армении

Ключевые слова: *строительство, предпринимательство, риск, оценка, анализ*

Действующие в Республике Армения строительные организации не всегда реализуют процессы оценки и анализа рисков, основываясь на наличие рыночных проблем. Представлены пути решения этих проблем, основанных на исследованиях, а также на международных теоретических и практических работах.

PROBLEMS OF RISK ASSESSMENT AND ANALYSIS OF CONSTRUCTION ORGANIZATIONS IN THE REPUBLIC OF ARMENIA

R.A. Kosyan, G.K. Knyazyan

National University of Architecture and Construction of Armenia

Keywords: *construction, entrepreneurship, risk, analysis, assessment*

Construction companies operating in the Republic of Armenia do not always implement risk assessment and analysis processes justifying that by existing in the market problems. Solutions for some to these problems are given based on current research and both theoretical and practical international works.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Иванов А.А., Олейников С.Я., Бочаров С.А.** РИСК-МЕНЕДЖМЕНТ. Учебно-методический комплекс. – М.: Изд. центр ЕАОИ, 2008. – с. 42
2. **Тэпман Л.Н.** Риски в экономике: Под ред. проф. ВА Швандара. — М.: ЮНИТИ-ДАНА, 2002. — с. 263
3. **Քոսյան Ռ.Ա. Կնյազյան Գ.Կ.** Ներդրումաշինարարական նախագծերի պլանավորման և իրագործման փուլերում առաջացող ռիսկերի դասակարգման մոդել // ՃՇՀԱՀ Տեղեկագիր.-2015.-N1

Ներկայացվել է՝

21.01.2015 թ.

Ընդունվել է տպագրության՝

25.03.2015 թ.

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

Հ.Ա. Սամվելյան

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան

***Առանցքային բառեր.** անշարժ գույք, գույքի գնահատում, հողային ֆոնդ, եկամտային և ծախսային մոտեցումներ, համեմատական մոտեցում, պետական կարգավորումներ*

Ուսումնասիրվել է անշարժ գույքի գնահատման միջազգային փորձն ու մեթոդաբանությունը: Միաժամանակ հետազոտվել է Հայաստանում գույքի գնահատման իրավական կարգավորումները: Վերլուծության արդյունքում համադրվել են անշարժ գույքի գնահատման միջազգային ու առկա համակարգերը և մշակվել են առաջարկություններ՝ միտված Հայաստանի գնահատման համակարգի արդյունավետության բարձրացմանը:

Ուսումնասիրելով տարբեր երկրների անշարժ գույքի գնահատման գործընթացի առաձևահատկությունները և հաշվի առնելով գնահատման տեխնիկան՝ կարելի է գործնականում կատարելագործել Հայաստանի անշարժ գույքի գնահատման մոտեցումները:

Շուկայական գնի վրա հիմնված անշարժ գույքի գանգվածային գնահատման համակարգն աշխարհում սկսվել է կիրառվել դեռևս մինչև XX դ. սկիզբը, մինչ 1900 թ. Բելգիայում, Գերմանիայում, Շվեյցարիայում և Մեծ Բրիտանիայում, 1900–1950 թթ.՝ Դանիայում, Կիպրոսում, 1950–1990 թթ.՝ Ավստրիայում, Ֆինլանդիայում, Ֆրանսիայում, Շվեդիայում, 1990 թ.-ից հետո՝ Հայաստանում, Ադրբեջանում, Բելառուսում, Էստոնիայում, Վրաստանում, Լատվիայում, Լիտվայում, Հոլանդիայում, Ռուսաստանի Դաշնությունում, Սլովենիայում:

Գրեթե բոլոր երկրներում, բացառությամբ Ավստրիայի, Բելառուսի, Ռուսաստանի Դաշնության, Էստոնիայի և Վրաստանի, իրականացվում է հողերի համալիր գնահատում, հաշվի առնելով նաև հողի հետ անխզելի կապ ունեցող կապիտալ շինարարության օբյեկտների բարելավումը [1]:

Գնահատման գերմանական համակարգում անշարժ գույքի քառակուսի մետրի միջին արժեքը որոշվում է՝ կախված տեղակայման վայրից: Այդ գինն ինդեքսավորման եղանակով սահմանում է անկախ փորձագետների հանձնաժողովը, ուր ընդգրկված են հարակից ոլորտների փորձագետներ՝ գնահատողներ, գործակալներ, կադաստրային ինժեներներ և այլ մասնագետներ:

Հաձնաժողովի հիմնական խնդիրն է.

- ամենամյա տեղեկատվության հավաքագրում անշարժ գույքի գործարքների վերաբերյալ,
- ստացված տեղեկատվության ընդհանրացում,
- հաշվետվության ներկայացում պետական մարմիններին:

Որպես արդյունք, հաշվետվությունների հիման վրա կառավարության կողմից սահմանվում է անշարժ գույքի գնահատման «տիպային արժեք» [2]:

Հոլանդիայում անշարժ գույքի գնահատումն իրականացվում է համանման օբյեկտների առք ու վաճառքի գների համեմատությամբ: Ըստ օրենսդրության, նախատեսվում է տեղական համայնքային մարմինների կողմից իրականացնել անշարժ գույքի գնահատում՝ չորս տարին մեկ անգամ: Տեղական մարմինները վարձակալում են արտոնագրված գնահատողներ, որոնք Անշարժ գույքի գնահատման ազգային խորհրդի կողմից սահմանված ժամկետներում իրականացնում են անշարժ գույքի գանգվածային գնահատման

հետազոտություն: Արդյունքում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների լայնամասշտաբ կիրառմամբ ստեղծվում են տվյալների շտեմարաններ և թվային քարտեզներ:

Ավստրալիայում գործող անշարժ գույքի գանգվածային գնահատման եղանակն ամենատարածվածն է աշխարհում, որի հիմքում ընկած է, անընդհատ և շարունակական տեղեկատվության հավաքագրումը: Անշարժ գույքի շուկայում գործարքներն իրականացնում են բարձր որակավորում ունեցող գնահատող գործակալները, որոնք իրենց գործունեությունը համաձայնեցնում են նահանգի Գլխավոր գնահատողի հետ: Վերջինիս իրավասությունները ներառում են.

- գնահատման արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների վերահսկողություն և համապատասխանեցում գործող միջազգային չափանիշներին,
- անշարժ գույքի շուկայի վերլուծություն,
- գործող համակարգի արդյունավետության բարելավման գործողություններ:

Սեփականատերերը պարբերաբար հաշվետվությունների տեսքով ծանուցվում են անշարժ գույքի գանգվածային գնահատման արդյունքների մասին, որոնք կարող են հիմք ընդունվել սեփականատերի կողմից եռամսյա ժամանակահատվածում առարկություններ ներկայացնելիս: Առարկությունների շրջանակը բավականին սահմանափակ է և ընդգրկում է հետևյալ դրույթները.

- սեփականության ոչ ճիշտ բնութագրերը (գտնվելու վայրը, գործառական ու նպատակային նշանակությունը և այլն),
- պարզ մաթեմատիկական հաշվարկների սխալ կատարումը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնահատողների կողմից ներկայացվող հաշվետվությունները համակողմանի են և թափանցիկ, մեթոդի և ստացված արդյունքների հետ կապված բողոքարկումներ գրեթե չեն հանդիպում: Ավելին, քաղաքացիների հետ պարբերաբար տարվում են բացատրական աշխատանքներ գործող համակարգի վերաբերյալ, իսկ անշարժ գույքի գանգվածային գնահատման արդյունքները բաց ու մատչելի են և գտնվում են Անկախ հանձնաժողովի անընդհատ վերահսկողության տակ:

Իսպանիայում անշարժ գույքի գանգվածային գնահատման համակարգը համապարփակ գույքագրման համակարգի մի մասն է, որը ձևավորում է կադաստրային տեղեկատվական մեծ բազա քաղաքային և գյուղական համայնքների սեփականության մասին: Կադաստրային գնահատման հիմքում ընկած են շուկայական գնահատման ցուցանիշները, որոնք համաձայնեցվում են տվյալ շուկայի վերլուծությունների հետ: Կադաստրային և շուկայական գնահատման արժեքների համադրության վերլուծության ժամանակ հիմք է ընդունվում անշարժ գույքի շուկայի վերլուծությունն ամբողջ երկրի կտրվածքով: Ստացված կադաստրային արժեքը հիմք է գույքահարկի սահմանման համար:

Սկսած 1903 թ. Դանիայում յուրաքանչյուր չորս տարին մեկ անգամ կատարվում է սեփականության գնահատում, որի միջև ընկած ժամանակահատվածում անշարժ գույքի արժեքի որոշման հիմքում ընկած է նախորդ գնահատումը: Գույքի սեփականատերը համապատասխան վճարի դիմաց կարող է ցանկացած պահին կատարել վերագնահատում: 1981 թ. ներդրվեց ամենամյա ճշգրտման ավտոմատացված համակարգ, իսկ սկսած 1998 թ. անշարժ գույքի գանգվածային գնահատումը կատարվում է տարեկան կտրվածքով: Նախագահից և երկու անդամից բաղկացած գնահատման հանձնաժողովը նշանակվում է պետության կողմից և ենթարկվում է Կենտրոնական մաքսային և հարկային վարչությանը: Հանձնաժողովի անդամներին որևէ մասնագիտական պահանջ չի ներկայացվում, բավարար է նույնիսկ մեկ շաբաթյա վերապատրաստումը: Յուրաքանչյուր հանձնաժողով պատասխանատու է տվյալ տարածքում անշարժ գույքի գնահատման համար, այդպիսի տարածքները կոչվում են «գնահատման թաղամասեր»: Դանիան բաղկացած է 224 «գնահատման թաղամասեր»-ից, որոնք կարող են ներառել մեկից մինչև երեք համայնքային շրջաններ: Համայնքների կառավարման մարմինները կարող են աջակցել Գնահատման հանձնաժողովի աշխատանքներին՝ գնահատումն իրականացնելու ժամանակ տրամադրելով բազային տվյալներ ու ցուցանիշ-

ներ: Վերահսկման ընթացակարգն իրականացվում է 27 վերահսկիչ հանձնաժողովների կողմից, որոնց կազմում ընդգրկվում են Գնահատման հանձնաժողովների նախագահները:

Շվեդիայում անշարժ գույքի գնահատման գործընթացի հիմքում Անշարժ գույքի գնահատման օրենքն է: Օրենսդրությունն ընդգրկում է համընդհանուր գնահատման մեթոդներ, որոնցից ամենատարածվածը համեմատական մեթոդն է, սակայն կիրառվում են նաև եկամտաբերության և արտադրական ծախսերի վրա հիմնված մեթոդներ: Անշարժ գույքի կառավարման և գնահատման գործընթացների հիմքում պետական տվյալների բազան է, որտեղ ամփոփվում են բոլոր գործարքների տեղեկատվությունը, քարտեզները և այլն:

Լատվիայում գնահատման գործընթացն իրականացնում են Պետական հողերի և Պետական եկամուտների ծառայությունները: Պետական հողերի ծառայությունն իրականացնում է տվյալների հավաքագրում առք ու վաճառքի, վարձակալության և գույքի սեփականատերերի վերաբերյալ և կատարում է անշարժ գույքի գանգվածային կադաստրային գնահատում, որի հիմքում ընկած է անշարժ գույքի շուկայի վերլուծությունը: Հողերի և դրանց ամրակցված շինությունների գնահատումը կատարվում է առաձին-առանձին: Այդպիսի գնահատումն իրականացվում է հինգ տարում առնվազն մեկ անգամ:

Հունաստանում գործում է անշարժ գույքի գանգվածային գնահատման երեք համակարգ:

Առաջին գնահատման համակարգը վերաբերում է քաղաքային տարածքներին և ուժի մեջ է մտել 1985 թ., իսկ երկրորդ համակարգը՝ հասարակական նշանակության շինություններին և ուժի մեջ է մտել 1996 թ., երրորդ համակարգը վերաբերում է անշարժ գույքի գանգվածային գնահատմանը, այն կիրառվում է բոլոր այլ տեսակի սեփականության ձևերի՝ հողակտորների, շենքերի և շինությունների գնահատման գործընթացում:

Անշարժ գույքի գանգվածային գնահատման բելառուսական մեթոդը մշակվել է 1998 թ.: Մեթոդի հիմնական սկզբունքն այն է, որ կադաստրային արժեքի որոշումը պետք է հիմնված լինի շուկայական արժեքի վրա: Մեթոդի հիմքում ընկած է ըստ գնային սանդղակի հողերի գոտիավորման գաղափարը: Գոտիականության արժեքը սահմանվում է անկախ փորձագետների կամ գնահատողների կողմից և շատ հաճախ կիրառվում են գույքի գնահատման ավանդական մեթոդներ, ընտրությունը կախված է առկա տեղեկատվությունից և շուկայի վերլուծության մակարդակից: Փորձագիտական գնահատումը գերակա դիրք ունի նորմատիվային գնահատման նկատմամբ: Զանգվածային գնահատման դեպքում նորմատիվային մեթոդի կիրառումն իրականացվում է միայն այն ժամանակ, երբ շուկայի վերլուծությունը բացակայում է կամ տվյալները շատ սուղ են: Գնահատման տվյալները պահպանվում և հրապարակվում են հատուկ քարտերում և հաշվետվություններում, որոնք հաստատվում են տեղական իշխանությունների կողմից:

Սկսած 2003 թ. Չինաստանում գործում է գնահատման նոր համակարգ, որի նպատակն է ստեղծել ավտոմատացված գանգվածային գնահատման համակարգ CASA (computer automated strain analyser): 2005 թ. Չինաստանում առաջին անգամ ներկայացվեց անշարժ գույքի գանգվածային գնահատման զեկույցը, որը բաղկացած էր 12 զլուխներից և 40 դրոյթներից, որոնք վերաբերում էին տվյալների հավաքագրման, համակարգային ավտոմատացված մոտեցման և այլ չափանիշներին:

Իսլանդական օրենքով գույքի կադաստրային արժեքի հիմքում ընկած է շուկայական արժեքը, որը ճշգրտվում է տարեկան կտրվածքով և հիմք դառնում մեկ տարվա գույքի հարկման համար:

Ամփոփելով անշարժ գույքի գանգվածային գնահատման փորձը՝ կարելի է հանգել հետևյալին (աղ. 1):

1. Զանգվածային գնահատման հիմքում ընկած են երեք հիմնական մեթոդներ՝ համեմատական, եկամտաբերության և ըստ արտադրական ծախսերի, սակայն առավել տարածված է համեմատական մեթոդը, որի իրականացման ժամանակ անհրաժեշտ է ունենալ մեծ տեղեկատվական բազա: Տեղեկատվության բացակայության դեպքում կիրառելի է եկամտաբերության կամ ծախսային մեթոդը, որոնք կարելի է իրականացնել ըստ նորմատիվային փաստաթղթերի:

2. Անշարժ գույքի զանգվածային գնահատում իրականացվում է պետական մարմինների կողմից, ինչպիսիք են՝ հարկային (Ավստրիա, Դանիա, Գերմանիա) և հողերի կառավարման մարմինները (Բելգիա, Ֆրանսիա, Իտալիա, Իսպանիա, Շվեդիա) և այլ մարմիններ՝ գնահատման գործակալությունները, բյուրոները, հետազոտական հաստատությունները, ինչպես նաև մասնավոր հատվածը (Ֆինլանդիա):

3. Մի շարք երկրներում գնահատողները փորձագետներ են, ովքեր իրականացնում են գույքագրման, գույքահարկի հավաքման և այլ իրավական ակտեր: Մակայն կան երկրներ, որտեղ գնահատողները չունեն բազային մասնագիտական գիտելիքներ, այդ դեպքում նրանք անցնում են միայն վերապատրաստման կարճատև դասընթացներ:

4. Գնահատման կամ վերագնահատման գործընթացը կատարվում է պարբերաբար մեկ կամ ավելի տարվա կտրվածքով. մեծամասամբ կադաստրային արժեքի գնահատման հիմքում ընկած է տեղական իշխանության մարմինների կողմից կատարվող շուկայի վերլուծությունը:

5. Գրեթե ամենուրեք անշարժ գույքի զանգվածային գնահատումն իրականացվում է ժամանակակից ավտոմատացված տեխնոլոգիաների միջոցով (Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Դանիա, Հոլանդիա և Շվեդիա), որոնց օգտագործումը մեծացնում է ճշգրտման արդյունքները և զգալիորեն կրճատում գնահատման գործընթացի հետ կապված ծախսերը:

Աղյուսակ 1

Զանգվածային գնահատման առանձնահատկությունները

Երկիրը	Գնահատում իրականացնող մարմինները	Գնահատման ժամկետները	Գնահատման օբյեկտները
Գերմանիա	Հարկային մարմիններ	7 տարին մեկ անգամ	Հողատարածքները, կապիտալ շինարարության օբյեկտները
Իսպանիա	Գույքի և հողերի կառավարման պետական մարմիններ	7 տարին մեկ անգամ	
Լիտվիա	Գույքի և հողերի կառավարման պետական մարմիններ	5 տարին մեկ անգամ	
Հոլանդիա	Քաղաքապետարան	4 տարին մեկ անգամ	Կապիտալ շինությունը և հողը, որպես մեկ ամբողջականություն
Ավստրալիա	Հարկային մարմիններ	8 տարին մեկ անգամ	
Դանիա	Հարկային մարմիններ	4 տարին մեկ անգամ	
Շվեդիա	Գույքի և հողերի կառավարման պետական մարմիններ	5 տարին մեկ անգամ	
Բելառուսիա	Գույքի և Հողերի կառավարման պետական մարմիններ	5 տարին մեկ անգամ	
Չինաստան	Հարկային մարմիններ	-	

Նպատակահարմար է Հայաստանում կիրառել զանգվածային գնահատման համակարգը՝ հաշվի առնելով միջազգային դրական փորձը և այն հանգամանքը, որ մի շարք երկրներ ունեն գնահատման երկարատև ավանդական մոտեցումներ և գրեթե անվիճելի է դրանց կիրառման գործնական նշանակությունը (աղ. 2):

Գնահատման հայեցակարգերը մշակվել են տարբեր համակարգերի կողմից և ունեն իրենց բնորոշ տարբերությունները, սակայն բոլորի հիմքում էլ ընկած է այն սկզբունքը, որ գույքի գնահատման ժամանակ հաշվի է առնվում շուկայի վերլուծությունը և դրանում տիրող իրավիճակները:

Հիմնվելով միջազգային փորձի վրա կարելի է կատարել հետևյալ առաջարկությունները

Ներկա իրավիճակը ՀՀ-ում	Միջազգային փորձ	Ակնկալվող արդյունավետությունը
Անշարժ գույքի գնահատումն իրականացվում է պարբերաբար բազային տվյալների հավաքագրման շրջանակներում	Պարբերաբար դիտարկումների իրականացում գույքի գնահատման տվյալների բազայի, օտագործելով անսահմանափակ թվով տեղեկատվության աղբյուրներ	Անշարժ գույքի շուկայում կտրուկ փոփոխություններին տրվում է գործուն գնահատում
Տեղական մակարդակներում բացակայում են փորձագետ-գնահատողները	Գնահատողների և փորձագետների վերապատրաստում	Արդյունքների հուսալիության բարձրացում
Գնահատումն իրականացվում է երկմակարդակ համակարգով (հող և կապիտալ շինություն)	Իրականացվում է գնահատման համալիր մոտեցում (հողը և դրա հետ կապակցված կապիտալ շինությունը)	Ստացված արդյունքների հուսալիության բարձրացում և ծախսերի կրճատում
Զանգվածային գնահատման արդյունքները հրապարակվում են պարբերականներում և համապատասխան կայքերում	Իրականացվում է բաց և թափանցիկ գնահատում՝ տեղեկացնելով գույքի սեփականատերերին, թե որ փուլում են գտնվում գնահատման աշխատանքները և ծանուցում վերջնական արդյունքների մասին	Տեղի է ունենում գնահատման գործընթացի որակական բարելավում և փոխադարձ վստահություն

Ուսումնասիրելով միջազգային փորձը կարող ենք եզրակացնել, որ չնայած ընդհանուր հայեցակարգերի գույքի գնահատման գործընթացը տարբեր երկրներում իրականացվում է տարբեր մեխանիզմներով, սակայն գրեթե ամենուրեք արժևորվում է ավտոմատացված համակարգի կիրառումը և կայուն տեղեկատվական բազային առկայությունը:

МЕЖДУНАРОДНЫЙ ОПЫТ РАЗВИТИЯ СИСТЕМЫ ОЦЕНКИ НЕДВИЖИМОСТИ

Э.А. Самвелян

Национальный университет архитектуры и строительства Армении

Ключевые слова: *недвижимость, оценка недвижимости, земельный фонд, метод доходов и расходов, сравнительный метод, государственное урегулирование*

Рассмотрен международный опыт и методология оценки недвижимости. Одновременно, исследовано правовое регулирование недвижимости Армении. В результате исследований проведено сравнение международных и действующих систем оценки недвижимости и разработаны рекомендации по повышению эффективности оценочной системы Армении.

INTERNATIONAL EXPERIENCE OF REAL ESTATE VALUATION SYSTEM

H.A. Samvelyan

National University of Architecture and Construction of Armenia

Keywords: *real estate, real estate valuation, cadastral valuation, method of profits and expenditures, comparative approach, state regulations*

International methodology and practice of real estate valuation are studied. Simultaneously, legal regulations of Armenia's real estate valuation are examined. In the result of carried analysis international and existing systems of assessment are compared and proposals are drawn up aimed at increasing the effectiveness of Armenia's real property assessment system.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Almy R.** Real Property Assessment Systems /Lincoln institute of Land Policy.- Cambridge, 2004
2. **Пылаева А. В.** Развитие кадастровой оценки недвижимости: монография. – Н. Новгород: ННГАСУ, 2012. – 130 с.

Ներկայացվել է՝

18.02.2015 թ.

Շնորհանվել է տպագրության՝

13.04.2015 թ.

ՀՏԴ 330.322

**ՔԱՂԱՔԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՐԱՎՇՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ
ՄՐՅՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆ**

Ա. Ա. Սադոյան

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային հիմնադրամի

Առանցքային բառեր. ներդրումային գրավչություն, գնաճի մակարդակ, երկրի քաղաքական իրավիճակ, վարկունակություն, տնտեսության արդյունավետություն

Ներկայացված են ներդրումների տարածքային տեսակետը և տվյալ քաղաքում կամ տարածքում դրա սահմանափակումները: Ցույց է տված քաղաքի ներդրումային գրավչության գնահատականը, որը կարևոր հանգամանք է ցանկացած ներդրումային որոշման կայացման համար և այդ գնահատականի ճշտությունից են կախված ներդրումների հետևանքները ինչպես ներդրողի, այնպես էլ քաղաքի տնտեսության և ողջ երկրի համար: Որքան բարդ է իրավիճակը, այնքան ներդրողի փորձն ու կռահողականությունը պետք է հիմնված լինեն քաղաքի ներդրումային միջավայրի փորձագիտական գնահատականների արդյունքների վրա:

Ներդրումային որոշումները դասվում են առավել դժվար գործընթացների և ընտրությունների թվին: Դրանք հիմնված են բազմակի ընտրության հնարավորությունների, իսկ վերջիններս էլ՝ մի շարք գործոնների և բազմաթիվ գնահատականների վրա, որոնք հաճախ գործում են տարբեր ուղղություններով: Մասնավորապես, ուշագրավ է ներդրումների տարածքային տեսակետը և հատկապես, տվյալ քաղաքում կամ տարածքում դրանց սահմանափակումները: Քաղաքի ներդրումային գրավչության գնահատականը կարևոր հանգամանք է ցանկացած ներդրումային որոշման կայացման համար: Այդ գնահատականի ճշտությունից են կախված ներդրումների հետևանքները ինչպես ներդրողի, այնպես էլ քաղաքի տնտեսության և ողջ երկրի համար: Որքան բարդ է իրավիճակը, այնքան ներդրողի փորձն ու կռահողականությունը պետք է հիմնված լինեն քաղաքի ներդրումային միջավայրի փորձագիտական գնահատականների արդյունքների վրա:

Տնտեսագիտական գրականության մեջ ներկայացված են ներդրումային գրավչության զանազան սահմանումներ և դրա գնահատման տարբեր չափանիշներ: Աշխարհի երկրների ներդրումային գրավչության գնահատման պատմությունը (ներդրումային եղանակը) ունի ավելի քան 30 տարվա պատմություն: Դրա վերաբերյալ առաջին գնահատականներն օգտագործվել են արևմտյան փորձագետների կողմից դեռևս 1960-ական թվականներին: Այս ուղղությամբ առաջիններից եղել է Հարվարդի բիզնես դպրոցը, որի աշխատանքների հիմքում ընկած էր փորձագիտական սանդղակը և որը ներառում էր յուրաքանչյուր երկրի հետևյալ բնութագրերը [1].

- ✓ իրավաբանական միջավայրի պայմանները ներքին և արտաքին ներդրողների համար,
- ✓ կապիտալի արտահանման հնարավորությունները,
- ✓ ազգային արժույթի վիճակը,
- ✓ երկրում քաղաքական իրավիճակը,
- ✓ գնաճի մակարդակը,
- ✓ ազգային կապիտալն օգտագործելու հնարավորությունը:

Մակայն այս ցուցանիշները բավարար ամբողջությամբ չեն արտացոլում ողջ փաթեթի պայմանները, որոնք սովորաբար հաշվի են առնվում ներդրողների կողմից: Հետևաբար, երկրի ներդրումային գրավչության մեթոդաբանական համեմատական գնահատականներն ընթացան ընդլայնման ճանապարհով՝ փորձագետների կողմից գնահատվող քանակական ցուցանիշների ընդլայնմամբ: Առավել հաճախ օգտագործվում են հետևյալ պարամետրերը և ցուցանիշները [2].

- ✓ տնտեսական համակարգի տեսակը,
- ✓ մակրոտնտեսական ցուցանիշները (ՀԱԱ, ՀՆԱ, դրա կառուցվածքը և այլն),
- ✓ բնական ռեսուրսների առկայությունը,
- ✓ ենթակառուցվածքների վիճակը,
- ✓ արտաքին առևտրի զարգացման պայմանները,
- ✓ կառավարության ներգրավվածությունը (ազդեցությունը) տնտեսության մեջ:

Ներկայումս աշխարհի երկրների և քաղաքների ներդրումային գրավչության համալիր վարկանիշները հրատարակվում են այնպիսի առաջատար տնտեսական ամսագրերի և շաբաթաթերթերի կողմից, ինչպիսիք են՝ Euromoney-ին, Fortune-ը և The Economist-ը: Երկրների և քաղաքների ներդրումային գրավչության գնահատման առավել հայտնի և մեջբերվող ամսագրերից է Euromoney-ին, որի հիման վրա տարին երկու անգամ (մարտին և սեպտեմբերին) գնահատվում են աշխարհի երկրների ներդրումային ռիսկը և երկրների հուսալիությունը: Գնահատման նպատակով օգտագործվում են 9 խումբ ցուցանիշներ.

- ✓ տնտեսության արդյունավետությունը,
- ✓ քաղաքական ռիսկը,
- ✓ պետական պարտքի չափը,
- ✓ պարտքի սպասարկման կարողությունը,
- ✓ վարկունակությունը,
- ✓ բանկերի վարկավորման մատչելիությունը,
- ✓ կարճաժամկետ ֆինանսավորման առկայությունը,
- ✓ երկարաժամկետ վարկային փոխառության առկայությունը,
- ✓ ֆորսմաժորային իրավիճակների առաջացման հավանականությունը:

Այս ցուցանիշների արժեքները պարզում են մասնագետները կամ օգտագործում են հաշվարկավերլուծական եղանակ: Դրանք չափվում են 10 բալանոց սանդղակով և հետո կարևորվում է այս կամ այն ցուցանիշը և դրա ներդրած օգուտի չափը վերջնական գնահատականի վրա: Հարկ է նշել որ, նման վարկանիշի (գնահատականի) մեթոդաբանական մոտեցումները հեղինակների կողմից, կախված համաշխարհային շուկայի փոփոխություններից, անընդհատ վերանայվում են:

Երկրների տնտեսությունների դիրքավորումն իրականացվում է մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի մեծությամբ և իրական ՀՆԱ-ի տարեկան աճի տեմպով:

Տնտեսության արտադրողականությունը (արդյունավետությունը) գնահատվում է երեք մակարդակներով.

- 1) ընկերությունների մրցունակություն (դիտվում է 100 առաջատար ընկերությունների բաշխումն ըստ ոլորտների և քաղաքների),
- 2) արտահանում (երկրների արտահանման պորտֆելների ճյուղային կառուցվածքի համեմատական վերլուծություն երկու ուղղություններով՝ համաշխարհային արտահանման մասնաբաժինը և այդ մասնաբաժնի փոփոխությունը),
- 3) ուղղակի և օտարերկրյա ներդրումների ծավալը և որակը (երկրների դիրքավորումը կատարվում է ցուցանիշների միջոցով, կուտակված օտարերկրյա ուղղակի ներդրումները (ՕՈՒՆ) որպես ՀՆԱ-ի տոկոս և ներդրումների ներհոսքը դեպի հիմնական կապիտալ՝ տոկոսների միջոցով):

Որակը ներդրողների տեսանկյունից դիտվում է որպես.

- ✓ բնական պաշարների հասանելիություն,
- ✓ տեղական շուկաների հասանելիություն (ներդրումներ տեղական ոլորտներում, ներքին պահանջարկի բավարարում, առևտուր, ավտոմոբիլային տրանսպորտ և սննդի արդյունաբերություն),
- ✓ իրավասությունների հասանելիություն (ներդրումների ստեղծման հարթակ արտահանման մասով և (կամ) ինտեգրում, պայմանավորված նորարարական ներուժի ցածր որակի հետ):

Համաշխարհային տնտեսական ֆորումի մեթոդիկան ընդգրկում է այնպիսի տարբեր երկրների մրցունակությունը, ինչպիսիք են.

1. Տնտեսություն, պայմանավորված արտադրական գործոններով, ինչը բնութագրվում է հետևյալ հատկանիշներով.

- ✓ հաստատությունների որակ,
- ✓ ենթակառուցվածքներ,
- ✓ մակրոտնտեսական կայունություն,
- ✓ առողջապահություն և տարրական կրթություն:

2. Տնտեսություն, պայմանավորված արդյունավետությամբ, որը լրացվում է հետևյալ տարրերով.

- ✓ բարձրագույն կրթություն և վերապատրաստումներ,
- ✓ ապրանքային շուկայի և ծառայությունների արդյունավետություն,
- ✓ աշխատուժի շուկայի արդյունավետություն,
- ✓ տեխնոլոգիական մակարդակ,
- ✓ շուկայի չափ:

3. Տնտեսություն, հիմնված նորարարության վրա.

- ✓ ընկերությունների մրցունակություն,
- ✓ նորարարական ներուժ:

Քաղաքի մրցունակության գնահատումն իրականացվում է հետևյալ 4 հիմնական տարրերով.

1. Բազային առավելություններ (աշխարհագրական դիրքը, բնական ռեսուրսները, բնակչությունը և քաղաքաշինությունը):

2. Բիզնես-պորտֆել (առանձին կլաստերների մրցունակություն, տեղական հատվածների զարգացում):

3. Գործարար եղանակ (քաղաքի գործարար եղանակն ամբողջությամբ, կյանքի որակը, նորարարական ենթակառուցվածք):

4. Անձնակազմի արդյունավետություն և ռազմավարական քայլերի հետևողականություն (ինստիտուցիոնալ գործոնների և քաղաքականության հիմնական ուղղությունների բարելավում, քաղաքային արդյունավետ ռազմավարություն):

